

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



Ծրագրային համագործակցության կառուցակարգ  
Հայաստանի, Ադրբեջանի, Կրաստանի, Մոլդովայի Հանրապետության,  
Ուկրաինայի և Բելառուսի համար

**Programmatic Cooperation Framework for  
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus**

Funded  
by the European Union  
and the Council of Europe



Implemented  
by the Council of Europe

**Տարածաշրջանային  
ուսումնասիրություն**

**Կանանց քաղաքական  
ներկայացվածությունը արևելյան  
գործընկերության երկրներում**

Եվրոպայի խորհրդը՝  
քաղաքացիական հասարակության  
կազմակերպությունների համար

Եվրոպայի խորհուրդ



Սույն աշխատության մեջ տեղ գտած կարծիքները հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության պաշտոնական տեսակետը:

Բոլոր իրավունքները պահպանված են: Սույն հրատարակության ոչ մի հատված չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ տարածվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային միջոցներով (լազերային կրիչներ, համացանց և այլն) կամ նյութական կրիչի վրա, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով՝ առանց Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների տնօրինության կողմից նախապես տրված գրավոր համաձայնության (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Շապիկի ձևավորումը՝ Փաստաթղթերի և հրապարակումների հրատարակման դեպարտամենտ (SPDP),  
Շարվածքը՝ Եվրոպայի խորհրդի՝ insécable, Ստրասբուրգ

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն

F-67075 Strasbourg Cedex  
<http://book.coe.int>

Օրիգինալ անվերեն տարբերակ՝  
*Women's Political Representation in the Eastern Partnership Countries*  
ISBN 978-92-871-8297-5  
© Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2016թ.  
Տպագրված է Եվրոպայի խորհրդում

# Բովանդակություն

<b>ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ</b>	<b>5</b>
<b>ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ</b>	<b>7</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>11</b>
Ծրագրի հիմնավորումը	11
Ուսումնասիրության նպատակը	12
Ուսումնասիրության ոլորտները	12
Առանձին գործոնների վրա ուշադրությունը սևեռելու պատճառները	13
<b>ԳԼՈՒԽ 1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b>	<b>21</b>
Մեթոդաբանության ընտրություն	21
<b>ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ՝ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱԳ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ</b>	<b>25</b>
Նկատառումներ՝ ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից	27
Գենդերային քաղաքականություն և գործողությունների ծրագրեր	29
<b>ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</b>	<b>31</b>
Ա. Տնտեսական, սոցիալական և մշակութային գործոններ	31
Բ. Զաղաքական գործոններ	49
Գ. Իրավական շրջանակը	66
Դ. Աջակցման միջոցներ	91
<b>ԳԼՈՒԽ 4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ</b>	<b>101</b>
<b>ԳԼՈՒԽ 5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>107</b>
Առանձին երկրի համար	107
Դիտարկվող բոլոր երկրների համար	108
<b>ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՍ</b>	<b>113</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ. ԱԳ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԿՐՈՒՄ ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ</b>	<b>125</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԶԵՎԱՆՍՈՒՇ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ</b>	<b>143</b>



## Երախտիքի խոսք

**Ա**յս ուսումնասիրությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի միջև 2015-2017թթ. ծրագրային համագործակցության կառուցակարգի շրջանակներում: Այս համատեքստում Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Ընտրությունների աջակցության և մարդահամարի բաժինն (DGII) իրականացնում է «Արևելյան գործընկերության երկրներում ընտրական օրենսդրության և գործելակերպերի բարելավում» տարածաշրջանային ծրագիրը:

Չեկոսլոնի և եզրակացությունները կազմել է Գենդերային հավասարության հարցերի առաջխաղացման (GEM) խորհրդատվական կազմակերպության ղեկավար տկն. Դայեն Բունյանը, իսկ հարցաշարերից ստացված տվյալների վերլուծությունն իրականացրել է Մարքեթինգի և հետազոտությունների ինստիտուտի (IMAS) վիճակագրության հարցերով փորձագետ պրն. Դորու Պետրուտին:

Հարցաշարերի և հարցազրույցների հետ կապված աշխատանքն իրականացվել է վեց երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Սլովակիայի և Ուկրաինայի հետազոտողների կողմից: Բաց մրցութային ընթացակարգի հիման վրա Եվրոպայի խորհուրդը ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Promo-Lex հասարակական կազմակերպության (ՀԿ) հետ, որը համակարգել է վերոհիշյալ երկրների հետազոտողների աշխատանքը: Հաշվի առնելով, ի թիվս այլոց, հարցազրույցների միջոցով ստացված տեղեկատվության զգայուն բնույթը՝ որոշվել է ազգային հետազոտողների անունները չբացահայտել:

Ուսումնասիրության ընդհանուր համակարգումն իրականացրել է Եվրոպայի խորհրդի Ընտրությունների աջակցության և մարդահամարի բաժինը (DGII)՝ Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության հանձնաժողովի քարտուղարության և Եվրոպական միության Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի օժանդակությամբ:



## Ամփոփ ներկայացում

**Ջ**ետագոտության արդյունքում բացահայտվել են այն հիմնական փաստերը և խոչընդոտները, որոնք սահմանափակում են կանանց քաղաքական ներկայացվածությունը Արևելյան գործընկերության (ԱԳ) երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում:

Բոլոր թվարկված երկրներում կանանց կողմից քաղաքական պաշտոն զբաղեցնելու համար թեկնածություն առաջադրելու և օրենսդրական (ազգային) և վարչական (տեղական) մակարդակներում ընտրվելու հավանականությունն ավելի քիչ է, քան տղամարդկանց դեպքում:

Բոլոր այս երկրներում, բացառությամբ Բելառուսի, կանայք զբաղեցնում են 20%-ից պակաս խորհրդարանական մանդատներ: Բելառուսում խորհրդարանական մանդատների 30%-ը կանայք են զբաղեցնում:

Այս երկրներից յուրաքանչյուրի իրավական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև գոյություն ունեն կանանց և տղամարդկանց իրավահավասարության ընդհանուր իրավական հիմքեր, քաղաքական կյանքում իրականությունն այլ է: Նույնիսկ այն դեպքերում, երբ իրավիճակը շտկելու համար կոնկրետ միջոցներ են ձեռնարկվել, դրանք չեն հանգեցրել կանանց կողմից ընտրություններում որպես թեկնածու առաջադրվելու կամ ընտրվելու ցուցանիշների էական բարձրացմանը՝ չնայած առաջընթացի որոշ նշանների գոյությանը: Կիրարկման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը թուլացնում է գոյություն ունեցող սակավաթիվ առանձին միջոցների ազդեցությունը:

Այդուհանդերձ, ուսումնասիրված բոլոր երկրներում կանանց քաղաքական ներկայացվածության համար լուրջ խոչընդոտներ են հասարակության շրջանում տարածված կանանց դերի վերաբերյալ կարծրատիպային տեսակետները և պնդումները: Դրանք անդրադառնում են տնտեսության և աշխատանքի շուկայում կանանց դիրքի վրա՝ նվազեցնելով կանանց թեկնածության առաջադրման, որպես թեկնածու ընտրվելու և ընտրություններում հաղթանակ տանելու հավանականությունը:

Միավորված ազգերի կազմակերպության «Մարդկային զարգացման համաթվում» տեղ գտած և ԱԳ երկրների հետազոտողներից ստացված տվյալները ցույց են տալիս, որ կանանց ներգրավվածությունը աշխատաշուկայում ավելի ցածր մակարդակի վրա է, քան տղամարդկանց, իսկ համախառն ազգային արդյունքի նրանց բաժինն ավելի քիչ, քան տղամարդկանց բաժինը՝ սկսած Մոլդովայում տղամարդկանց կողմից ստացվող եկամտի 77%-ից մինչև Վրաստանում 50%-ը:

Բարձրագույն կրթություն ունենալու հավանականությունը կանանց շրջանում ավելի բարձր է, քան տղամարդկանց, սակայն կենտրոնական կառավարման մարմիններում նրանք տղամարդանց հետ հավասար քանակի բարձր պաշտոններ չեն զբաղեցնում: Նրանք հիմնականում զբաղեցնում են ավելի ցածր վարձատրվող պաշտոններ, քան տղամարդիկ, ինչպես օրինակ՝ հանրային հատվածում:

Դրա հետևանքով ֆինանսական միջոցների սղությունը նույնպես լուրջ խոչընդոտ է կանանց համար, ինչը որպես թեկնածու առաջադրվելու կամ արդյունավետ նախընտրական քարոզարշավ անցկացնելու նրանց հնարավորությունների համար լուրջ արգելք կամ սահմանափակում է:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ սրա հետ կապված քաղաքացիների վերաբերմունքը փոխվում է:

Չեկոյցի շրջանակներում ուսումնասիրվել է քաղաքական կուսակցությունների դերը կանանց քաղաքական ներկայացվածությանն աջակցելու առումով և պարզվել, որ, բացի քիչ թվով բացառություններից, կանայք կուսակցությունների քաղաքականություն մշակող մարմիններում առանցքային դեր չեն խաղում, կանանց խնդիրներն ու մտահոգություններն ընտրողներին ներկայացվող քաղաքական ծրագրերում արտացոլված չեն:

Այդուհանդերձ, Արևելյան գործընկերության որոշ երկրներում գոյություն ունեն բարեխիղճ գործելակերպերի, աջակցող միջոցների և ռազմավարությունների, ինչպես նաև առաջարկությունների օրինակներ, որոնք կարող են կանանց քաղաքական ներկայացվածությունը բարձրացնելու նպատակով որդեգրվել տարածաշրջանի մյուս երկրների կողմից:







# Ներածություն

## ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

**Գ**ենդերային հավասարությունը առանցքային դեր է խաղում մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության կայացման գործում: Չի կարող արդարացված լինել այն հանգամանքը, որ կանանց փորձառությունը, հմտություններն ու մտահոգությունները լիարժեքորեն չեն ներկայացվում կամ չեն արտացոլվում այն օրենքների ձևավորման և հասարակության կենսագործունեության վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ, որտեղ նրանք ապրում են:

Միջազգային չափանիշները, ինչպիսիք են՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (ԿՆԽՎԿ) և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), հստակորեն սահմանում են, որ կանայք և տղամարդիկ պետք է ունենան քաղաքական կյանքի բոլոր ոլորտներին և ժողովրդավարական գործընթացներին լիարժեք մասնակցության հավասար իրավունքներ և հնարավորություններ: Եվրոպայի խորհուրդն տարիներ շարունակ այն վերահաստատել է իր առանցքային կոնվենցիաներում և Նախարարների կոմիտեի, Խորհրդարանական վեհաժողովի ու Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից մշակված առաջարկություններում:

Չնայած կանանց և տղամարդկանց հավասար քաղաքական իրավունքների ֆորմալ ճանաչմանը՝ տղամարդիկ գերակշռում են այնպիսի ոլորտներում, ինչպիսին է՝ քաղաքական գործընթացում ներգրավվածությունը, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններում անդամակցությունն ու մասնակցությունը, որպես թեկնածու առաջադրվելը, ընտրվելն ու օրենսդրական կամ վարչական մարմիններում պաշտոն զբաղեցնելը: Քաղաքական և հանրային որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին Եվրոպայի խորհրդի թիվ Rec(2003)3 հանձնարարականում նշվում է, որ «տղամարդիկ են սահմանում քաղաքական առաջնայնությունները, և քաղաքական մշակույթը շարունակում է մնալ խիստ տղամարդակենտրոն»: Իրավիճակն անփոփոխ էր նաև 2016թ.:

Արևելյան գործընկերության երկրներում՝ Հայաստանում, Ադրբեյջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, ազգային, տարածքային և տեղական մակարդակներում կանանց Էականորեն ոչ բավարար ներկայացվածությունը որպես թեկնածուներ և ընտրված ներկայացուցիչներ դեռևս գոյություն ունեցող խնդիր է: Բացի այդ, կա նաև կանանց քաղաքականության մեջ ներգրավվածության իրավիճակի վերաբերյալ հավաստի, համեմատելի պաշտոնական և ոչ պաշտոնական տվյալների պակաս:

Եվրոպայի խորհրդի Գեներային հավասարության 2014-2017թթ. ռազմավարության առանցքային նպատակներից է Քաղաքական և հանրային որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին թիվ Rec(2003)3 հանձնարարականի ավելի լավ իրականացումը, իսկ Եվրոպական հանձնաժողովի Կանանց և տղամարդկանց միջև հավասարության մասին 2010-2015թթ. ռազմավարությունը Արևելյան գործընկերության երկրներին խրախուսում է նպաստել գեներային հավասարությանը քաղաքական երկխոսության և փորձի փոխանակման միջոցով:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Ուսումնասիրության նպատակը յուրաքանչյուր ԱԳ երկրում կանանց քաղաքական ներկայացվածության հետ կապված իրավիճակին որակական և քանակական գնահատական տալն է՝ նպատակ ունենալով առաջարկել փաստերի վրա հիմնված քաղաքականություն և հաջող գործելակերպի օրինակներ, որոնք կարող են կիրառվել բոլորի կողմից:

Այդ նպատակին հասնելու համար ուսումնասիրությունն անդրադառնում է քաղաքական գործընթացին կանանց մասնակցությանը խոչընդոտող և նպաստող գործոններին քաղաքական որոշումների կայացման երկու մակարդակների տեսանկյունից՝ օրենսդրական (ազգային խորհրդարաններ) և վարչական (տեղական և տարածքային ինքնակառավարման մարմիններ):

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ**

Կանանց կարողություններն՝ ուղղված իրենց մարդու իրավունքների լիակատար իրացմանը և քաղաքական կյանքում լիարժեք մասնակցություն ունենալուն, պայմանավորված են տվյալ երկրում տիրող հասարակական և իրավական իրավիճակով: Այն հասարակություններում, որտեղ կանայք, ընդհանուր առմամբ, անհավասար դիրքում են՝ իրավական, տնտեսական և մշակութային առումներով, ավելի հավանական է, որ նրանք ընտրական գործընթացին մասնակցելու և ընտրվելու հարցերում նույնպես լինեն անբարենպաստ վիճակում:

Ուսումնասիրությունը նպատակաուղղված է այն հիմնական գործոնների, խոչընդոտների կամ դրական միջամտությունների ուսումնասիրմանը, որոնք խանգարում կամ օժանդակում են քաղաքականությանը կանանց մասնակցության առաջընթացի տարբեր փուլերում՝ ուսումնասիրվող երկրների ազգային (օրենսդրական) կամ տեղական (տարածքային կառավարման) մակարդակում ընտրված ներկայացուցիչ դառնալու նպատակով:

Այդ հիմնական փուլերը ամփոփվել են<sup>1</sup> հետևյալ կերպ.

- ▶ ընտրվելու իրավունք ունեցող կանայք ձգտում են առաջադրվել ընտրովի պաշտոնի համար,
- ▶ պաշտոնի ձգտող կանայք ընտրվում են որպես թեկնածուներ,
- ▶ թեկնածուները հաջողության են հասնում՝ ստանալով ընտրողների քվեները:

Ուսումնասիրության առանցքում երեք հիմնական ոլորտներ են.

- ▶ 1. Կանանց դիրքը հասարակության մեջ, որը գնահատվում է այդ երկրների տնտեսական, սոցիալական և մշակութային իրավիճակի մասին տեղեկատվության հիման վրա,
- ▶ 2. Քաղաքական համատեքստը, մասնավորապես ինչպես են քաղաքական կուսակցությունները խոչընդոտում կամ աջակցում կանանց թեկնածությունը առաջադրելու և ընտրվելու հարցերում,
- ▶ 3. Կանանց իրավունքները սահմանող իրավական շրջանակը և ընտրակարգերը, և որքանով են դրանք իրականացվում:

## **ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎՐԱ ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԵՌԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

### **1. Տնտեսական, սոցիալական և մշակութային գործոններ**

Կանայք կրում են հասարակության շրջանում կանանց և տղամարդկանց տարբերակված դերերի մասին տարածված մշակութային համոզվույթյունների և կարծրատիպային տեսակետների ազդեցությունը: Հասարակական լայն ընկալման համաձայն հանրային ոլորտում տնտեսական և քաղաքական կյանքում, տղամարդիկ առաջնային պարտականություններ ունեն, իսկ կանանց առաջնային պարտականությունները կապված են մասնավոր կյանքի՝ տնային տնտեսության և ընտանիքի հետ:

Այս կարծրատիպերի միջոցով արդարացվում և պահպանվում են միջև պատմության ընթացքում հաստատված հարաբերությունները՝ տղամարդու գերիշխանությունը կնոջ նկատմամբ և սեռերի նկատմամբ անհավասար վերաբերմունքը, որը խոչընդոտում է կանանց առաջընթացին: Եվրոպային խորհրդի Գենդերային հավասարության 2014-2017թթ.<sup>2</sup> ռազմավարությունը որպես հիմնական առաջնահերթություն է սահմանել գենդերային կարծրատիպերի և

1. Քրուք Մ.Լ. և Նորրիս Պ. (2014թ.), «Զվոտաներից դուրս. ընտրովի պաշտոններում գենդերային հավասարությանը նպաստող ռազմավարություններ», Քաղաքագիտական ուսումնասիրություններ 62, 1, էջ 2-20:

նպաստելու առումով: Նրանք կարող են հանդես գալ որպես այդպիսի փոփոխության կատալիզատորներ՝ օրենսդրական մակարդակում, սեռական խտրականության դեմ պայքարը:

Կանայք, ովքեր ցանկություն ունեն իրենց թեկնածությունն առաջադրելու, պետք է կարողանան հաղթահարել իրենց ներսում գոյություն ունեցող կարծրատիպերը, դրանք հաղթահարելու կարիք ունեն նաև նրանք, ովքեր առաջադրում են այդ կանանց թեկնածությունները, ինչպես նաև՝ քվեարկող քաղաքացիները, որոնք կարող են կարծել, որ քաղաքականությունը կանանց տեղը չէ:

Ուսումնասիրվող երկրների կանանց վրա այս գործոնների ազդեցությունը հասկանալու համար ուսումնասիրվել է հետևյալ ոլորտներին վերաբերող տեղեկատվությունը:

- ▶ Թեև կանանց մասնակցությունն աշխատաշուկայում անմիջականորեն կապված չէ քաղաքական կյանքին նրանց մասնակցության հետ, այն հասարակության մեջ նրանց դերի ցուցիչ է: Ուսումնասիրությունը դիտարկել է նաև կանանց եկամտի չափերը՝ տղամարդկանց եկամտի հետ համեմատած:
- ▶ Կանանց կատարած աշխատանքի տեսակն ազդում է ընտրովի պաշտոնի համար պայքարելու իրենց կարողության սեփական ընկալման վրա, ինչպես նաև այն անձանց կողմից կանանց կարողությունների ընկալման վրա, ովքեր պատրաստվում են նրանց թեկնածությունն առաջադրել: Ուսումնասիրության նպատակով հավաքվել են տեղեկություններ համալսարանների շրջանավարտների, կենտրոնական կառավարման մարմիններում աշխատող կանանց և, հնարավորության սահմաններում, ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց մասին:
- ▶ «Կանանց և տղամարդկանց միջև ուժերի անհավասարության առավել ցայտուն դրսևորումը կանանց նկատմամբ բռնությունն է, որը թե՛ մարդու իրավունքների ոտնահարում է և թե՛ գենդերային հավասարության համար լուրջ խոչընդոտ»:<sup>3</sup> Կանանց դեմ բռնության գործադրման ձևը հստակ ցույց է տալիս, թե ինչպես են կանայք ընկալվում հասարակության կողմից: Ուսումնասիրության նպատակներով բռնության են առնվել բռնության դեպքերի տարածվածության մասին գոյություն ունեցող ապացույցները, պարզվել է՝ արդյո՞ք ընդունվել են կանանց նկատմամբ գործադրված բռնությունների համար պատիժ սահմանող օրենքներ և որքանով արդյունավետ է դրանց կիրարկումը:
- ▶ Կանանց իրավահավասարության հարցերով ակտիվ և արդյունավետորեն գործող ՀԿ-ների գոյությունը ևս կարող է կարևոր լինել իրավիճակը փոփոխելու կամ դրան ինչպես

2. Եվրոպայի խորհրդի 2014-2017թթ. գենդերային հավասարության ռազմավարություն:

3. Տե՛ս նույն տեղում:

Նաև խթանելով կանանց հավասարության կարևորության գիտակցումը և ընդունումը՝ փոփոխել քաղաքացիների ընկալումը: Նրանք նաև կարող են մշտադիտարկման գործուն մեխանիզմներ հաստատել՝ ապահովելով ընդունված քաղաքականության արդյունավետությունը՝ կիրառության և դրա արդյունքների մակարդակում: Դրանք կարող են նաև կարելի դարձնել պրակտիկ դեր խաղալ պոտենցիալ կինթեկնածուների ընտրության և նրանց վերապատրաստման, ինչպես նաև նրանց վերաբերյալ իրազեկում կազմակերպելու առումով:

- ▶ Հասարակության շրջանում եղած այլ ճնշումները, որոնք կարող են ազդել կանանց քաղաքական ներկայացվածության վրա, հետևյալն են՝ փոքրամասնություն հանդիսացող բնակչության առկայությունը, որոնց շրջանում գերակշռորեն տարածված կարծրատիպերի պատճառով կանանց դիրքը կարող է շատ ավելի բարդ լինել, քան մեծամասնություն համարվող բնակչության շրջանում, ինչպես նաև՝ երկրում արտագաղթի մակարդակը:
- ▶ Ուսումնասիրության նպատակով դիտարկվել է նաև լրատվամիջոցների դերը՝ կին թեկնածուների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերն ամրապնդելու կամ դրանց դեմ պայքարելու գործում:
- ▶ Ուսումնասիրության նպատակով հավաքվել են այն կանանց տեսակետները, ովքեր առաջադրվել են որպես թեկնածու և հաջողության են հասել:
- ▶ Ուսումնասիրության ժամանակ փորձագետները հավաքել են այն կանանց տեսակետները, ովքեր ընտրությունների ժամանակ առաջադրվել են որպես թեկնածու և հաղթանակ են տարել: Փորձ է արվել նաև ստանալ այն կանանց կարծիքները, որոնք ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում հաջողության չեն հասել՝ պարզելու համար, թե նրանց կարծիքով որքանով են կարծրատիպային տեսակետները դեր խաղացել իրենց թեկնածությունը առաջադրելու որոշման, նախընտրական քարոզարշավների և ընտրությունների ժամանակ:
- ▶ Ընտրողների տեսակետները և կին թեկնածուների ու քաղաքական ներկայացուցիչների նկատմամբ նրանց վերաբերմունքը փոփոխության կարևոր ցուցանիշներ են: Չնայած միջազգային փորձի վերաբերյալ գոյություն ունեցող ապացույցներին առ այն, որ ընտրողները հավասար կամ ավելի շատ քվեներ են տալիս կանանց, քան տղամարդկանց,<sup>4</sup> թեկնածուներին ընտրող անձինք հաճախ այն տեսակետի ազդեցության տակ են, որ կանայք չեն կարող մրցունակ թեկնածուներ լինել:

4. Մուրրեյ Ռ., Քրուք Մ. Լ. և Օպելլո Կ. Ա. Ռ. (2012թ.), «Ինչո՞ւ են սահմանվում գենդերային քվոտաները», «Քաղաքագիտական հետազոտություններ» պարբերական 65, 3, էջեր՝ 529-43:



## 2. Զաղաքական գործոններ

Զաղաքական կուսակցությունների դերը կանանց քաղաքական ներկայացվածության համար առանցքային նշանակություն ունի: Դրանք հանդես են գալիս որպես «յուրօրինակ դռնապաններ» այն կանանց համար, ովքեր ձգտում են առաջադրվել և ընտրվել որպես թեկնածուներ: Դրանք կարող են հավասարապես հանդես գալ որպես խոչընդոտող օղակներ կամ աջակիցներ՝ կանխելով կամ, ընդհակառակը, նպաստելով կանանց քաղաքական ներկայացվածության աճին: Թեկնածուների ընտրության հարցում նրանց ունեցած դերը ուսումնասիրվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի և Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (ԱԺԻ) կողմից 2011թ.-ին կատարված հետազոտության շրջանակում,<sup>5</sup> որտեղ ներկայացվում են քաղաքական կուսակցությունների տարբեր լավագույն գործելակերպերը, որոնք խրախուսում են կանանց՝ առաջադրելու իրենց թեկնածությունը և աջակցում նրանց ընտրապայքարում: Դրանց մի մասը ներառվել է «Աջակցման միջոցներ» բաժնում (տե՛ս Գլուխ 3-ը), որտեղ ներկայացված են նաև ուսումնասիրությունն իրականացրած հետազոտողների կողմից բացահայտված միջոցները:

Եվրոպական համայնքների և տարածաշրջանների խորհրդի (CEMR) կողմից ընդունված «Տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության խարտիայում»<sup>6</sup> նշվում է, որ նրանք կարող են օժանդակել կանանց քաղաքական ներկայացվածությանը մի շարք ձևերով.

- ▶ մշակելով և ընդունելով օրենսդրություն, օրինակ՝ քվոտաների մասին, որոնցով թեկնածուների ցուցակներում կանանց թվի ավելացմանն ուղղված միջոցներ են նախատեսվում,
- ▶ կամավոր կերպով նմանատիպ կարգավորումներ ընդունելով, առաջ մղելով կանանց՝ իրենց ներքին կառույցներում զբաղեցնելու որոշում կայացնող պաշտոններ,
- ▶ խթանելով կանանց իրավահավասարության գաղափարն իրենց քաղաքական ծրագրերում և, ընդհանուր առմամբ, հասարակության մեջ,
- ▶ իրենց կուսակցական ծրագրերում անդրադառնալով կանանց խնդիրներին ու մտահոգություններին,
- ▶ իրենց քարոզարշավներում և լրատվամիջոցների կողմից լուսաբանումների ժամանակ օգտագործելով կին քաղաքական գործիչների դրական կերպարներ,
- ▶ ապահովելով, որ իրենց կուսակցության անդամների վարքագիծը համապատասխանի կանանց նկատմամբ հարգանքի և նրանց իրավահավասարության արժեքներին:

5. Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր և Ազգային ժողովրդավարական ինստիտուտ (2011թ.), «Կանանց հզորացումը՝ ավելի հզոր կուսակցություններ ունենալու համար», ՄԱԶԾ, և ԱԺԻ, Ելու Յոթը:

6. Հասանելի է այստեղ՝ [www.ccre.org/docs/charte\\_egalite\\_en.pdf](http://www.ccre.org/docs/charte_egalite_en.pdf):

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը Զաղաքական կուսակցությունների և կանանց քաղաքական ներկայացվածության մասին իր բանաձևում սահմանել է մի շարք միջոցներ:<sup>7</sup> Դրանք ներառում են.

- ▶ կանանց ներգրավում կուսակցության ղեկավար պաշտոններում,
- ▶ կանանց կազմակերպությունները և դրանց ազդեցությունը,
- ▶ կանանց առնչվող խնդիրների առկայությունը ամենավերջին ընտրությունների հրովարտակում/ծրագրում,
- ▶ վերջին ընտրությունների ժամանակ կին թեկնածուների վերաբերյալ լրատվամիջոցների կողմից լուսաբանումները,
- ▶ կանանց ընտրապայքարին օժանդակող կամ նրանց մասնակցությունը խրախուսող ցանկացած այլ կարգավորումներ:

Կանանց համար նաև խոչընդոտ են հանդիսանում թեկնածու ընտրվելու և նախընտրական քարոզարշավ անցկացնելու ծախսերը: ԺԸԱՄԻ-ի՝ «Զաղաքական կուսակցությունների և նախընտրական քարոզարշավների ֆինանսավորման մասին ձեռնարկում»<sup>8</sup> նշված է, որ ամենամեծ դժվարությունը կրում են նոր կամ խորհրդարանում չներկայացված քաղաքական կուսակցություններին պատկանող կին թեկնածուները, որոնց համար պետական ֆինանսավորումը հաճախ հասանելի չէ: Այսպիսի դեպքերում կանայք հաճախ ստիպված են լինում սեփական միջոցներով ֆինանսավորել իրենց քարոզարշավը:

Կանանց հանրային հատվածում աշխատելու հավանականությունն ավելի մեծ է, քան տղամարդանց, օրինակ՝ նրանք աշխատում են կրթության և առողջապահության ոլորտներում, ինչպես նաև մասնավոր հատվածում՝ հյուրանոցային, սննդի և մանրածախ առևտրում: Զանի որ այս ոլորտներում վարձատրությունը բարձր չէ, կանայք, ամենայն հավանականությամբ, չեն ունենա խնայողություններ՝ իրենց քարոզարշավը ֆինանսավորելու նպատակով օգտագործելու համար: Բացի այդ, մշակութային նորմերի դիտարկումը ցույց է տալիս, որ պակաս հավանական է, որ կանայք իրենց անունից դրամահավաք սկսեն, և նույնիսկ եթե նրանք անում են դա, ապա այդ ֆինանսական միջոցները ավելի շուտ դիտարկվում են որպես ընտանեկան միջոցներ:

Բոլոր այս միջոցները և հետազոտողների կողմից տրամադրված տեղեկություններն այս ուսումնասիրության առանցքում են:

7. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Զաղաքական կուսակցությունները և կանանց քաղաքական ներկայացվածության մասին» թիվ 1898 բանաձև (2012թ.) Հասանելի է այստեղ՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?file-id=19134&lang=en>:

8. Ժողովրդավարությանը և ընտրություններին աջակցման միջազգային ինստիտուտ (2014թ.), տե՛ս Գլուխ 9. Բեյլինգտոն Ջ. և Կահան Մ. «Կանայք քաղաքականության մեջ. ֆինանսավորում գենդերային հավասարության նպատակով», ԺԸԱՄԻ, Ստոկհոլմ:

### 3. Իրավական շրջանակը

Իրավական շրջանակը նախատեսում է կանանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանման հիմքերը, այդ թվում՝ հավասար հիմունքներով ընտրություններին որպես թեկնածուներ և ընտրողներ մասնակցելու, ինչպես նաև ընտրովի պաշտոններ զբաղեցնելու իրավունքները: Այն ներառում է ուսումնասիրվող երկրների կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների, ինչպես նաև նրանց ազգային սահմանադրությունների և առանձին օրենսդրական ակտերի դիտարկումը, որոնք կարող են դրականորեն կամ բացասաբար ազդել կանանց վրա:

Քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության վրա ընտրակարգերի ազդեցության մասին Վենետիկի հանձնաժողովի 2009թ. զեկույցը<sup>9</sup> հաստատում է, որ ընտրակարգերը ազդում են կանանց ընտրվելու հնարավորությունների վրա: Կուսակցական ցուցակներով ընտրությունների անցկացման համակարգերը նպաստում են ավելի մեծ թվով կանանց ընտրվելուն, և այն համակարգերը, որոնցում նախատեսված է կանանց՝ ցուցակներում հաղթանակի ավելի մեծ հավանականություն ունեցող դիրքերում ներկայացնելու որոշակի պարտադիր քվոտա, բոլոր համակարգերից ամենահաջողվածն են: Ուսումնասիրության ընթացքում հետազոտվել են տեղական և համապետական ընտրությունների համար նախատեսված ընտրակարգերը՝ պարզելու համար ուսումնասիրվող երկրներում վերը նշված դիտարկման՝ փաստերով հաստատված լինելու հանգամանքը:

Մասնավորապես, ուսումնասիրության ընթացքում հետազոտվել են օրենսդրական քվոտաների կամ «կառուցողական գործողությունների» տարբեր համակարգերի հաջողությունը կամ ձախողումը, որոնք ընտրությունների անցկացման նպատակով ներդրվել են ուսումնասիրվող երկրներից յուրաքանչյուրում՝ թե՛ օրենսդիր և թե՛ տարածքային կառավարման մակարդակներում: Վերջինս նպատակ էր հետապնդում պարզելու, թե այդ միջոցները ինչ ազդեցություն են ունեցել կին քաղաքական ներկայացուցիչների թվի ավելացման վրա և ինչ դասեր կարելի է քաղել դրանց իրականացման արդյունքում:

Կանանց թեկնածության առաջադրման վրա կարող են ազդել այլ գործոններ, ինչպիսիք են, օրինակ, թեկնածուների եկամտի հայտարարագրման պահանջները և, մասնավորապես, ընտրական գրավի կամ գրանցման վճարի պահանջները, հատկապես եթե դրանք պետք է ապահովվեն անհատապես թեկնածուի կողմից, որը կիրառելի է անկախ, որևէ քաղաքական կուսակցություն չհարող թեկնածուների դեպքում:

9. Տե՛ս նույն տեղում, էջ 304:

10. Հասանելի է այստեղ՝

[www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2009\)029-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2009)029-e):

Հետազոտությունը<sup>11</sup> ցույց է տվել, որ ավելի մեծ է հավանականությունը, որ կանայք որպես թեկնածուներ կընտրվեն տեղական, շրջանային մակարդակում, որտեղ իշխանության, ազդեցության և ֆինանսական հնարավորություններն ավելի փոքր են, քան կենտրոնական իշխանության մակարդակում, և ուսումնասիրությունը դիտարկում է դրա ապացույցները:

Քաղաքական ինստիտուտների աշխատանքային պայմանները նույնպես կարող են կանանց համար խնդրահարույց լինել: Խորհրդարանների անդամների գլոբալ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կանայք խորհրդարանների ավանդական աշխատանքային գործելակերպերը համարում են խնդրահարույց,<sup>12</sup> իսկ Միջխորհրդարանական միության 2011թ.-ին իրականացված մեկ այլ ուսումնասիրության<sup>13</sup> մեջ «աշխատանք-անձնական կյանք հավասարակշռությանն» առնչվող խնդիրները նշվել են որպես խորհրդարանում աշխատելու մեծագույն մարտահրավերներ: Ուսումնասիրությունը դիտարկում է, թե որքանով են խորհրդարանները և տեղական ու տարածքային ինքնակառավարման մարմինները հասցեագրել այդ խնդիրները:

Չեկույցը նաև անդրադառնում է այն աջակցման միջոցներին, որոնք օգնել են կանանց իրենց տեսնելու հավանական թեկնածուների դերում, անցկացնելու հաջող ընտրարշավներ և իրենց պարտականությունները որպես ընտրված ներկայացուցիչներ կատարելու հարցերում: Չեկույցում բերված օրինակները ուսումնասիրվող երկրներից են, և ըստ անհրաժեշտության, օրինակներ են ներառվել նաև այլ տարածաշրջաններից:

---

11. Եվրոպայի խորհուրդ (2009թ.), «Հավասար պայմանների ժողովրդավարություն. իրականությունից հեռու երևույթ. քաղաքական և հանրային որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին Եվրոպայի խորհրդի թիվ Rec (2003) 3 հանձնարարականի մշտադիտարկման առաջին և երկրորդ փուլերի արդյունքների համեմատական վերլուծություն», Ստրասբուրգ:

12. Բեյլինգտոն Ջ. (2008թ.), «Հավասարություն քաղաքականության մեջ», Միջխորհրդարանական միություն, Ժնև:

13. Պալմիերի Ս. (2011թ.), «Գեներային գործունը հաշվի առնող խորհրդարաններ», Միջխորհրդարանական միություն, Ժնև:

## **2. Հարցազրույցներ**

Ծրագրի երկրորդ հայեցակետը ուղղված էր այն կանանց փորձառության ուսումնասիրմանը, ովքեր առաջադրվել էին որպես թեկնածուներ և կամ հաջողություն էին ունեցել կամ ձախողվել համապետական, տարածքային և տեղական մակարդակների ընտրություններում: Ուսումնասիրության մեջ ներառվել է նաև քաղաքական կուսակցության համակարգում բարձր դիրք զբաղեցնող կնոջ փորձառությունը: Դրա նպատակն էր ծանոթանալ կանանց փորձառության առանձին օրինակներին՝ դրանց հիման վրա ստուգելու կանանց խոչընդոտող գործոնների վերաբերյալ մեր ենթադրությունները և հրապարակել գեկույցի եզրակացություններն ու առաջարկությունները: Այդ հարցերի համար կազմվել է ձևանմուշ (տե՛ս ստորև Հավելված 2-ը):

Ժամանակի սղության և հետազոտողների սահմանափակ հնարավորությունների պատճառով՝ հարցազրույցների թիվը նույնպես սահմանափակ էր, սակայն հնարավորության սահմաններում ուսումնասիրության նպատակով ներգրավել ենք ամենատարբեր ոլորտներ ներկայացնող նորընտիր պաշտոնյաների, փորձառու քաղաքական գործիչների, իշխող կուսակցական խմբերի կին անդամների և ընդդիմության ներկայացուցիչների ու չընտրված թեկնածուների:

## **3. Աշխատանքի հետազոտական մեթոդը**

Ընտրված երկրների հետազոտողները հնարավորության սահմաններում բացահայտել են հարցաշարերը լրացնելու նպատակով ստացված տեղեկությունների աղբյուրները, ինչպես նաև մեկնաբանություններ են թողել այն մասին, թե իրենց կարծիքով՝ որոնք են կանանց մասնակցության հիմնական խոչընդոտները:

Տրամադրված ձևանմուշի շրջանակներում հարցազրույց անցկացնելու համար կոնկրետ անձի ընտրությունը վերապահվել է հետազոտողներին, որը հաճախ եղել է սահմանափակված ժամանակով և հարցազրույցին մասնակցելու պատրաստակամություն հայտնած անձանցով: Հարցազրույցների մեծ մասը հետազոտողներն անցկացրել են անհատապես հանդիպելու միջոցով, սակայն դրանց մի մասն անցկացվել է հեռախոսով: Ոչ բոլոր հարցերն են հարցազրույցների ժամանակ համարվել տվյալ իրավիճակին համապատասխանող: Ընդհանուր առմամբ, անցկացվել է 53 հարցազրույց, որոնք ուսումնասիրության համար տրամադրվել է արժեքավոր տեղեկություններ:

## **4. Ուսումնասիրության սահմանափակումները և խոչընդոտները**

Տեղեկատվության վերլուծության ընթացքում պարզվեց, որ որոշ

# Գլուխ 1.

## Մեթոդաբանությունը

### ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

**Ո**ւսումնասիրության մեթոդաբանության ընտրության հարցը համաձայնեցվել է Եվրոպայի խորհրդի Ընտրությունների աջակցության և մարդասահմարի բաժնի (ԳՏ II) կողմից 2015թ. հուլիսի 25-26-ը Թբիլիսիում անցկացված երկօրյա աշխատաժողովի ընթացքում, որին մասնակցել են անկախ հետազոտողներ յուրաքանչյուր ուսումնասիրվող երկրից, գենդերային հարցերով առաջատար փորձագետ տյն. Դայան Բունյանը և վիճակագրության հարցերով փորձագետ պրն. Դորու Պետրուտին: Աշխատաժողովին մասնակցել և իրենց փորձագիտական խորհրդատվությունն են ներկայացրել նաև Բարսելոնայի «Universitat Pompeu Fabra» համալսարանը ներկայացնող Եվրոպայի խորհրդի փորձագետ տյն. Տանիա Վերգեն, և Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի վիճակագրության հարցերով մասնագետ դր. Աննա Ռիտա Մանկան:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են կանանց քաղաքական ներկայացվածության վրա ազդող առանցքային խնդիրները՝ տնտեսական, մշակութային և սոցիալական գործոնները, քաղաքական գործոնները և իրավական համակարգը, դրանց շուրջ ձեռք է բերվել համաձայնություն:

Մեթոդաբանության ընտրության նպատակով հաշվի են առնվել հետազոտողների կարծիքներն այն տեղեկատվության վերաբերյալ, որը նրանք կարող էին ողջամտորեն սահմանված ժամկետներում պաշտոնական աղբյուրներից ձեռք բերել:

### 1. Հարցաթերթիկի ձևանմուշը

Կազմվել է հարցաթերթիկ (տե՛ս Հավելված 1-ը)՝ հետազոտողներին ուսումնասիրության անցկացման համար որոշակի կառուցվածք առաջարկելու նպատակով, ինչպես նաև ապահովելու, որ հավաքված տվյալներն ու տեղեկությունները տարբեր երկրների միջև համեմատություններ անցկացնելու համար հնարավորինս շատ հնարավորություն ընձեռեն:

պնդումներ փաստական տվյալներով չեն հաստատվում: Որոշ դեպքերում թվերը կամ ստացված տեղեկությունները չէին հիմնավորում ազգային խորհրդատուների կարծիքները և դիտարկումները:

Տեղեկատվության վերլուծության բարդությունը պայմանավորված էր նաև հարցաշարերում տրամադրված ոչ ստույգ և հաճախ թերի տեղեկություններով: Բացի այդ կային համանման տվյալների տարբեր մեկնաբանություններ. որոշ դեպքերում խորհրդատուները նույն հարցին տվել էին տարբեր պատասխաններ՝ առաջադրանքի պահանջը սխալ հասկանալու պատճառով: Այդ խնդիրների մի մասը լուծվեց պարզաբանումների միջոցով:

Տվյալների կամ որոշ ցուցանիշների համար խորհրդատուներն օգտագործել էին տեղեկատվական տարբեր աղբյուրներ և հաշվարկի ձևեր: Լուրջ դժվարություններ առաջացան նաև գեոդերային տեսակետից տարանջատված տվյալներ ձեռք բերելու հարցում: Դրա հետևանքով դժվարացավ ուսումնասիրվող երկրների միջև համեմատություն անցկացնելու գործընթացը, մասնավորապես՝ տնտեսական և ընտրական մասով: Այս խնդիրը հաղթահարելու նպատակով, ուսումնասիրության համար օգտագործվեցին միջազգային տվյալներ այն դեպքերում, երբ դրանք առկա էին, ինչպես օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդկային զարգացման համաթիվը:

Ուսումնասիրվող երկրների հետազոտողները կարողացան, որոշակի սահմանափակումներով, ընտրել այն անձանց, ում հետ պետք է հարցազրույց անցկացնեին: Սակայն այդ սուբյեկտիվությունը հավասարակշռվում է երկրի մասին նրանց ունեցած տեղեկություններով, որոնք նրանք ներդրել են ուսումնասիրության մեջ: Նրանց տեսակետներն ու մեկնաբանությունները, ինչպես նաև ներկայացված տվյալները շատ օգտակար էին զեկույցի և դրա եզրակացությունների ու առաջարկությունների մշակման համար:

Յուրաքանչյուր երկրում հարցազրույցների թիվը սահմանափակվում էր 10-ով: Որոշ դեպքերում հարցազրույցին մասնակցելու պատրաստակամություն հայտնած կանայք չգտնվեցին, օրինակ՝ Բելառուսում իշխող կուսակցության կողմից խորհրդարան ընտրված կանանցից ոչ մեկը չցանկացավ հարցազրույց տալ, իսկ որոշ դեպքերում չկային համայնքի ընտրված կին ղեկավարներ: Եվրոպայի խորհուրդը յուրաքանչյուր հետազոտողին տրամադրել էր նամակ՝ հարցազրույցին մասնակցող անձանց ցույց տալու համար՝ նպատակ ունենալով հեշտացնել հարցազրույցների անցկացումը: Նամակում նշված էր, որ հարցազրույցների ժամանակ լրացված բոլոր թերթիկների անանունությունը կպահպանվի:

Յուրաքանչյուր հետազոտողի կողմից բացահայտված առանձին խնդիրները հետևյալն են:

Հայաստանում չկան ընտրված կին համայնքի ղեկավարներ, եղել է միայն քաղաքապետերի երկու կին թեկնածու, որոնցից ոչ մեկը չցանկացավ հարցազրույցին մասնակցել: Ավելին, կա մեծամասնական համակարգով ընտրված միայն երկու կին պատգամավոր, որոնցից ոչ մեկը հարցազրույց տալու պատրաստակամություն չհայտնեց:



Ադրբեջանում կանանց քաղաքական մասնակցության մասին տվյալներ չկան: Տվյալների մեծ մասը տարանջատված չէ ըստ սեռի, իսկ պաշտոնական տվյալները ոչ միշտ են հուսալի: Հարցազրույցներ վարելու առումով դժվարություններ առաջացան, քանի որ 2015թ. նոյեմբերի 1-ին խորհրդարանական ընտրություններ էին:

Բելառուսի փորձագետը հետազոտությունն իրականացնելու հարցում դժվարությունների հանդիպեց մի շարք պատճառներով, մասնավորապես՝

- ▶ համայնքի ղեկավարները չեն ընտրվում, այլ նշանակվում են նախագահի կողմից,
- ▶ Բելառուսի խորհրդարանում ընդդիմություն չկա,
- ▶ ներկայումս պաշտոնավարող խորհրդարանի անդամներին ու տեղական ավագանու ներկայացուցիչներին հանդիպելու դժվարություններ առաջացան՝ մասամբ պայմանավորված նրանով, որ հարցազրույցների ժամանակացույցը համընկավ նախագահական ընտրությունների հետ (2015թ. հոկտեմբերի 11),  
և
- ▶ որոշ կուսակցությունների ներկայացուցիչներ միայն անվանապես էին մասնակցել քարոզարշավներին:

Վրաստանում գենդերային վիճակագրության տեղեկությունների որոշ մասը հասանելի չէր, ինչպես նաև բարդ էր քաղաքական գործիչների հետ հանդիպում կազմակերպելը և հարցազրույցներ անցկացնելը:

Մոլդովայում թեկնածուների թվի պատճառով տեղական ընտրությունների մասին ամբողջ տեղեկատվությունը չէ, որ հասանելի էր: Տարիքի և մասնագիտության մասին տեղեկատվությունը հասանելի չէր:

Ուկրաինայում փորձագետը դժվարությունների հանդիպեց այն պատճառով, որ գենդերային տարանջատման սկզբունքով տվյալները ոչ միշտ էր հնարավոր հավաքել:



## Գլուխ 2.

# Քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության ներկայիս իրավիճակը ԱԳ տարածաշրջանում

**Մ**իավորված ազգերի կազմակերպությունը հրապարակում է մարդկային ներուժի զարգացման ամենամյա զեկույց՝ Մարդկային զարգացման համաթիվը, որը մարդու զարգացման այնպիսի հիմնական ոլորտներում ձեռքբերումների ամփոփումն է, ինչպիսիք են՝ երկար և առողջ կյանքը, կրթության հասանելիությունը և պատշաճ կենսամակարդակը: Գնահատվող 188 երկրները դասակարգվում են ըստ մարդկային զարգացման շատ բարձր, բարձր, միջին և ցածր վարկանիշ ունեցողների: Գնահատված 188 երկրների լավագույն եռյակում են Նորվեգիան, Ավստրալիան և Շվեյցարիան, իսկ ամենացածր հարթակում են Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունը և Նիգերիան:

Բելառուսը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան և Հայաստանը դասակարգված են մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների խմբում, իսկ Մոլդովան դասվում է մարդկային զարգացման միջին մակարդակ ունեցողների շարքին:

Մարդկային զարգացման մակարդակը վերլուծելու միջոցներից մեկը Գեոդերային անհավասարության համաթիվն (ինդեքս) է (ԳԱԻ): ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը (ՄԱՉԾ) ԳԱԻ-ն<sup>14</sup> նկարագրում է որպես միջոց, որը նախատեսված է ցույց տալու համար կանանց և տղամարդկանց հնարավորությունների անհավասարության պատճառով մարդկային զարգացման ներուժի կորուստը՝ կարողությունների հզորացման և տնտեսական կարգավիճակի առումներով, ինչպես նաև արտացոլում է տվյալ երկրի դիրքը Նորմատիվ կատարելատիպի

14. Հասանելի է այստեղ՝ <http://hdr.undp.org/en/composite/GII>

համեմատ՝ կանանց առողջությանն առնչվող առանցքային ոլորտներում: Ընդհանուր առմամբ, ԳԱԻ-ն ցույց է տալիս, թե որքանով է կանանց դրությունն անբարենպաստ հետևյալ ոլորտներում:

Այդ երեք ոլորտները չափվում են հետևյալի միջոցով.

- ▶ վերարտադրողական առողջություն. մայրական մահացության և դեռահասների ծնելիության ցուցանիշներ,
- ▶ կարողությունների հզորացում. կանանց համար նախատեսված խորհրդարանական մանդատների մասնաբաժինը և միջնակարգ կրթությունն ունեցող 25 տարեկանից բարձր կանանց թիվը,
- ▶ տնտեսական կարգավիճակը. մասնակցությունը աշխատաշուկայում:

Գենդերային կատարյալ հավասարությամբ որևէ երկիր չկա, ուստի, գենդերային անհավասարության տեսանկյունից բոլոր երկրներում տեղի է ունենում մարդկային զարգացման առանցքային ոլորտներում որոշակի հնարավորությունների կորուստ: Այն կարող է մեկնաբանվել որպես հնարավորությունների համակցված կորուստ վերարտադրողական առողջության, կարողությունների հզորացման և աշխատաշուկայում մասնակցության ոլորտներում, որի պատճառը գենդերային անհավասարությունն է: ԳԱԻ-ն տատանվում է 0-ից 1 և ավելի բարձր ցուցանիշների միջև, իսկ ԳԱԻ-ի ավելի բարձր արժեքները ցույց են տալիս անհավասարության ավելի բարձր մակարդակ:

**Աղյուսակ 1. Մարդկային զարգացման համաթվի ամենաբարձր վարկանիշ ունեցող և ուսումնասիրվող երկրները և Գենդերային անհավասարության համաթիվը:**

Երկիրը	ՄՀՀ վարկանիշը՝ ընդհանուր 188-ից (2014թ.)	ԳԱԻ (2014թ.)
Նորվեգիա	1	0.067
Ավստրալիա	2	0.110
Շվեդարիա	3	0.028
Դանիա	4	0.048
Նիդերլանդներ	5	0.062
Գերմանիա	6	0.041
Բելառուս	50	0.151
Վրաստան	76	0.382
Ադրբեջան	78	0.303
Ուկրաինա	81	0.286
Հայաստան	85	0.318
Մոլդովա	107	0.248

ԳԱԻ-ն չափում է կանանց պատկանող խորհրդարանական մանդատների տոկոսային հարաբերությունը:

**Աղյուսակ 2. Ուսումնասիրվող երկրների դիրքը Եվրոպայի վեց լավագույն երկրների համեմատությամբ. կանանց պատկանող մանդատների տոկոսային հարաբերությունը:**

Երկիրը	Կանանց պատկանող խորհրդարանական մանդատների տոկոսային հարաբերությունը (2014թ.)
Շվեդիա	43.6
Ֆինլանդիա	42.5
Բելգիա	42.4
Իսլանդիա	41.3
Նորվեգիա	39.6
Դանիա	38
Բելառուս	30.1
Մոլդովա	20.8
Ադրբեջան	15.6
Ուկրաինա	11.8
Վրաստան	11.3
Հայաստան	10.7

*Խորհրդարանում կանանց ներկայացվածության ցուցանիշները ցածր են՝ Եվրոպայի ամենաբարձր ցուցանիշների համեմատ, ուստի այս ուսումնասիրության նպատակներով փորձ է արվում ավելի մանրամասն հետազոտել դրա պատճառները:*

## **ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**

Ընտրությունների դիտորդները հայտնել են իրենց մտահոգությունները կանանց քաղաքական ներկայացվածության վերաբերյալ: Օրինակ՝ Ուկրաինայի 2014թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն<sup>15</sup> նշել է, որ քաղաքական կուսակցությունների մասին 2013թ. ընդունված օրենքի փոփոխությամբ ներդրվել է կուսակցական ցուցակներում կանանց 30% քվոտա, սակայն օրենքը ոչինչ չի նախատեսում կուսակցական ցուցակներում թեկնածուների դասակարգման մասին, իսկ կիրարկման մեխանիզմներ գոյություն չունեն:

15. Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի դիտորդական առաքելություն:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն առաջարկել է.

«Չնայած ընտրակարգի հնարավոր փոփոխություններին, խորհրդարանում կանանց թերի ներկայացվածության խնդիրը պետք է լուծվի ավելի խիստ կիրարկման մեխանիզմների և/կամ հատուկ լրացուցիչ ժամանակավոր միջոցների օգնությամբ, որոնք կարող են բոլոր թեկնածուների համար ստեղծել ավելի արդարացի պայմաններ»:<sup>16</sup>

Ուկրաինայի 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն նշել է, որ թեև գենդերային հավասարության սկզբունքը ներառված է սահմանադրության մեջ, սակայն կուսակցությունների շրջանում կար կին թեկնածուներին խրախուսելու շահագրգռվածության պակաս, և քիչ թվով կանայք էին ընդգրկված կուսակցությունների թեկնածուների ցուցակների ամենաբարձր և այլ շահավետ դիրքերում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն առաջարկել է.

«Անհրաժեշտ է խրախուսել քաղաքական կուսակցություններին, որպեսզի վերջիններս խթանեն գենդերային հավասարությունը և վճռական քայլեր ձեռնարկեն՝ թեկնածուների՝ գենդերային տեսանկյունից հավասարակշռված ցուցակներ առաջադրելու համար, բարձրացնելու կին թեկնածուների տեսանելիությունը նախընտրական քարոզարշավների ժամանակ և իրենց քաղաքական հարթակներում ներառելու գենդերային խնդիրները: Գենդերային պահանջի ներդրումը կուսակցական ցուցակների կազմման ժամանակ կարող է համարվել ժամանակավոր միջոց»:<sup>17</sup>

2012թ. մայիսին տեղի ունեցած Հայաստանի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն պարզեց, որ՝

«Ամենահզոր ժամանակավոր հատուկ միջոցը մինչ այժմ եղել է այն պահանջը, ըստ որի թեկնածուների համամասնական ցուցակները պետք է ընդգրկեն երկու սեռերի ներկայացուցիչներ՝ յուրաքանչյուր ամբողջ թվով թեկնածուների հնգյակում՝ սկսած 2-րդ թեկնածուից: Սակայն ըվոտայի արդյունավետությունը սահմանափակ է, քանի որ թեկնածուները կարող են հետ վերցնել իրենց թեկնածությունը ցուցակի գրանցումից հետո, իսկ նախնական գենդերային համամասնության պահպանման պահանջ չկա»:

և

«... որ թեև կանայք որպես թեկնածու առաջադրվելու իրավունք ունեն, այդ իրավունքի իրացումը և թեկնածության առաջադրման հնարավորությունը խնդրահարույց է: Ավելին, մեծամասնական կարգով առաջադրված 12 կին թեկնածուից 3-ը չի գեկուցել նախընտրական ծախսերի կատարման մասին, ինչը կասկածի տակ է դնում նրանց թեկնածության իսկությունը»:<sup>18</sup>

16. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ վերջնական գեկույց Ուկրաինայի 2014թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասին, էջ 32:

17. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ/ԸՂԱ վերջնական գեկույց Ուկրաինայի 2012թ. խորհրդարանական ընտրությունների մասին, էջ 37:

18. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ վերջնական գեկույց խորհրդարանական ընտրությունների մասին, 2012թ. մայիս 6, էջ 10:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ՝

«... [հանրային հեռարձակողը] ընտրությունների հետ կապված իր լրատվական ծրագրերի 4 տոկոսը առանձնացրել է կին թեկնածուների և կուսակցության ներկայացուցիչների համար, իսկ հանրային ռադիոն՝ 5 տոկոսը: Դա անհամաչափորեն ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով, որ բոլոր գրանցված թեկնածուների 21 տոկոսը կանայք էին, ինչպես նաև՝ նկատի ունենալով օրենսդիր մարմնում կանանց համար 30 տոկոս ապահովելու Հայաստանի կողմից հայտարարված նպատակակետը»:<sup>19</sup>

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

Ուսումնասիրվող բոլոր երկրներն ունեն գենդերային հավասարությանն առնչվող ազգային քաղաքականության ծրագրեր և դրանց իրականացման գործողությունների ծրագրեր, սակայն հեշտ չէ գտնել այնպիսի հանրամատչելի փաստաթղթեր, որոնք արձանագրում են, թե ինչպես են այդ պլաններն ու ծրագրերը իրականացվել:

**Հայաստան.** Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը նպատակ է հետապնդում գենդերային հարցերը ներառել կառավարության ծրագրերում և քաղաքականության մեջ՝ որպես առաջնային կարևորություն ունեցող հարցեր: Գործողությունների մեծ մասը պահանջում է ռեսուրսներ, որոնք բոլորն էլ ֆինանսավորվում են արտաքին դոնորների կողմից:

**Ադրբեջան.** 2012թ.-ին մշակված «Ադրբեջան 2020թ. ապագայի տեսլական» հայեցակարգը ներառում է «Գենդերային հավասարության երաշխիքները և ընտանեկան ինստիտուտի զարգացումը» վերտառությամբ գլուխ: Աշխատանքներ են իրականացվել՝ ուղղված երեխաներին և ընտանիքներին, սակայն մասնավորապես կանանց համար ոչինչ չի արվել:

**Բելառուս.** Գենդերային հավասարության 2011-2015թթ. գործողությունների ազգային ծրագիրը ներառում էր մի շարք նպատակներ, որոնք ուղղված էին կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք գենդերային հավասարության պայմանների ստեղծմանը: Բացի իրագործելիության ուսումնասիրություններից, այդ ծրագրերի կատարմանն ուղղված բյուջետային միջոցներ կամ ռեսուրսներ գոյություն չունեն:

**Վրաստան.** ԵՄ-Վրաստան 2014-2016թթ. սառցացման օրակարգով նախատեսվում է ապահովել կանանց և տղամարդկանց հավասար հիմունքներով ներկայացվածությունը խորհրդարանում և տեղական ինքնակառավարման մարմիններում: Գենդերային ավասարության քաղաքականության իրականացման 2014-2016թթ. Գործողությունների ծրագիրը ներառում է միջոցառումների մշակում՝ կանանց քաղաքական մասնակցությանն աջակցելու համար, ինչպես

19. Տե՛ս նույն տեղում, էջ 17:



նաև առաջարկում է մեխանիզմներ՝ ընկերություններում կանանց մասնակցությունը որպես բիզնեսի ֆինանսավորման չափանիշ սահմանելու համար:

**Մոլդովա.** Գենդերային հավասարության 2010-2015թթ. ազգային ծրագիրն ուներ դրա իրականացման համար հատկացված բյուջետային միջոցներ և ներառում էր վերապատրաստում քաղաքական պաշտոնի համար պայքարող թեկնածուների և գենդերային բյուջետավորման գծով մասնագետների համար:

**Ուկրաինա.** Կանանց և տղամարդկանց միջև հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման 2014-2016թթ. պետական ծրագիրը ներառում է 2014թ. համար նախատեսված գործողություններ, մասնավորապես՝ ներկայացնելու կին թեկնածուների 30% քվոտայի պահպանման մասին օրենքի նախագիծ և ներդնելու խորհրդարանական ընտրությունների գենդերային մշտադիտարկման մեխանիզմ: Այդ գործողությունների իրականացման համար հատկացված են բյուջետային միջոցներ:

**Աղյուսակ 4. Կանանց կողմից զբաղեցված խորհրդարանական մանդատների ամենաբարձր տոկոսային մակարդակ ունեցող եվրոպական երկրների աշխատուժի մասնակցության ցուցանիշները<sup>21</sup>**

Երկիրը	15 և ավելի բարձր տարիքի անձանց մասնակցությունը աշխատաշուկայում (2013թ.)	
	Կանայք	Տղամարդիկ
Շվեդիա	60.3	67.9
Ֆինլանդիա	55.7	76.4
Բելգիա	47.5	59.3
Իսլանդիա	70.5	77.4
Նորվեգիա	61.2	68.7
Դանիա	58.7	66.4

*Բացառությամբ Մոլդովայի՝ ցածր, և Իսլանդիայի՝ բարձր ցուցանիշների, աշխատանքի շուկայում կանանց մասնակցության ցուցանիշները շատ չեն տարբերվում միմյանցից ԱԳ երկրներում և այն երկրներում, որոնք ունեն կանանց պատկանող խորհրդարանական մանդատների ամենաբարձր տոկոսային մակարդակը:*

Եվրոպական միությունը սահմանել է 75% նպատակակետ՝ 20-ից 64 տարեկան կանանց աշխատաշուկայում մասնակցության համար՝ նպատակ հետապնդելով կանխել կրճատվող աշխատուժը և խթանել աճը: Խորհրդարանում ներկայացված կանանց ամենաբարձր ցուցանիշներ ունեցող երկրներից, ինչպես նաև ուսումնասիրվող երկրներից ոչ մեկը չի հասել այդ ցուցանիշին:

**Աղյուսակ 5. Կանանց աշխատուժի մասնակցության ցուցանիշները (15+ տարիքի իգական սեռի բնակչության տոկոսային հարաբերությունը)՝ մշակված ըստ ԱՄԿ հաշվարկների<sup>22</sup>**

Երկիրը	1990թ.	2014թ.
Հայաստան	60	55
Ադրբեջան	54	63
Բելառուս	60	50
Վրաստան	55	57
Մոլդովա	61	38
Ուկրաինա	56	54

21. Տե՛ս նույն տեղում:

22. <http://data.worldbank.org/indicator/SL.TLF.CACT.FE.ZS>:



## Գլուխ 3.

# Ուսումնասիրության արդյունքները

### Ա. ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Տնտեսական տվյալներ

#### 1. Զբաղվածության ցուցանիշներ

Աղյուսակ 3. Մասնակցությունը աշխատաշուկայում<sup>20</sup>

Երկիրը	15 և ավելի բարձր տարիքի անձանց մասնակցությունը աշխատաշուկայում (2013թ.)	
	Կանայք	Տղամարդիկ
Ադրբեջան	62.9	69.6
Վրաստան	56.5	75.1
Հայաստան	54.2	72.6
Ուկրաինա	53.2	66.9
Բելառուս	50.1	63.1
Մոլդովա	37.6	44.2

20. Աղբյուրը՝ ՄԱԶԾ Գեներացիայի զարգացման համաթիվ, հասանելի է այստեղ՝ <http://hdr.undp.org/en/composite/GDI>:

Համաշխարհային բանկի կողմից գնահատված տվյալները ցույց են տալիս աշխատաշուկայում կանանց ներգրավվածության նվազում՝ բացառությամբ Ադրբեջանի, որտեղ գրանցվել է 9% աճ, և Վրաստանի՝ 2% աճով, որը տեղի է ունեցել խորհրդային Միության կազմալուծումից և այդ երկրների կողմից անկախություն ձեռք բերումից հետո:

## 2. Եկամուտ

**Աղյուսակ 6. Ուսումնասիրվող երկրների գնահատված համախառն ազգային արդյունքը՝ մեկ շնչի հաշվով (2011թ.)**

Երկիրը	Գնահատված համախառն ազգային արդյունքը՝ մեկ շնչի հաշվով (2011թ.)՝ ԱՄՆ դոլարով		ՀԱՄ-ի՝ կանանց մասնաբաժինը տղամարդկանց համեմատ, % (2011թ.)՝ ԱՄՆ դոլարով
	Կանայք	Տղամարդիկ	
Բելառուս	12 922.3	21 009.7	61
Ադրբեջան	10 120.3	22 814	44
Ուկրաինա	6 518.3	10 120.2	64
Հայաստան	6 042.1	10 089.4	59
Մոլդովա	4 599.2	5 915.5	77
Վրաստան	4 887	9 717	50

**Աղյուսակ 7. Գնահատված համախառն ազգային արդյունքը՝ մեկ շնչի հաշվով, խորհրդարանում կանանց ամենաբարձր տոկոսային հարաբերություն ունեցող երկրներ**

Երկիրը	Գնահատված համախառն ազգային արդյունքը՝ մեկ շնչի հաշվով (2011թ.)՝ ԱՄՆ դոլարով		ՀԱՄ-ի՝ կանանց մասնաբաժինը տղամարդկանց համեմատ, % (2011թ.)՝ ԱՄՆ դոլարով
	Կանայք	Տղամարդիկ	
Շվեդիա	40 221	51 084	78
Ֆինլանդիա	31 644	45 994	68
Բելգիա	31 879	50 845	62
Իսլանդիա	28 792	41 486	69
Նորվեգիա	57 139	72 825	78
Դանիա	36 439	51 726	70

Ընդհանուր առմամբ, այս տվյալները ցույց են տալիս, որ բոլոր ուսումնասիրվող երկրներում կանայք տնտեսական անբարենպաստ վիճակում են գտնվում՝ տղամարդկանց համեմատ, և չնայած իրավիճակը նույնն է նաև կանանց քաղաքական ներկայացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող երկրներում, սակայն կանանց և տղա-

մարդկանց եկամտի միջև տարբերությունը ավելի քիչ է արտահայտված:

### 3. Աշխատանքի տեսակները

Համաշխարհային բանկի կողմից Բելառուսում անցկացված հետազոտության<sup>23</sup> արդյունքում պարզվել է, որ աշխատանքի շուկայում կանայք անբարենպաստ վիճակում են: Նրանք միջինում ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ, նույնիսկ զբաղվածության և մարդկային կապիտալի մասով բարեփոխումներ իրականացնելուց հետո:

Բացի այդ, չնայած կրթության ավելի բարձր որակավորումներին՝ մասնավոր և պետական հաստատությունների բարձրաստիճան պաշտոններում կանանց ներկայացվածությունն ավելի քիչ հավանական է:

Մոլդովայում անցկացված համանման ուսումնասիրության արդյունքում<sup>24</sup> պարզվել է, որ աշխատաշուկան բնութագրվում է գենդերային տարանջատմամբ՝ ըստ ոլորտի, մասնագիտության և ղեկավար պաշտոնների: Կանանց յոթանասունհինգ տոկոսն աշխատում է պետական կառավարման և կրթության, գյուղատնտեսության, առևտրի և հյուրանոցային ոլորտներում:

Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ) «Կանայք բիզնեսում և ղեկավար պաշտոններում»<sup>25</sup> վերտառությամբ ուսումնասիրությունն է անցկացրել ԱՄԿ-ի անդամ երկրներում: Ուսումնասիրվող երկրներից ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ բացառությամբ Հայաստանի՝ մնացած բոլոր երկրներում կանայք ղեկավար պաշտոններում ներկայացված են:

### Աղյուսակ 8. Կանայք բոլոր տեսակի և մակարդակների ղեկավար պաշտոններում (հանրային և մասնավոր հատված)

Երկիրը	Վարկանիշը՝ ընդհանուր 128-ից	Տվյալների գրառման ամսաթիվ	Կանանց %-ը
Բելառուս	6	2009թ.	46.2
Մոլդովա	10	2012թ.	44.1
Ուկրաինա	22	2012թ.	39.9
Ադրբեջան	41	2012թ.	34.2
Վրաստան	42	2012թ.	34

23. [www-http://documents.worldbank.org/curated/en/518041468201598756/pdf/763250ESW0P1320r0Asessment0020140.pdf](http://documents.worldbank.org/curated/en/518041468201598756/pdf/763250ESW0P1320r0Asessment0020140.pdf):

24. [www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/WDS/IB/2014/04/16/000442464\\_2014\\_0416103813/Rendered/PDF/760770ESW0P1310r0Assessment0020140.pdf](http://www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/WDS/IB/2014/04/16/000442464_2014_0416103813/Rendered/PDF/760770ESW0P1310r0Assessment0020140.pdf):

25. «Կանայք բիզնեսում և ղեկավար պաշտոններում. տնվերի արագացում», ԱՄԿ (2015թ.): Հասանելի է՝ [www.ilo.org/wcm/sp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms\\_316450.pdf](http://www.ilo.org/wcm/sp5/groups/public/---dgreports/---dcomm/---publ/documents/publication/wcms_316450.pdf):

Բացառությամբ Ադրբեջանի, կանանց համալսարանական կրթությունն ունենալու հավանականությունն ավելի բարձր է, քան տղամարդկանցը: Այդուհանդերձ, փաստերն ապացուցում են, որ կանայք ավելի հակված են այնպիսի ուսում ստանալու, որը նրանց ուղղորդում է դեպի պետական ծառայության ոլորտի աշխատանքը, օրինակ՝ կրթության և առողջապահության ոլորտում, որոնք, ընդհանուր առմամբ, ավելի ցածր են վարձատրվում:

Բարձր/կենտրոնական կառավարման օղակում կանանց ամենացածր տոկոսն արձանագրվել է Հայաստանում և Ուկրաինայում: Կանանց ամենաբարձր մասնակցության աստիճանը տեղական կառավարման մակարդակում արձանագրվել է Բելառուսում:



## 2. Կանանց նկատմամբ բռնություն

Սա կարևոր ցուցանիշ է, որը վկայում է այն մասին, թե ինչպես են կանայք ընդունվում հասարակության կողմից: Տեղեկատվությունն ամբողջական չէ, քանի որ ուսումնասիրվող երկրներում վիճակագրական տվյալները նույն կերպ չեն հավաքվում:

Գնահատման չափանիշներից մեկը որոշ երկրների կողմից Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (որը հայտնի է նաև որպես Ստամբուլի կոնվենցիա) ստորագրված ու վավերացված լինելն է:<sup>27</sup>

27. Հասանելի է այստեղ՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046031c>:

Նույն հետազոտությունը<sup>26</sup> 135 երկրներում գործող 130 000 ընկերություններից առանձնացրել է այն ընկերությունները, որտեղ կանայք զբաղեցնում են բարձրաստիճան ղեկավար պաշտոններ: Հինգ երկրներից ստացված արդյունքները ցուցադրված են ստորև ներկայացված աղյուսակում:

**Աղյուսակ 9. Բարձրաստիճան կին ղեկավարներ ունեցող ընկերությունների տոկոսը (2013թ.)**

Երկիրը	Կանանց %-ը
Բելառուս	32.8
Ադրբեջան	2.4
Վրաստան	32.1
Մոլդովա	26.3
Ուկրաինա	18.9

Այս թվերը միայն մոտավոր ցուցանիշներ են տրամադրում, քանի որ ուսումնասիրված ընտրանքի չափերը և ոլորտները տարբերվում են, հետևաբար, դրանք կարող են չներկայացնել երկրում տիրող իրական իրավիճակը:

**Սոցիալական և մշակութային տվյալներ**

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, որ չնայած համալսարանական կրթություն ունեցող կանանց բարձր տոկոսային հարաբերությանը՝ առնվազն չորս երկրների բարձր/կենտրոնական կառավարման օղակներում կանանց տոկոսային հարաբերությունը բավականին ցածր է:

**1. Բարձրագույն կրթություն ունեցողներ**

**Աղյուսակ 10. Բարձրագույն կրթություն ունեցողներ**

Տվյալներ իրավիճակի մասին կանայք/տղամարդիկ	Հայաստան	Ադրբեջան	Բելառուս	Վրաստան	Մոլդովա	Ուկրաինա	
Բարձրագույն կրթությամբ	Կ	58%	47.7%	19.9%	28%	60.6%	Տվյալներ չկան
	Կ	37%	52.3%	17.6%	26.8%	39.5%	Տվյալներ չկան
Բարձրագույն կառավարման օղակներում գտնվող կանայք	Կ	11%	անհայտ	52.9%	29.3%	30%	16.1%
	Տ	89%	անհայտ	68.5%	70.7%	70%	83.9%

26. ՏԵՍՆՈՅԻՆ տեղում:



## Աղյուսակ 11. Եվրոպայի խորհրդի Ստամբուլի կոնվենցիան ստորագրած կողմերը

Երկիրը	Ստորագրում	Վավերացում	Կիրառում
Հայաստան	-	-	-
Ադրբեջան	-	-	-
Վրաստան	2014թ. հունիսի 19	-	-
Մոլդովա	-	-	-
Ռուրահնա	2011թ. նոյեմբերի 7	-	-

Բելառուսը Եվրոպայի խորհրդի անդամ չէ: Սակայն Ստամբուլի կոնվենցիան բաց է՝ անդամ չհանդիսացող պետությունների ստորագրության համար:

Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ բռնությանը, ապա խորհրդատուների կողմից տրամադրված տեղեկատվությունը հետևյալն է:

Հայաստանում ոստիկանության վիճակագրությունը ցույց է տալիս տարեկան միջինը 621 արձանագրված դեպք, սակայն կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները համատեղ ներկայացնում են թե՛ զճերին կատարված տարեկան միջինը 5000 զանգ: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի կողմից Հայաստանի մասին 2010թ. հրապարակված ուսումնասիրության՝ հետազոտության մեջ ընդգրկված կանանց 61%-ը, որոնք զուգընկեր ունեն կամ որոնք նախկինում երբևէ հարաբերություն էին ունեցել, ենթարկվել են իշխող վարքագծի ազդեցության: Նրանց մեկ քառորդը ենթարկվել են հոգեբանական բռնության կամ վատ վերաբերմունքի, իսկ 8.9%-ը՝ ֆիզիկական բռնության: Կանանց միայն 7.7%-ն էր կարծում, որ ընտանեկան բռնության նման խնդիրները կարող են քննարկվել ընտանիքից դուրս՝ այլ անձանց հետ: 2013 թվականին մերժվեց ընտանեկան բռնության մասին օրենքի նախագիծը այն հիմքով, որ այն անիրագործելի է: Սակայն ԵՄ-ի Մարդու իրավունքների պաշտպանության բյուջետային աջակցության 2016-2018թթ. ծրագրի նախապայմաններից մեկը ընտանեկան բռնության մասին առանձին օրենքի ընդունումն է:

Ադրբեջանը ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենք է ընդունել 2010թ.: 2012թ. արձանագրվել է ընտանեկան բռնության հետևանք հանդիսացող 1633 հանցագործություն: Դրանցից 1284-ի դեպքում հանցագործությունների զոհերը կանայք էին:<sup>28</sup> Սակայն ՀԿ-ները հաղորդում են հանցագործությունների շատ ավելի բարձր մակարդակի մասին, որը պաշտոնական վիճակագրության մեջ արձանագրված չէ:

Բելառուսում բնակչության 77%-ը տուժել է ընտանեկան բռնությունից (77,3% կանայք և 76.7% տղամարդիկ), յուրաքանչյուր երեք

28. Հասանելի է այստեղ՝ [www.osce.org/baku/110044?download=true](http://www.osce.org/baku/110044?download=true):

կանանցից մեկը ենթարկվել է ֆիզիկական, իսկ հինգից մեկը՝ սեռական բռնության: Զրեական և քաղաքացիական օրենսգրքերը և Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը պարունակում են մի շարք հոդվածներ, որոնք սահմանում են անձի նկատմամբ բռնության գործողությունների հակաիրավականությունը, սակայն որոշ դեպքերում, երբ դրանք տեղի են ունենում ընտանիքի ներսում, այդ գործողությունները քրեորեն հետապնդելի չեն: Ակնկալվում է, որ ընտանեկան բռնության մասին առանձին օրենք կընդունվի 2016-2017թթ.: Սա Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) կողմից տարբեր նախարարությունների և ՀԿ-ների հետ իրականացված աշխատանքների արդյունքն է:

Վրաստանում գործում է ընտանեկան բռնության մասին առանձին օրենք, և 2014թ. արձանագրվել է կանանց նկատմամբ բռնության 742 դեպք: Սակայն ՀԿ-ների կարծիքով այդ օրենքը լայնորեն ճանաչված չէ կամ չի կիրառվում:

Մոլդովայում ընտանեկան բռնության դեպքերը 2012թ. կազմել են 64%, որոնցից հոգեբանական բռնության՝ 59,4%, ֆիզիկական բռնության՝ 39.7%, և սեռական բռնության՝ 18.6%: Ընդունվել է ընտանեկան բռնության դեմ պայքարը կարգավորող առանձին օրենսդրություն, սակայն այն լայնորեն ճանաչված չէ կամ չի կիրառվում:

Ուկրաինայում 2013թ. արձանագրվել է ընտանեկան բռնության 174 229 դեպք: Եվրոպայի խորհուրդն աշխատում է Ուկրաինայի կառավարության հետ՝ Ստամբուլի կոնվենցիայի պահանջների կիրարկմանն աջակցելու նպատակով: Արևելյան Ուկրաինայի հակամարտությունն ավելացրել է կանանց նկատմամբ բռնության ռիսկը:<sup>29</sup>

### 3. Հասարակական կազմակերպություններ (ՀԿ)

Ուսումնասիրվող երկրներում հետազոտողները հայտնաբերել են կանանց առնչվող խնդիրներով զբաղվող ՀԿ-ներ: Այդ կազմակերպությունները տարբեր ազդեցություն ունեն:

Հայաստանի հետազոտողը գեկուցել է, որ այդ երկրում կանանց կազմակերպությունների աշխատակազմն ու անդամները, ինչպես նաև կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ ակտիվիստներ պարբերաբար ստանում են սպառնալիքներ և նրանց հասցեին հնչում են վիրավորական արտահայտություններ: 2013թ. Կանանց ռեսուրս կենտրոնը գենդերային հավասարության վերաբերյալ օրենսդրություն ընդունելու անհրաժեշտության մասին կոչերից հետո ստացել է մահվան անանուն սպառնալիքներ: Մինչև տարեվերջ այդ միջադեպերից և ոչ մեկի առնչությամբ արդյունավետ քննություն չի իրականացվել:

Թեև Բելառուսում ՀԿ-ները Էական դեր չեն խաղացել գենդերային հավասարության հարցերի շուրջ հանրային իրազեկության բարձրացման ուղղությամբ, դրանց հաջողվել է գենդերային հավասարու-

29. Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են այստեղ՝ [www.ohchr.org/Documents/Countries/UA/9thOHCHRreportUkraine.pdf](http://www.ohchr.org/Documents/Countries/UA/9thOHCHRreportUkraine.pdf):

թյան քաղաքականության իրականացման գործում պետությանը դարձնել հաշվետու: Բելառուսում գենդերային հատվածի 2014թ. վերլուծության համաձայն<sup>30</sup> երկրում ամենաակտիվ գենդերային դերակատարները քաղաքացիական հասարակության կազմակերպություններն են, մասնավորապես՝ կանանց ՅԿ-ները: ՅԿ-ների ընդհանուր ջանքերը հազիվ նկատելի կամ լսելի են, և դրանք չեն ազդում հասարակական կարծիքի ձևավորման վրա: Սակայն այդ կազմակերպությունները հաճախ հանդիսանում են այն յուրօրինակ դրական դերակատարները, որոնք առաջ են քաշում գենդերային հավասարության արժեքները և ընդգծում պետության պարտավորությունը՝ հավատարիմ մնալու գենդերային հավասարության քաղաքականության ոլորտում ստանձնած պարտավորություններին: Այս դերակատարները նաև մշտադիտարկում են, թե ինչպես են որոշ գենդերային հարցեր պետության կողմից լուծվում: Գենդերային հարցերի ոլորտում գործունեություն է ծավալում շուրջ 32 ՅԿ: Երկրում գործում են նաև մի շարք այլ ՅԿ-ներ, որոնք զբաղվում են գենդերային հարցերով, սակայն նրանց գործունեությունը կա՛մ պակաս հրապարակային է, կա՛մ էլ, ըստ որոշ փորձագետների, նրանց տրամադրած տեղեկատվության որակը ենթակա է վիճարկման: Բելառուսում մարդու իրավունքների ոլորտում գործող ՅԿ-ները գենդերային հարցերի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրություն չեն ցուցաբերում:

Վրաստանում գործում են ավելի քան 200 հասարակական կազմակերպություններ, որոնց գործունեությունն առնչվում է գենդերային կամ կանանց խնդիրների հետ: Սակայն այդ ՅԿ-ների միայն փոքր մասն է ակտիվ գործունեություն ծավալում: Արձագանքելով կանանց սպանության և նրանց նկատմամբ բռնության դեպքերին՝ տարբեր ոլորտներ ներկայացնող հարյուրավոր կանայք հավաքվեցին՝ ստեղծելով Վրաստանի կանանց շարժումը, որի գործունեության առանցքը հիմնականում կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարն է: 2014թ. նոյեմբերի 25-ին Վրաստանի կանանց շարժումը բողոքի ցույցեր կազմակերպեց ողջ Վրաստանի տարածքում՝ դատապարտելով կանանց դեմ բռնությունը: 2015թ. մարտի 8-ին Վրաստանի կանանց շարժումը կազմակերպեց հանրահավաքներ՝ պահանջելով խորհրդարանում կանանց թվի ավելացում:

Մոլդովայում գործում են մի քանի ՅԿ-ներ, որոնք աշխատում են կանանց իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում: 2012թ. սկսած՝ Մոլդովայի կառավարությունը դոնոր կազմակերպությունների և ՅԿ-ների ազատ շարժման աջակցությամբ սկսեց աշխատանքներ տանել գենդերային հավասարության ուղղությամբ՝ իշխանություններին մղելով հաստատել թեկնածուների համար խորհրդարանում գենդերային քվոտաներ ներդնելու մասին օրենքի փոփոխությունը: Օրենքի փոփոխությունն ընդունվեց 2016թ. ապրիլին: 2015թ. ՅԿ շարժումը դարձավ Գենդերային իրավահավասարության հարթակ:

30. Հասանելի է այստեղ՝ <http://eng.oeec.by/wp-content/uploads/2015/06/Analysis-of-Gender-Sector-in-Belarus.pdf>:

Ուկրաինայում անկախ կանանց շարժումը խորը արմատներ ունի և այժմ բավական հասունացած է: Կանանց խմբերի թիվը հնարավոր չէ հաշվել, սակայն, ամենայն հավանականությամբ, գործում է մոտ 500 կազմակերպություն: Դրանք ակտիվ գործունեություն են ծավալում գեղդերային քաղաքականության ոլորտում (կանանց քաղաքական մասնակցություն, խտրականության դեմ պայքար, գեղդերային կրթություն, շարժում խաղաղության համար, մարդկանց թրաֆիքինգի և ընտանեկան բռնության դեմ պայքար): Կանանց շարժումը պահպանում է քաղաքական փոփոխությունների տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած գեղդերային փոխակերպումների մասին ինստիտուցիոնալ հիշողությունը: Նախորդ տարի այն կանանց համար նախատեսված քվոտաների վերաբերյալ քննարկումներ նախաձեռնեց և իրականացրեց դրանց ընդունմանն ուղղված քարոզչություն: Միայն 2015թ. խորհրդարանն այն ներառեց տեղական ընտրությունների մասին օրենքում, սակայն առանց կիրարկման ընթացակարգի:

#### 4. Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ-ներ)

Տարածաշրջանում տեղի ունեցած հակամարտությունների պատճառով Վրաստանն ու Ուկրաինան ունեն ՆՏԱ-ների բարձր մակարդակ: Նրանց ընտրելու իրավունք ունենալու կամ չունենալու հետ կապված մոտեցումները տարբեր են (տե՛ս ընտրակարգերի մասին հաջորդ բաժինը):

Վրաստանում բնակչության 6%-ը ՆՏԱ-ներ են, որոնցից 86 774-ը տղամարդիկ են, իսկ 102 865-ը՝ կանայք:<sup>31</sup> Ուկրաինայում կա մոտ 1 787 019 ՆՏԱ, որոնց 57%-ը կանայք են, իսկ 43%-ը՝ տղամարդիկ:<sup>32</sup> Ադրբեյջանը հայտարարել է երկրում 597 000 ՆՏԱ-ների առկայության մասին՝ առանց գեղդերային տարանջատմամբ վերաբերյալ տվյալների:<sup>33</sup>

2005թ.-ին Փախստականների հարցերով նորվեգական խորհրդի (ՓՆԽ) կողմից իրականացված վերլուծության համաձայն,<sup>34</sup> որն իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության հետ համատեղ, 1988-1994թթ. Հայաստանի և Ադրբեյջանի միջև Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության ընթացքում Հայաստան է տեղահանվել է շուրջ 65 000 ընտանիք: Նրանց մեծ մասը վերադարձել էր մինչև 2005թ., մինչդեռ շուրջ 8 399 ՆՏԱ շարունակում է մնալ տեղա-

31. Ըստ Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի կողմից 2014թ.-ին անցկացված վերջին մարդահամարի: Տվյալները հասանելի են այստեղ՝ <http://census.ge/ge/results/census>:

32. Տվյալները հասանելի են կառավարության կայքում՝ հրապարակված 2016թ. մայիսի 30-ին՝ [www.kmu.gov.ua/control/uk/publish/article?art\\_id=249069737&cat\\_d=244277212](http://www.kmu.gov.ua/control/uk/publish/article?art_id=249069737&cat_d=244277212):

33. Աղբյուրը՝ [www.internal-displacement.org/europe-the-caucasus-and-central-asia/azerbaijan/2014/azerbaijan-after-more-than-20-years-idps-still-urgently-need-policies-to-support-full-integration/](http://www.internal-displacement.org/europe-the-caucasus-and-central-asia/azerbaijan/2014/azerbaijan-after-more-than-20-years-idps-still-urgently-need-policies-to-support-full-integration/):

34. Հասանելի է այս տեղ՝ [www.internal-displacement.org/europe-the-caucasus-and-central-asia/armenia/figures-analysis](http://www.internal-displacement.org/europe-the-caucasus-and-central-asia/armenia/figures-analysis)

հանված: Դասակարգված տվյալներ չկան: Բելառուսի և Մոլդովայի վերաբերյալ ՆՏԱ-ների ցուցանիշներ չեն հայտնաբերվել:

ՓԼՏ-ի վերլուծությունը Հայաստանում միակ հասանելի աղբյուրն է ՆՏԱ-ների ցուցանիշների մասին: ՆՏԱ-ների ներկա թվաքանակը գնահատելու ուղղությամբ հետագա ուսումնասիրություններ չեն կատարվել, ո՛չ իշխանությունները, ո՛չ էլ քաղաքացիական հասարակությունը կամ միջազգային կազմակերպությունները չեն ձեռնարկել ավելի թարմ տվյալներ ձեռք բերելուն ուղղված վերլուծություններ: Բնակչությունը 2005թ.-ին կազմել է 3 219 200,<sup>35</sup> ինչը ենթադրում է 0.3% ՆՏԱ-ների առկայություն:

## 5. Արտերկրում բնակվող քաղաքացիներ

Մոլդովայում ՄԱԿ-ի գրասենյակը գնահատել է, որ վերջին տասնամյակի ընթացքում Մոլդովայի աշխատուժի մոտ մեկ երրորդը մշտական կամ ժամանակավոր արտագնա աշխատանքի է մեկնել:<sup>36</sup>

Ըստ Վրաստանի 2014թ. մարդահամարի տվյալների՝ Վրաստանի 88 541 քաղաքացի բնակվում է արտերկրում (որոնցից 40 182-ը տղամարդիկ են, իսկ 48 359-ը՝ կանայք):

2015թ. Ուկրաինայի բոլոր քաղաքացիների 11.50%-ն ապրում էր իրենց ծագման երկրից դուրս:

2012թ.-ին Հայաստանի շուրջ 221 846 քաղաքացի բնակվում էր արտերկրում, որը կազմում է Հայաստանի ընդհանուր բնակչության 6.8%-ը: Ըստ Միգրացիոն քաղաքականության կենտրոնի՝ արտերկրում բնակվող հայաստանցիների թիվը գենդերային առումով հավասարակշռված է (տղամարդիկ՝ 47.5%, կանայք՝ 52.5%):<sup>37</sup>

Բելառուսի և Ադրբեջանի վերաբերյալ հավաստի տվյալներ չեն գտնվել:

## 6. Ազգային փոքրամասնություններ

Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ գենդերային տարանջատմամբ տեղեկատվություն չկա կամ, լինելու պարագայում, այդ ցուցանիշները համեմատաբար ցածր են: Ամենաբարձր ցուցանիշները Բելառուսում են, որտեղ բնակչության 8.3%-ը ռուս է, Մոլդովայում՝ 8.3%-ը ուկրաինացի, Վրաստանում՝ 4.5%-ը հայ, և Ադրբեջանում՝ 8.4%-ը հայ: Ուկրաինայում իրավիճակի մասին տեղեկություններ հայտնելը դժվար է, քանի որ վերջին մարդահամարն անցկացվել է 2001 թվականին: Որոշ երկրներ ունեն գնչու բնակչություն, սակայն նրանց մասին ճշգրիտ տվյալներ չեն հաղորդվում, քանի որ նրանք

35. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2006թ., հասանելի է այստեղ՝ <http://armstat.am/en/>:

36. Հասանելի է այստեղ՝ <http://md.one.un.org/content/unct/moldova/en/home/presscenter/stories/making-the-most-of-migration-in-moldova.html>:

37. Աղբյուրները՝ ազգային վիճակագրական տվյալներ (բնակչության մարդահամարներ, բնակչության գրանցամատյաններ, օտարերկրացիների համար գրանցամատյաններ և այլն)՝ [http://www.migrationpolicycentre.eu/docs/migration\\_profiles/Armenia.pdf](http://www.migrationpolicycentre.eu/docs/migration_profiles/Armenia.pdf)

հաճախ փաստաթղթեր չեն ունենում:

## 7. Սոցիալական մեդիա

Սոցիալական ցանցերի օգտագործման տեմպերն աճում են բոլոր երկրներում, սակայն դրանց օգտագործման առումով քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև զգալի տարբերություններ կան: Կա նաև սոցիալական ցանցերից օգտվողների էական տարիքային տարբերություն:

Հետազոտողները հայտնել են, որ, ընդհանուր առմամբ, սոցիալական մեդիան ընտրությունների ժամանակ դեռևս կարևոր դեր չի խաղացել:

Հայաստանի հետազոտողը հաղորդել է, որ սոցիալական ցանցերն արդյունավետորեն օգտագործվում են ընդդիմադիր կուսակցությունների կողմից, սակայն բնակչության մեծ մասի կողմից դրանք դեռևս չեն դիտվում որպես տեղեկատվության վստահելի աղբյուր, սակայն այս իրավիճակն աստիճանաբար փոխվում է:

Աղբբեջանում հարցազրույցի մասնակցած անձանցից երկուսը իրենց քարոզարշավներում օգտվել էին սոցիալական ցանցերից: Նրանցից մեկը սոցիալական ցանցերում հետևողներ էր ձեռք բերել՝ իր ուղերձը նրանց փոխանցելու համար, ինչպես նաև որպես իր քարոզարշավի մաս տեսանյութ էր վերբեռնել:

## Կարծրատիպեր և վերաբերմունք

### 1. Հարցազրույցներից ստացված տեղեկատվություն

Բոլոր հետազոտողները հաղորդել են կանանց դերի վերաբերյալ բացասական կարծրատիպային տեսակետների և պնդումների առկայության մասին, որը նրանց քաղաքական ներգրավվածության համար հիմնական խոչընդոտ է:

Հարցազրույցների ընթացքում կարծրատիպային վերաբերմունքի մասին նշվել է 53 հարցվածներից 21-ի կողմից՝ որպես քաղաքական գործընթացում իրենց մասնակցության հիմնական խոչընդոտ: Դրանց թվում էին այն թեկնածուները, ովքեր ընտրվել էին ազգային, օրենսդիր մակարդակում և տեղական կառավարման մակարդակում, ինչպես փոքր քաղաքներից ու գյուղերից, այնպես էլ խոշոր քաղաքներից, ինչպես նաև՝ ընտրություններում հաջողություն չունեցած թեկնածուները: Հարցման մեջ ընդգրկված էին խորհրդարանի նախկին անդամներ և կանայք՝ բոլոր ուսումնասիրվող երկրներից:

Որոշ մեջբերումներ շատ խոսուն են.

- ▶ «Երբ ես մեկնել էի, տղամարդիկ հանդիպում էին կազմակերպել, որի ժամանակ նրանցից մեկն ասել էր. «Մեր համայնքը չի կարող ղեկավարվել կնոջ կողմից, մենք պետք է համախմբվենք և աջակցենք տղամարդ թեկնածուի»: Հայաստան
- ▶ «Ես խնդրեցի իմ մրցակցին բանավիճել ինձ հետ, բայց նրա

պատասխանն այսպիսին էր. «Ես երբեք չեմ բանավիճում կամ որևէ բան քննարկում կնոջ հետ»: Յայաստան

- ▶ «Շատ քաղաքացիներն ինձ ասացին, որ վերադառնամ խոհանոց և սպասարկեմ իմ ամուսնուն»: Յայաստան
- ▶ «Իմ մրցակիցն ասաց ինձ. «Ի՞նչ կարող է անել կինը: Տղամարդիկ ավելի քաջատեղյակ են խնդիրներին ու ավելի լավ են լուծում դրանք»: Մոլդովա
- ▶ «Ես ստիպված էի հաղթահարել այն վերաբերմունքը, որ ընդունելի չէ, որ քաղաքը կառավարվի կնոջ կողմից»: Վրաստան
- ▶ «Շատ բամբասանքներ էին շրջանառվում, և ինձ ասում էին, որ գնամ խոհանոց ու բորշ եփեմ»: Ուկրաինա

Յարցագրույցի մասնակիցներից մեկին սա հետ էր պահել Լախընտրական քարոզչությունից.

- ▶ «Ես անհարմար էի գգում խոսել անծանոթ մարդկանց հետ, և տղամարդիկ ավելի հարգված են. ես չէի ուզում իմ հասցեին տհաճ խոսքեր լսել»: Յայաստան

Երիտասարդ կանայք հայտնել են, որ խտրականության են ենթարկվել իրենց տարիքի և սեռի պատճառով, իսկ խորհրդարանի երիտասարդ կին անդամներից մեկը նշել էր.

- ▶ «Խորհրդարանի աշխատակազմը ինձ չէր ճանաչում որպես պատգամավոր, քանի որ ես երիտասարդ կին եմ»: Ուկրաինա

Յարցագրույցների մասնակիցներից մի քանիսը նշել էին իրենց թեկնածության առաջադրման պատճառով իրենց ընտանիքների վրա գործադրվող լրացուցիչ ճնշումների մասին:

- ▶ «Իմ ընտանիքի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել էր, սակայն տղամարդկանց դեպքում այդպես չէր»: Վրաստան

Նույնիսկ ընտրվելուց հետո նրանցից մի քանիսը նշել են, որ ստիպված էին լրացուցիչ ջանքեր գործադրել՝ իրենց տեսակետները տեղ հասցնելու համար:

- ▶ «Ես պետք է երկար մտածեմ մի բան ասելուց առաջ, քանի որ ինչ-որ մեկն անպայման ինձ կընդհատի»: Վրաստան
- ▶ «Տղամարդիկ քեզ հետ չեն խոսում այնպես, ինչպես խոսում են այլ տղամարդկանց հետ»: Ուկրաինա
- ▶ «Շատ անգամ տղամարդիկ հանդիպումներ են անցկացնում և որոշումներ ընդունում, սակայն ինձ չեն հրավիրում»: Ուկրաինա

Յարցագրույցի մասնակիցներից մեկը նշել էր, որ կարևոր է հաղթահարել այն կանանց մասին կարծրատիպերը, ովքեր քաղաքական պաշտոն են ստանձնում:

- ▶ «Կանայք չեն աջակցում միմյանց, նրանք իրենց համարում են «բացառիկ»՝ «արտակարգ» հմտություններով կամ հաջողակ. մենք պետք է հաղթահարենք նման ընկալումը և համերաշխությամբ գործենք միմյանց հետ»: Մոլդովա

Այնուամենայնիվ, նման վերաբերմունքի փոփոխման վերաբերյալ որոշակի փաստեր կան: Յարցագրույցի մասնակիցներից մեկը նշել է.



- ▶ «Երբ ես առաջին անգամ ընտրություններում որպես թեկնածու առաջադրվեցի, շատ մեկնաբանություններ էին հնչում այն մասին, թե ինչպես ես կին լինելու պատճառով անկարող եմ ղեկավարել: Երբ երկրորդ անգամ առաջադրվեցի, հարցադրումներն արդեն իմ ձեռքբերումների և ծրագրի մասին էին»: Վրաստան

## 2. Վերաբերմունքի հետազոտություններ

Ուսումնասիրվող բոլոր երկրներում, բացառությամբ Ադրբեջանի, կանանց նկատմամբ վերաբերմունքի հետազոտություններ էին անցկացվել: Որոշ դեպքերում կան փաստեր, որոնք վկայում են, որ հասարակության մեջ կանանց նկատմամբ վերաբերմունքը հարցվածների շրջանում փոխվում է և նախորդում է քաղաքական գործիչների կողմից քաղաքականության մշակմանը:

### Հայաստան

2015թ. «Հայաստանի գենդերային բարոմետր»<sup>38</sup> հետազոտության արդյունքում պարզվել է, որ հարցվածների 60%-ը գտնում է, որ տղամարդիկ և կանայք հավասար չեն հայ հասարակության մեջ: 55%-ը կարծում է, դա պայմանավորված է հասարակության մեջ կանանց իրավունքների մասին իրազեկվածության ցածր մակարդակով:

Տղամարդիկ ավելի շատ են հետաքրքրվում քաղաքականությամբ, քան կանայք, բայց վերջին ընտրություններում ավելի մեծ թվով կանայք են քվեարկել:

### Բելառուս

2010թ. սոցիալ-տնտեսական և քաղաքական հետազոտությունների անկախ ինստիտուտը (HSEPS) անցկացրել էր հարցում՝ քաղաքականության մեջ կանանց մասնակցության հանդեպ բելառուսների վերաբերմունքի մասին: Արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 55.6%-ը դեմ է, որ կանայք նախագահի թեկնածու առաջադրվեն, սակայն ավելի երիտասարդ և ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող անձինք առավել հակված են եղել աջակցելու նախագահի կին թեկնածուին:<sup>39</sup>

2011թ.-ին Համաշխարհային արժեքների հետազոտությունը պարզեց, որ տղամարդկանց 76.1%-ը և կանանց 55.9%-ը գտնում են, որ տղամարդիկ ավելի լավ քաղաքական առաջնորդներ են, քան կանայք:

2014թ.-ին HSEPS-ի կողմից անցկացված մեկ այլ հետազոտու-

38. Հասանելի է այստեղ՝ [www.ysu.am/files/Gender%20Barometer.Armenia.English.pdf](http://www.ysu.am/files/Gender%20Barometer.Armenia.English.pdf):

39. Հասանելի է այստեղ՝ [www.iiseeps.org](http://www.iiseeps.org):



թյան ժամանակ<sup>40</sup> հարցվողներին խնդրեցին կարծիք հայտնել այն մասին, թե արդյոք կանանց թիվը խորհրդարանում բավարար է: Արդյունքում պարզվեց, որ 27.2%-ը գոհ էր իրավիճակից, իսկ 8%-ը գտնում էր, որ անհրաժեշտ է կանանց թիվն ավելացնելու համար օրենք ընդունել:

## Վրաստան

«Գենդերային հարցերի հանդեպ վերաբերմունքը Վրաստանում 2014թ.»<sup>41</sup> կովկասյան բարոմետրը պարզեց, որ ընտանեկան պարտականությունները դիտվում են որպես քաղաքականության մեջ կանանց ներգրավման համար մեծագույն խոչընդոտներ. նման կարծիք է հայտնել հարցվածների 28%-ը:

Ի պատասխան այն հարցին, «թե արդյոք Վրաստանում կանայք որոշումների կայացման հարցում զիջում են տղամարդկանց», հարցվածների 74%-ը տվել է «Լիովին համաձայն եմ» կամ «Չամաձայն եմ» պատասխան:

51%-ը համաձայնել է կամ լիովին համաձայնել է այն բանին, որ քաղաքականության մեջ կանանց ներգրավմանը խոչընդոտում են տղամարդիկ:

39%-ը կարծիք է հայտնել, որ քաղաքական գործիչները չափազանց քիչ են անդրադառնում կանանց իրավունքներին, 37%-ը՝ գրեթե բավարար, իսկ 2%-ը՝ չափազանց շատ:

Չարցվածների 64%-ը կողմ է, որ Վրաստանը խորհրդարանում պարտադիր քվտաներ ընդունվեն՝ կանանց մասնակցությունն ավելացնելու նպատակով:

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի «Չանրային վերաբերմունքը Վրաստանում» հետազոտությունը, որն անցկացվել էր 2014թ.,<sup>42</sup> պարզել է, որ հարցվածների 68%-ը համաձայն է կանանց մասնակցությունն ավելացնելու նպատակով խորհրդարանում պարտադիր քվտաների ներմուծմանը:

## Մոլդովա

Որպես առաջնորդ և ընտրված ներկայացուցիչ՝ կնոջ դերի հանդեպ վերաբերմունքը աստիճանաբար փոխվում է: «Մոլդովայի գենդերային բարոմետրը» 2006թ.<sup>43</sup> պարզեց, որ հարցվածների 50% գտնում է, որ տղամարդիկ ավելի ընդունակ առաջնորդներ են, քան կանայք: 2014թ. դրությամբ այդ ցուցանիշը իջել էր 20%-ի:

Ի պատասխան այն հարցին, թե ում էին նախընտրում տեղական խորհուրդներում ընտրվելու համար, տղամարդկանց նախընտրող-

40. Չասանելի է այստեղ՝ [www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV6.jsp](http://www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV6.jsp):

41. Չասանելի է այստեղ՝ <http://caucasusbarometer.org/en/no2014ge/HHASIZE/>:

42. Չասանելի է այստեղ՝ [https://www.ndi.org/files/NDI%20Georgia\\_October%202014\\_-\\_Gender%20poll\\_Public%20ENG\\_Final\\_0.pdf](https://www.ndi.org/files/NDI%20Georgia_October%202014_-_Gender%20poll_Public%20ENG_Final_0.pdf):

43. «Գենդերային բարոմետր. Մոլդովայում հանրային կարծիքի հետազոտություն», Քիշնևի պետական քաղաքականության մոլդովական ինստիտուտ՝ <http://www.ipp.md/lib.php?l=en&idc=156>:

ների տոկոսային հարաբերությունը 2006թ. 28.6%-ից 2015թ. այս թիվը նվազել է մինչև 22,1%, իսկ կանանց դեպքում այն բարձրացել է 2006թ. 8.6%-ից մինչև 14.8%՝ 2015թ.: 2015թ. հարցվածների 62.3%-ը պատասխանել էր, որ սեռը նշանակություն չունի:

## Ուկրաինա

2015թ. Ազգային ժողովրդավարական ինստիտուտը հետազոտություն անցկացրեց<sup>44</sup> դիտարկելով կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ վերաբերմունքը Ուկրաինայում՝ ուշադրությունը սևեռելով 2015թ. հոկտեմբերի տեղական ընտրությունների վրա:

Այն հարցին, թե որոնք են պատճառները, որ քաղաքականության մեջ կանանց թիվն ավելի քիչ է քան տղամարդկանց, հարցվածների 76%-ը համաձայնել էր, որ դրա պատճառն այն է, որ քաղաքական կուսակցություններն ավելի հակված են առաջադրելու տղամարդ, քան կին թեկնածուների, հարցվածների 60%-ը չէր համաձայնել, որ ընտրովի պաշտոնի համար որակավորում ունեցող կանանց թիվը բավարար չէ: Թեկնածուների սեռական պատկանելությունը կարևոր էր միայն հարցվածների 4%-ի համար, իսկ ամենակարևոր խնդիրը համարվել էր թեկնածուի ազնվությունը:

Գրեթե բոլոր պատասխանողները նշել էին, որ որևէ բացասական վերաբերմունք չունեն կին թեկնածուների նկատմամբ: Այդ փաստը ստուգվեց՝ միևնույն տվյալներով տղամարդ կամ կին թեկնածուների պատահական ընտրված նկարներ ցույց տալով և հարցնելով, թե որքան հավանական է, որ նրանք քվեարկեն տվյալ անձի օգտին: Կանանց կամ տղամարդկանց նկարների գնահատման առումով երկու տարբերություններ չնկատվեցին:

## 3. Լրատվամիջոցներ

Չարցագրույցների մասնակիցների մեծ մասը քարոզարշավների ընթացքում չէր առնչվել լրատվամիջոցների հետ: Այդուհանդերձ, հարցագրույցներին մասնակցած որոշ կանայք, ովքեր մի քանի մանդատ ունեին, գտնում էին, որ իրենք լավ հարաբերություններ են հաստատել լրատվամիջոցների հետ:

Միևնույն ժամանակ, հարցված կանայք նաև հայտնել էին զանգվածային լրատվամիջոցների հետ իրենց համագործակցության ժամանակ հանդիպած մի շարք դժվարությունների և ոչ արդյունավետ փորձի մասին:

- ▶ Նրանք իրենց մրցակցությունից դուրս էին զգացել, քանի որ միջոցներ չէին ունեցել՝ լրատվամիջոցներին լուսաբանման դիմաց վճարելու համար:
- ▶ Նրանք այնպիսի զգացողություն ունեին, որ լրատվամիջոցներին տեղական ընտրությունները չէին հետաքրքրում:

44. Հասանելի է այստեղ՝ [www.ndi.org/ukraine-gender-research-2016](http://www.ndi.org/ukraine-gender-research-2016):

- ▶ Նրանց հարցեր էին ուղղել իրենց ընտանեկան հանգամանքների մասին. նրանց կարծիքով այսպիսի հարցեր չէին ուղղվում տղամարդ թեկնածուներին:
- ▶ Լինելով կին՝ նրանք նաև դժվարությունների էին հանդիպել պաշտոնի առաջադրվելու համար:

Հայաստանի հետազոտողը եզրակացրել էր, որ կարծիք կա այն մասին, որ կանայք կուսակցությունների կողմից օգտագործվում են հեռուստատեսությամբ ելույթ ունենալու համար, երբ կա որևէ բացասական բնույթի ուղերձ փոխանցելու անհրաժեշտություն:

Քիչ թվով փաստեր կան, որոնք վկայում են, որ ուսումնասիրվող երկրներից որևէ մեկում լրատվամիջոցները դրական դեր են խաղացել կանանց նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքին մարտահրավեր նետելու առումով:

### **Արդյունքների ամփոփում**

- ▶ Հասարակության շրջանում կանանց դերի նկատմամբ կան խոր արմատներ ունեցող և գերիշխող կարծրատիպային տեսակետներ և մշակույթով պայմանավորված վերաբերմունք: ակնկալվում է, որ կանայք պետք է հոգ տանեն տան ու ընտանիքի մասին, իսկ տղամարդիկ դիտարկվում են որպես որոշում կայացնողներ և ընտանիքը կերակրողներ: Այդ իսկ պատճառով կանայք հաճախ իրենց չեն պատկերացնում որպես քաղաքական պաշտոնի հավանական թեկնածուներ. սա ազդում է նաև նրանց որպես թեկնածու ընտրողների և նրանց օգտին քվեարկողների տեսակետների վրա:
- ▶ Տեստական կյանքում կանայք ոչ շահեկան վիճակում են: Նրանք ավելի քիչ են ներգրավված աշխատաշուկայում, քան տղամարդիկ: Աշխատաշուկայում կանանց ներգրավվածության տեմպերն ընկել են բոլոր ուսումնասիրվող երկրներում, բացի Ադրբեջանից:
- ▶ Կանայք եկամտի ավելի ցածր մակարդակ ունեն, քան տղամարդիկ, որը չափվում է գնահատված համախառն ազգային արդյունքի միջոցով: Ընդհանուր առմամբ, կանանց և տղամարդկանց եկամտի միջև տարբերությունն ավելի մեծ է ուսումնասիրվող երկրներում, քան այն եվրոպական երկրներում, որոնք ունեն խորհրդարանում կանանց ներգրավվածության ամենաբարձր մակարդակները:
- ▶ Կանայք աշխատատեղում ենթարկվում են գենդերային խտրականության՝ աշխատելով հիմնականում հանրային ծառայությունների ոլորտում, ինչպիսիք են՝ կրթությունը և առողջապահությունը, որոնք ավելի ցածր են վարձատրվում:
- ▶ Չնայած կանանց բարձրագույն կրթություն ունենալու հավանականությունն ավելի մեծ է, քան տղամարդկանց, սակայն նրանք կենտրոնական կառավարման մարմիններում միևնույն համամասնությամբ պաշտոններ չեն ստանձնում:

- ▶ Հայաստանում և Բելառուսում չկան կանանց նկատմամբ բռնությունն արգելող առանձին օրենքներ: Իսկ այն երկրներում, որտեղ այդպիսի օրենքները գործում են, բռնության զոհ դարձած կանանց շատ քիչ մասն է պատրաստակամ հայտնելու դրա մասին, իսկ քրեական արդարադատության մարմինների կողմից փոքրաթիվ գործեր են քննվում կամ քրեորեն հետապնդվում:
- ▶ Որոշ երկրներում, օրինակ՝ Մոլդովայում, Վրաստանում և Ուկրաինայում, կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ-ները կանանց քաղաքական ներկայացվածությունը բարձրացնելու նպատակով սերտորեն աշխատում են քաղաքական գործիչների հետ՝ քվտաների ու դրական միջոցների ներդրման նպատակով՝ այդ ուղղությամբ իրականացնելով լրբիստական գործունեություն:
- ▶ Լրատվամիջոցների նոր տեսակները աստիճանաբար քաղաքացիների համար տեղեկատվության աղբյուր են դառնում, և դրանցից սկսում են օգտվել քաղաքական գործիչները:
- ▶ Ներքին տեղահանված անձանց, ազգային փոքրամասնությունների և արտերկրում ապրող քաղաքացիների մասին գեղեցիկին տարանջատմամբ տեղեկատվությունը հասանելի չէ:
- ▶ Ուսումնասիրության ընթացքում հարցազրույցներին մասնակցած կանայք և հետազոտողները նշել են, որ առավել հաճախ կարծրատիպային վերաբերմունքը և գերիշխող մշակութային համոզմունքներն են հանդիսանում հիմնական խոչընդոտ՝ կանխելով կանանց ներգրավվածությունը քաղաքական կյանքում:
- ▶ Կարծրատիպային վերաբերմունքը դրսևորվում է ոչ միայն ընտրողների կարծիքներում, այլ հաճախ նաև քաղաքական մրցակիցների և նույնիսկ քաղաքական գործընկերների տեսակետներում:
- ▶ Կան վերաբերմունքի փոփոխման հարցում առաջընթացի դրական նշաններ, որոնք ստացվել են տարբեր երկրներում անցկացված հետազոտությունների ժամանակ: Կանանց վերաբերյալ այն կարծիքը, որ նրանք չեն կարող որոշումներ կայացնել և, հետևաբար, հարմար չեն քաղաքական պաշտոն զբաղեցնելու համար, աստիճանաբար փոխվում է: Երիտասարդներն ամենաքիչն են հակված կարծելու, որ կանայք չեն կարող քաղաքական գործիչներ լինել, և նրանք անխուսափելիորեն կազմում են ընտրագանգվածի մեծամասնությունը:
- ▶ Ուկրաինայում Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հետազոտությունը ցույց է տալիս, որ ընտրողներին ավելի շատ հետաքրքրում են անհատի հատկությունները, նրա քաղաքական հայացքներն ու որակավորումները, քան սեռային պատկանելությունը:
- ▶ Փոքրաթիվ են այն փաստերը, որոնց համաձայն ուսումնա-

սիրվող երկրների լրատվամիջոցները դրական դեր են խաղացել կանանց նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքը փոխելու հարցում:

## Բ. ԶԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

### Քաղաքական համակարգեր

**Հայաստանը** հանրապետություն է: Նախագահը պետության գլուխն է և ընտրվում է ուղիղ ժողովրդական ընտրության միջոցով: Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով: 41 պատգամավոր ընտրվում է միամանդատ ընտրատարածքներից, իսկ 90-ը՝ համամասնական ընտրակարգով:

**Ադրբեջանն** ունի նախագահական քաղաքական համակարգ: Նախագահը պետության գլուխն է և ընտրվում է ուղղակիորեն՝ հինգ տարի ժամկետով: Վարչապետը, կառավարության նախարարները և կենտրոնական գործադիր մարմինների ղեկավարները նշանակվում են նախագահի և հաստատվում Ազգային ժողովի կողմից: Ազգային ժողովը բաղկացած է 125 մանդատներից, որոնք ուղղակիորեն ընտրվում են մեծամասնական ընտրակարգով:

**Բելառուսը** նախագահական հանրապետություն է, որն ունի ուղղակիորեն ընտրվող պետության ղեկավար: Ազգային ժողովը բաղկացած է 110 պատգամավորից՝ ներկայացուցիչների պալատում, և 64 պատգամավորից՝ ստորին պալատում: Վարչապետի և նրա հինգ տեղակալների կողմից գլխավորվող Նախարարների խորհուրդը և այլ՝ ոչ ընտրովի պաշտոններին նշանակվում են նախագահի կողմից:

**Վրաստանը** ժողովրդավարական հանրապետություն է: Նախագահն ընտրվում է ուղղակիորեն՝ ժողովրդական ընտրությունների միջոցով: Խորհրդարանը բաղկացած է 150 անդամից: 77 պատգամավոր ընտրվում են կուսակցական ցուցակներով, իսկ 73-ը՝ մեծամասնական ընտրակարգով:

**Մոլդովան** խորհրդարանական ներկայացուցչական ժողովրդավարական հանրապետություն է: Խորհրդարանը գերագույն մարմինն է: Այն բաղկացած է 101 պատգամավորից, որոնք համամասնական կարգով ընտրվում են կուսակցական ցուցակներից: Ըստ Մոլդովայի Սահմանադրական դատարանի վերջին որոշման<sup>45</sup> առաջիկայում սպասվում է, որ նախագահն այսուհետ կընտրվի ուղղակիորեն քաղաքացիների կողմից: Տասնվեց տարիների ընթացքում առաջին ուղղակի ընտրությունները տեղի կունենան 2016թ. հոկտեմբերի 30-ին:

**Ուկրաինան** ունի խորհրդարանական նախագահական համակարգ: Նախագահն ընտրվում է ուղղակիորեն: Եթե ոչ մի թեկնածու չի ստանում 50%-ից ավելին քվեների առաջին փուլում, ապա առաջին տեղն զբաղեցրած երկու թեկնածուները մրցում են երկրորդ փուլում: Խորհրդարանն ունի 450 անդամ, որոնք ընտրվում են համամասնական ընտրակարգով կուսակցական ցուցակների և միամանդատ

45. Հասանելի է այստեղ՝ [www.constcourt.md](http://www.constcourt.md):

ընտրատարածքների խառը համակարգի միջոցով:

### **Քաղաքական կուսակցություններ**

Ուսումնասիրության այս բաժնում դիտարկվում են կոնկրետ կուսակցությունների ներքին կուսակցական կառուցվածքները և, մասնավորապես, թե արդյոք կանայք ներկայացված են որոշում կայացնող մարմիններում կամ այնպիսի կազմակերպություններում, որոնք ազդում են քաղաքականության մշակման վրա, և թե արդյոք կան կուսակցությունների կողմից ընդունված առանձին միջոցներ, և եթե այո, ապա արդյոք դրանք հանգեցրել են կին թեկնածուների և ընտրված ներկայացուցիչների թվի ավելացմանը, թե՛ ընդհակառակը:

Բոլոր հայեցակետերի վերաբերյալ և բոլոր երկրներից տեղեկատվություն չի ստացվել:

### **Վերջին ընտրություններում ներգրավված կուսակցություններ**

**Աղյուսակ 12. Օրենսդիր մարմնի վերջին ընտրություններին մասնակցած քաղաքական կուսակցությունների թիվը և տեսակը**

Երկիրը	Քաղաքական կուսակցությունները
Հայաստան	Վերջին ընտրություններին մասնակցելու համար գրանցվել էր 9 կուսակցություն
Ադրբեջան	11 կուսակցություն (3 ընդդիմադիր կուսակցական բյուրո կանչեց իր թեկնածուներին՝ նախքան ընտրությունը)
Բելառուս	8 կուսակցություն (գրանցած 15 կուսակցությունից)
Վրաստան	16 (15 կուսակցություն և 1 կուսակցական բյուրո)
Մոլդովա	20 կուսակցություն (միայն 5-ը անցան ընտրական շեմը)
Ուկրաինա	52

**Աղյուսակ 13. Տեղական ինքնակառավարման մարմինների վերջին ընտրություններին մասնակցած քաղաքական կուսակցությունների թիվը և տեսակը**

Երկիրը	Քաղաքական կուսակցությունները
Հայաստան	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են ինքնաառաջադրմամբ, թեկնածուներից չի պահանջվում տեղեկացնել իրենց կուսակցությանը, բայց թեկնածուների մեծ մասը պատկանում է 5 խոշոր կուսակցությունների:

Երկիրը	Քաղաքական կուսակցությունները
Ադրբեջան	30 կուսակցություն, տեղական մակարդակում ընտրվածների 74%-ն ունի կուսակցական պատկանելություն, բայց դրանց միայն 59%-ն է առաջադրվել 8 քաղաքական կուսակցությունների կողմից:
Բելառուս	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցող թեկնածուները չեն առաջադրվում քաղաքական կուսակցությունների կողմից, թեև մի մասը դրանց անդամ է:
Վրաստան	24 ընտրական սուբյեկտ
Մոլդովա	43 համապատասխանող, մասնակցել է 21 կուսակցություն և մեկ բլոկ, և միայն 9 կուսակցություն և 1 բլոկ ունեցան առնվազն մեկ համայնքի ընտրված ղեկավար
Ուկրաինա	142

## Կուսակցության ներքին կառուցվածք

Նկատելի ղեկավար դիրքեր զբաղեցնող կանանց օրինակը քաջալերում է այլ կանանց ակտիվորեն ներգրավվելու քաղաքական կուսակցություններում և կուսակցության քաղաքականության վրա ունենալու ազդեցություն:

**Աղյուսակ 14. Կանայք ղեկավար դիրքերում՝ որպես կուսակցության առաջնորդ կամ տեղակալ (օրենսդիր մարմնում ներկայացված առավելագույնը 5 քաղաքական կուսակցություն)**

Երկիրը	Կանայք ղեկավար դիրքերում
Հայաստան	«Բարգավաճ Հայաստան»՝ կուսակցության ղեկավար «Օրինաց երկիր»՝ կուսակցության ղեկավարի տեղակալ
Ադրբեջան	Կնոջ կողմից ղեկավարվող կուսակցություն չկա: Առաջին տիկինը Նախագահի կողմից գլխավորվող «Նոր Ադրբեջան» կուսակցության փոխնախագահն է:

Երկիրը	Կանայք ղեկավար դիրքերում
Բելառուս	Չկան:
Վրաստան	«Վրացական երազանք» բլոկի անդամ, Հանրապետական կուսակցությունն ունի կին առաջնորդ:
Մոլդովա	5 կին տեղակալներ՝ ընդհանուր 29-ից:
Ուկրաինա	«Հայրենիք» կուսակցության մեկ կուսակցական առաջնորդ:

**Աղյուսակ 15. Կանայք կուսակցության բարձրագույն գործադիր մարմնում**

Երկիրը	Բարձրագույն գործադիր մարմնում կանանց տոկոսային հարաբերությունը
Հայաստան	5-10%
Ադրբեջան	40%՝ Ադրբեջանի ժողովրդավարական բարեփոխումների կուսակցություն, 15%՝ «Նոր Ադրբեջան» կուսակցություն, 10%՝ «Միասնական Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցությունում:
Բելառուս	Տեղեկություններ չկան
Վրաստան	16%՝ «Միացյալ ազգային շարժում», 1 կին՝ «Վրացական երազանք» բլոկում, 33%՝ Հանրապետական կուսակցությունում
Մոլդովա	Մինչև 10%
Ուկրաինա	12%՝ «Համերաշխություն» կուսակցական բլոկում, 30%՝ Ժողովրդական ճակատում, 15%՝ «Հայրենիք» կուսակցությունում:



**Աղյուսակ 16. Կուսակցության կանոնները բարձրագույն գործադիր մարմնում կանանց մասնակցության վերաբերյալ, օրինակ՝ կանանց համար սահմանված տեղեր**

Երկիրը	Կանոնը
Հայաստան	Չկա
Ադրբեջան	Առաջատար կուսակցություններից ոչ մեկը չունի այդպիսի կանոն: Միայն մեկ կուսակցություն, որը դադարեցրել էր իր մասնակցությունը ընտրություններին, ունի կանանց համար նախատեսված 25% քվոտա՝ բոլոր ղեկավար մարմիններում:
Բելառուս	Չկա
Վրաստան	Հանրապետական կուսակցությունը հայտարարել է, որ աջակցում է կուսակցության ներսում գենդերային քվոտաներին, սակայն դա իրականացնելու համար որևէ ընթացակարգ չկա:
Մոլդովա	Այո, հիմնականում «Կուսակցական կանանց խմբերի» նախագահը:
Ուկրաինա	Չկա

Հետազոտության մեջ ներառված կուսակցություններում կին առաջնորդների և տեղակալների թիվը ցածր է:

Չնայած այս ցածր ցուցանիշներին՝ քիչ կուսակցություններ ունեն հատուկ ընթացակարգեր՝ ուղղված կանանց ներգրավվածությունը մեծացնելուն: Վրաստանում Հանրապետական կուսակցությունն ունի համապատասխան քաղաքականություն, սակայն այն դեռևս պետք է գործնականում իրականացվի, իսկ Մոլդովայում «Կուսակցական կանանց խմբերի» նախագահը սովորաբար ընդգրկվում է գործադիր մարմիններում:

**Աղյուսակ 17. Կանանց ենթախմբերը և նրանց հատուկ իրավունքները**

Երկիրը	Կանանց ենթախմբերը	Առանձին դերեր կամ իրավունքներ
<b>Հայաստան</b>	Այո, բոլոր կուսակցություններն ունեն կանանց ենթախմբեր:	Ազդեցություն չունեն կուսակցության ղեկավարման վրա կամ ներգրավված չեն կուսակցության քաղաքականության պլանավորման մեջ:
<b>Ադրբեջան</b>	Բոլոր կուսակցություններն ունեն կանանց խորհուրդներ կամ կանանց բաժիններ:	Կարող են պատվիրակներ ուղարկել կուսակցության համաժողովին:
<b>Բելառուս</b>	Չկան:	Կիրառելի չէ:
<b>Վրաստան</b>	Միացյալ ազգային շարժումն ունի կանանց թև: Հանրապետական կուսակցությունը պլանավորում է ունենալ:	Առանձին սահմանված իրավունքներ չունեն:
<b>Մոլդովա</b>	Այո, որպես կանոն, քաղաքական կուսակցություններում ընդգրկված կանանց կազմակերպությունները շատ քիչ լիազորություններ ունեն:	Բարձրագույն գործադիր մարմնում ունեն իրենց համար վերապահված տեղեր:
<b>Ուկրաինա</b>	Չկան:	Կիրառելի չէ:

Կանանց կազմակերպությունների գոյության դեպքերում քաղաքականության ձևավորման հարցում դրանք շատ լիազորություններ կամ ազդեցություն չունեն:

## Թեկնածուների ընտրություն

Քաղաքական կուսակցություններն ընտրում են թեկնածուներին՝ իրենց անունից առաջադրվելու համար, և դրանք կարող են խրախուսել կոնկրետ անհատների՝ առաջադրելու իրենց թեկնածությունը: Եթե նույնիսկ գոյություն չունեն կանանց քվոտաների մասին օրենսդրական նորմեր, որոնց հիման վրա կանայք պետք է ընդգրկվեն թեկնածուների ցուցակներում կամ չկան ֆինանսական խթաններ՝ թեկնածություն առաջադրելիս ավելի շատ կանանց խրախուսելու համար (տե՛ս ստորև՝ հաջորդ բաժնում), քաղաքական կուսակցությունները կարող են կամավոր ընթացակարգեր սահմանել՝ ավելի շատ կին թեկնածուների խրախուսելու և ընտրություններում նրանց հաղթանակին նպաստելու համար:



## 1. Օրենսդիր մարմնի ընտրություններ

**Աղյուսակ 18. Թեկնածուների ընտրության ժամանակ կանանց ներկայացվածությունն ապահովող հատուկ միջոցառումներ (օրինակ՝ նվազագույն թվով կին թեկնածուների պահանջ կամ կանայք՝ ցուցակի առաջին տեղերում) և օրենսդիր մարմնի վերջին ընտրություններում կին թեկնածուների տոկոսային հարաբերությունը**

Երկիրը	Ստորագրում	Վավերացում	Կիրառում
<b>Հայաստան</b>	Օրենսդրական քվտա (տե՛ս ստորև)	«Բարգավաճ Հայաստան»՝ 17% «Ժառանգություն»՝ 18% «Հայ ազգային կոնգրես»՝ 19% «Հայ հեղափոխական դաշնակցություն»՝ 17% «Հայաստանի ժողովրդավարական կուսակցություն»՝ 20% «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»՝ 20% «Հայաստանի հանրապետական կուսակցություն»՝ 16% «Միացյալ հայեր» կուսակցություն՝ 21% «Օրինաց երկիր»՝ 18%	Տեղեկություններ չկան
<b>Ադրբեջան</b>	Չկան	«Նոր Ադրբեջան» կուսակցություն՝ 20% «Քաղաքացիական համերաշխություն» կուսակցություն՝ 12% «Միասնական Ադրբեջանի ժողովրդական ճակատ»՝ 23% «Ադրբեջանի ժողովրդավարական բարեփոխումներ»՝ 15% «Ազգային վերածննդի շարժում» կուսակցություն՝ 6%	«Նոր Ադրբեջան» քաղաքացիական համերաշխություն՝ 0% «Միասնական Ադրբեջանի ժողովրդական ճակատ»՝ 0% «Ադրբեջանի ժողովրդավարական բարեփոխումներ»՝ 0% «Ազգային վերածննդի շարժում»՝ 0%
<b>Բելառուս</b>	Չկան	Սկսած 0.2%-ից՝ «Բելառուսի Սոցիալական սպորտային կուսակցությունում», մինչև 16%՝ «Լիբերալ դեմոկրատական կուսակցությունում»	Տեղեկություններ չկան
<b>Վրաստան</b>	Հանրապետական կուսակցությունը հայտարարել է իր աջակցությունը՝ համամասնական կուսակցական ցուցակի առջևում կանանց համար 30%-ի ապահովմանը:	Երկու առաջատար կուսակցություններն իրենց համամասնական կուսակցական ցուցակներում ունեցան կանանց հատկացված ամենափոքր թիվը. «Միացյալ ազգային շարժում»՝ 3 տեղ՝ նախատեսված առաջին 10-ի դիմաց, «Միացյալ ազգային շարժում»՝ 3՝ նախատեսառաջին 10-ի դիմաց, «Վրացական երազանք» բլոկ՝ մեկ կին նախատեսված առաջին 10-ի դիմաց	«Միացյալ ազգային շարժում»՝ 11% «Վրացական երազանք» կուսակցական բլոկ՝ 13%

Երկիրը	Ստորագրում	Վավերացում	Կիրառում
Մոլդովա	«Ժողովրդավարական կուսակցությունը», «Լիբերալ դեմոկրատական կուսակցություն», «Լիբերալ կուսակցությունը» և «Մեր կուսակցությունը» ներկայացրել են նվազագույնը 30% քվոտա	30%	«Լիբերալ կուսակցությունը»՝ 13% «Ժողովրդավարական կուսակցությունը»՝ 21% «Լիբերալ դեմոկրատական կուսակցությունը»՝ 17% «Կոմունիստական կուսակցությունը»՝ 33% «Սոցիալիստների կուսակցությունը»՝ 20%
Ուկրաինա	Չկան	«Չամերաշխություն» բլոկ՝ 24% «Ժողովրդական ճակատ»՝ 19% «Չայրենիք» կուսակցություն՝ 29% «Սամոպոմիչ»՝ 34% «Ռադիկալ կուսակցություն»՝ 14%	«Չամերաշխություն» բլոկ՝ 12%, «Ժողովրդական ճակատ»՝ 15%, «Չայրենիք» կուսակցություն՝ 26%, «Սամոպոմիչ»՝ 31%, «Ռադիկալ կուսակցություն»՝ 14%

Գոյություն չունի հստակ կապ կին թեկնածուների տոկոսի և ընտրված կանանց միջև, քանի որ հաճախ ավելի փոքր կուսակցություններ են համապատասխան քաղաքականություն ընդունել կամ ինչպես Մոլդովայի դեպքում է՝ ցանկացել են լրացուցիչ ֆինանսական խթաններ ձեռք բերել, որոնք տրամադրվում են կամավոր քվոտա սահմանող կուսակցություններին: Նմանապես, Վրաստանում ֆինանսական խթանների առկայությունը չի հանգեցրել ավելի շատ կանանց որպես թեկնածու ընտրվելուն կամ ընտրություններում հաղթանակ տանելուն:

## 2. Տարածքային կառավարման (տեղական ինքնակառավարման մակարդակի) ընտրություններ

Չետագոտողների կողմից ուսումնասիրված կուսակցությունները նաև թեկնածուներ են առաջադրում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Բացառություն են կազմում Չայաստանը, որտեղ թեկնածուները չեն առաջադրվում կուսակցությունների կողմից, սակայն նրանց մեծ մասը կուսակցության անդամներ են, և Բելառուսը, որտեղ քաղաքական կուսակցությունները առաջադրում են թեկնածուներ, որպեսզի նրանք խոսեն բնակչության հետ քարոզարշավի ընթացքում, սակայն հետ են կանչում նրանց, քանի որ համոզված չեն, որ ընտրությունները «արդար են»:

Ուսումնասիրվող երկրների կուսակցությունները չունեն որոշակի կանոններ կամ նորմեր կանանց ներկայացվածության վերաբերյալ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին

իրենց թեկնածուների ընտրության համար: Բացառություն է կազմում Մոլդովան, որտեղ երեք կուսակցություններ ներդրել են կամավոր 30% քվտա (տե՛ս վերևում՝ Աղյուսակ 18-ը), սակայն այն չի կիրառվում տեղական մակարդակում:

**Աղյուսակ 19. Տարածքային կառավարման մակարդակում կանանց զբաղեցրած կուսակցական պաշտոնները**

Երկիրը	Կանոնը
Հայաստան	Տվյալներ չկան:
Ադրբեջան	«Նոր Ադրբեջան» կուսակցություն՝ 40%, «Քաղաքացիական համերաշխություն» կուսակցություն՝ 20%, «Միասնական Ադրբեջանի ժողովրդական ճակատ»՝ կուսակցություն՝ 0% «Ադրբեջանի ժողովրդավարական բարեփոխումներ» կուսակցություն՝ տվյալներ չկան, «Ազգային վերածննդի շարժում»՝ տվյալներ չկան:
Բելառուս	Տվյալներ չկան:
Վրաստան	Տվյալներ չկան:
Մոլդովա	Տվյալներ չկան:
Ուկրաինա	Տարածքային մակարդակ՝ «Համերաշխություն» բլոկ՝ 9%, «Հայրենիք» կուսակցություն՝ 13%, «Սամոպոմիշ»՝ 29%:

**Կուսակցական քաղաքականություն՝ կանանց հարցերի վերաբերյալ**

Կանայք ավելի մեծ ցանկություն կունենան ներգրավվելու քաղաքականության մեջ, եթե նրանք զգան, որ իրենց խնդիրներն ու մտահոգությունները հասցեագրում են ստանում կամ կարևորվում են: Չնայած այդ հարցերի մի մասն ընդգրկված է կուսակցությունների հրովարտականերում կամ ծրագրերում, սակայն դրանք, ըստ էության, կարևոր տեղ չեն զբաղեցնում ընտրողներին ուղղված կուսակցության կոչերում:

**Աղյուսակ 20. Կանանց վերաբերյալ կուսակցական քաղաքականությունը վերջին ընտրությունների ընթացքում**

Արդյո՞ք կուսակցությունն ուներ ծրագիր իր վերջին ընտրական հրովարտական հետևյալ հարցերի վերաբերյալ:						
	Հայաստան	Ադրբեջան	Բելառուս	Վրաստան	Մոլդովա	Ուկրաինա
Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունները	Ոչ	Այո	Ոչ	Ոչ	Այո	Ոչ
Կանանց ներկայացվածությունը	Ոչ	Այո	Ոչ	Ոչ	Այո	Ոչ
Խտրականության բացառում	Ոչ		Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ
Սեռական և վերադարձագրության իրավունքներ	Ոչ	Այո (5-ից 2-ը)	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ
Աշխատանք - անձնական կյանք հավասարակշռություն	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո	Ոչ
Աշխատաշուկայում կանանց մասնակցությունը	Ոչ	Այո (5-ից 3-ը)	Ոչ	Այո, բայց կանանց համար առանձին առանձին սահմանված չէ:	Այո	Ոչ
Կանանց առողջություն	Ոչ	Այո (5-ից 4-ը)	Ոչ	Ոչ	Այո	Ոչ
Կրթության հասանելիություն	Ոչ	Այո	Ոչ	Այո, բայց աղջիկների համար առանձին սահմանված չէ:	Այո	Ոչ

Հետագոտողներն այս հարցի շուրջ հետևյալ մեկնաբանություններն են արել:

Հայաստանում վերջին ընտրություններին մասնակցած կուսակցություններից ոչ մեկը մասնավորապես չի անդրադարձել նշված թեմաներին: Դրանք բոլորը ընդհանրական անդրադարձ են կատարել կրթության և առողջապահության ոլորտներին և երբեմն հիշատակել են նաև կանանց, սակայն ոչ մի կուսակցություն (այդ թվում՝ կուսակցություններում ընդգրկված կանայք) առանձին չի շեշտադրել վերը նշված կետերից որևէ մեկը և չի իրականացրել որևէ տեսակի քարոզչություն և չի ծավալել գործունեություն՝ ուղղված կանանց իրավունքների խթանման ու պաշտպանությանը:

Ընտրական հրովարտակները Մոլդովայում լուրջ չեն ընդունվում. քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ԲՀԿ-

ները) փորձում են մանրակրկիտ ուսումնասիրել նախընտրական խոստումները: Ընտրական հրովարտականերն ընդհանրական են, սահմանակցում են անհնարին ու երևակայականին և լի են գրավիչ խոստումներով, ինչպես օրինակ՝ աշխատավարձերի բարձրացում, ՀՆԱ-ի 16% հատկացում կրթության ոլորտին, կենսաթոշակների բարձրացում և այլն: Գենդերային հավասարության վերաբերյալ էական նախընտրական խոստումներ չեն արձանագրվել:

## **Կին թեկնածուների կամ կանանց վերաբերյալ քաղաքականության լուսաբանում լրատվամիջոցների կողմից**

Նախընտրական քարոզարշավների ընթացքում կանայք, ըստ ամենայնի, էական տեղ չեն զբաղեցնում լրատվամիջոցների կողմից լուսաբանված նյութերում: Կին թեկնածուների ոչ բավարար լուսաբանված լինելու հանգամանքը և քաղաքական կուսակցությունների անունից լրատվամիջոցներում չներկայանալու փաստը ենթադրում է, որ կանանց մասնակցությունը շարունակում է դիտվել որպես բացառություն, այլ ոչ թե օրինաչափություն:

Հետազոտողների առջև դրված էր խնդիր պարզելու՝ արդյո՞ք վերջին ընտրությունների ընթացքում կանայք լրատվամիջոցներում քաղաքական կուսակցությունների անունից հանդես եկել են:

### **Հայաստան**

Այո՛: Կուսակցությունների ղեկավարների տեղակալ կանայք ներկայացվել են լրատվամիջոցներում, սակայն նրանց առաջադրանքը սովորաբար եղել է հանրության համար ավելի դժվար ընդունելի ուղերձներ փոխանցելը, իսկ կուսակցությունների առաջնորդները, որոնք բոլորը տղամարդիկ էին, հիմնականում լրատվամիջոցներում հանդես են եկել՝ ընտրողներին փոխանցելով դրական ուղերձներ:

### **Ադրբեջան**

Ո՛չ: Վերջին խորհրդարանական ընտրություններին թեկնածուներին անվճար եթերաժամ չի հատկացվել և հրապարակվել են միայն մի քանի պատահական հարցազրույցներ (հիմնականում սեփական նախաձեռնության հիման վրա):

Հարցազրույցներին մասնակցած կանանց դուր չի եկել իրենց ընտանեկան իրավիճակների վրա ուշադրության սևեռումը: Ինչպես նշել է հարցազրույցի մասնակիցներից մեկը.

► «Իմ ընտանիքի վերաբերյալ հետաքրքրությունը մեծացել էր, սակայն տղամարդկանց դեպքում դա այդպես չէր»:

Բավարար միջոցներ չունենալու պատճառով կանայք լրատվամիջոցների հետ հարաբերություններում նաև իրենց ոչ շահեկան վիճակում են զգացել: Հարցազրույցին մասնակցած կանանցից մեկը նշել է.



- ▶ «Լրատվամիջոցները ցանկանում էին խոսել միայն օլիգարխների հետ»:

Սակայն հարցազրույցների որոշ մասնակիցներ հայտնել են, որ իրենք լրատվամիջոցների հետ լավ հարաբերությունների մեջ են եղել: Սա հատկապես վերաբերում է նրանց, ովքեր առաջադրվել էին երկրորդ կամ լրացուցիչ անգամ և կապեր ստեղծելու համար բավարար ժամանակ ու հնարավորություն էին ունեցել:

## **Բելառուս**

Այո՛ (մանրամասները չեն տրամադրվել):

## **Վրաստան**

Այո՛: Լրատվամիջոցներում կուսակցության անունից կանանց հանդես գալը բացառություն չի եղել: Սակայն օրինաչափությունները վերլուծելու նպատակով որևէ հետազոտություն չի իրականացվել:

## **Մոլդովա**

Այո՛: Հեռուստատեսային բանավեճերում կանանց տոկոսային հարաբերությունը 12.4% էր՝ թեկնածուների ցուցակներում ընդգրկված կանանց 30,5%-ի համեմատ: Դիտարկված 71 բանավեճերից կին թեկնածուները մասնակցել են միայն 16-ին:

## **Ուկրաինա**

Այո՛: Ոչ առանձին, միայն որոշ դեպքերում տղամարդիկ և կանայք կուսակցության անունից միասին ելույթ են ունեցել:

## **Կին թեկնածուների և ընտրված կանանց բնութագիրը**

Ուսումնասիրության ընթացքում փորձ է կատարվել տեղեկություններ հավաքել կին թեկնածուների և ընտրված կանանց բնութագրերի վերաբերյալ: Տեղեկությունները ներառել են քաղաքականության մեջ նրանց անցած ուղին (տվյալներ նախկինում պաշտոն զբաղեցնելու կամ չզբաղեցնելու մասին), հայտարարագրված եկամուտը, տարիքը, նրանց՝ էթնիկ փոքրամասնությանը պատկանելու փաստը, կրթությունը և մասնագիտությունը: Այս տեղեկատվությունները լայնորեն հասանելի չէին կամ դրանց ձեռք բերումը դժվար էր ուսումնասիրության սահմանափակ ժամկետների պատճառով:

Գոյություն ունեցող տեղեկությունները ցույց են տալիս, որ ընտրված կանանց ու տղամարդկանց ճնշող մեծամասնությունն ունեն բարձրագույն կրթություն՝ Հայաստանում, Ադրբեյջանում և Բելառուսում՝ 100%-ը, իսկ Ուկրաինայում տղամարդկանց՝ 97%-ը, և կանանց՝ 98%-ը:

### Աղյուսակ 21. Թեկնածուներ (օրենսդիր իշխանություն)

	Սուղդվա			Ուկրաինա			Վրաստան			Հայաստան			Ադրբեջան		
	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ
Ընդհանուրը	1885	1310	575	6339	5099	1240	2742	1954	788	1164	950	214	767	626	141
Կուսակցությունը	1881	1306	575	4403	3450	953	2313	1584	729	1164	950	214			
Անկախ	4	4	0	1936	1649	287	429	370	59						

Բելառուսի վերաբերյալ տեղեկություններ չկան:

### Աղյուսակ 22. Ընտրված (օրենսդիր իշխանություն)

	Սուղդվա			Ուկրաինա			Վրաստան			Հայաստան			Ադրբեջան			Բելառուս		
	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ	Ընդհանուր	Տ	Կ
Ընդհան.	101	80	21	422	371	51	150	132	18	131	117	14	125	104	21	110	80	30
Կուսակց.	101	80	21	327	276	51	77	66	11	-	-	-	83	70	13	5	3	2
Անկախ	-	-	-	95	95	-	73	66	7	-	-	-	42	34	8	105	77	28

### Աղյուսակ 23. Կին թեկնածուների և ընտրված կանանց տոկոսային հարաբերությունը (օրենսդիր իշխանություն)

Երկիրը	Թեկնածուներ` %		Ընտրված` %	
	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք
Հայաստան	82	18	90	10
Ադրբեջան	82	18	84	16
Բելառուս	Տեղեկություն չկա	Տեղեկություն չկա	73	27
Վրաստան	72	28	88	12
Սուղդվա	70	30	80	20
Ուկրաինա	81	19	88	12

Հայաստանն ունի ընտրված կանանց ամենացածր տոկոսը, իսկ Բելառուսը՝ ամենաբարձրը: Մոլդովան ունի կին թեկնածուների ամենաբարձր տոկոսը:

**Աղյուսակ 24. Հանձնաժողովների/կոմիտեների ղեկավարների և տեղակալների շարքերում**

	Մոլդովա		Ուկրաինա		Վրաստան		Բլառուս	
	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ
Նախագահող/ ղեկավարներ		6	7	21	1	14	2	11
Տեղակալներ	1	13	2	1	7	37	3**	23*

\* 13 հանձնաժողովում

\*\* 7 հանձնաժողովում

Օրենսդիր մարմնում պաշտոններ զբաղեցնող կանանց և տղամարդկանց մասին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ սակավ ղեկավարում կանայք հանձնաժողովների նախագահների ու տեղակալների պաշտոններ են զբաղեցնում: Մենք չունենք տեղեկատվություն այն մասին, թե կանայք որ կոմիտեներում/հանձնաժողովներում են պաշտոններ զբաղեցնում, և արդյոք նրանք առանցքային գործառույթներ են իրականացնում, օրինակ՝ իրավական հարցերի, տնտեսական քաղաքականության կամ պաշտպանության ոլորտներում:

**Ֆինանսական միջոցներ**

Թեև հետազոտողները և հարցազրույցների մասնակիցները կանանց մասին կարծրատիպային տեսակետներն ու համոզմունքները ճանաչել են որպես ամենալուրջ խոչընդոտը, կանանց քաղաքական ներգրավվածության համար, սակայն, ֆինանսական միջոցները կամ դրանց բացակայությունը կանանց համար ևս լուրջ խնդիր է:

Նախընտրական քարոզարշավ իրականացնելը ծախսատար է, և նույնիսկ այն դեպքում, երբ թեկնածուներն առաջադրվում են կուսակցությունների կողմից, վերջիններիս տրամադրած ֆինանսավորումը բավարար չէ քարոզարշավի ծախսերը հոգալու համար: Անկախ թեկնածուները առաջադրման համար պահանջվող գրավի չափը, քարոզարշավի համար անհրաժեշտ ծախսերի հետ մեկտեղ, չափազանց բարձր են համարում՝ նորից առաջադրվելու համար:

Հետազոտողներից մեկը նշել էր, որ կարծիք կա, որ կանայք պետք է գումար վաստակեն իրենց ընտանիքի և ոչ իրենց վրա ծախսելու համար, իսկ քաղաքական քարոզարշավը դիտվում է որպես այդպիսին:

Հարցազրույցներին մասնակցած կանանց մեծ մասն աշխատում էր կրթության ոլորտում՝ թե՛ դպրոցական և թե՛ համալսարանական

մակարդակում, առողջապահության ոլորտում, ՀԿ-ներում և լրագրության մեջ: Այս ոլորտներում վարձատրությունը բարձր չէ, և կանայք, ամենայն հավանականությամբ, չունեն խնայողություններ՝ իրենց քարոզարշավի ֆինանսավորման համար:

Խորհրդարանի նախկին անդամներից մեկը նշել է, որ ստիպված էր գումար խնդրել ամեն ինչի համար և նույնիսկ այդ դեպքում.

«Կուսակցության անդամներն իրեն մեծամտությամբ էին վերաբերվում, քանի որ ստիպված էր գումար խնդրել»:

Ֆինանսական աջակցության բացակայությունը կանանց կողմից նշվել է որպես ընտրություններին կրկին չառաջադրվելու հիմնական պատճառ: Նրանք նաև կարծիք են հայտնել, որ քանի որ չեն կարողացել միջոցներ ներդնել քարոզարշավի համար, հաղթող տեղեր չեն գրավել կամ իրենց անունները չեն ներառվել կուսակցական ցուցակների առաջին՝ հաղթող, տեղերում:

## Արդյունքների ամփոփում

- ▶ Ուսումնասիրության մեջ ներկայացված քաղաքական կուսակցություններից միայն երեքն ունեն կին ղեկավարներ, իսկ յոթը՝ կին տեղակալներ: Բարձրագույն գործադիր մարմիններում կանանց տոկոսային հարաբերությունը տատանվում է 40%-ի (Ադրբեջանի մի կուսակցությունում) և 5-10%-ի միջև՝ Հայաստանում: Դա նշանակում է, որ քիչ թվով կանայք են հանդես գալիս կուսակցությունների մասին լրատվամիջոցների լուսաբանումներում կամ ներգրավվում քաղաքականության մշակման գործընթացում:
- ▶ Գոյություն ունեցող տեղեկատվությունը ցույց է տալիս, որ կուսակցությունների մեծ մասն ունի կանանց ենթախմբեր, սակայն դրանք չունեն բարձր կարգավիճակ կամ ազդեցություն քաղաքականության մշակման վրա:
- ▶ Ուսումնասիրության ընթացքում դիտարկված քաղաքական կուսակցությունները հիմնականում քայլեր չեն ձեռնարկում կանանց թիվը մեծացնելու ուղղությամբ:
- ▶ Ադրբեջանի և Մոլդովայի որոշ կուսակցություններ ունեն կանանց խնդիրների վերաբերյալ ծրագրեր: Ուսումնասիրված մյուս երկրներում կանանց խնդիրներին առնչվող (օրինակ՝ կանանց սկատամաբ բռնության մասին) կոնկրետ ծրագրեր չեն մշակվել:
- ▶ Քաղաքական կուսակցությունների անունից լրատվամիջոցներում հանդես գալու առումով կանայք տեսանելիորեն ներկայացված չեն:
- ▶ Որոշ կուսակցություններ ներդրել են կամավոր 30% քվոտա՝ կին թեկնածուների համար: Սակայն լինելով փոքր կուսակցություններ՝ դրանք զգալի ազդեցություն չեն ունեցել կանանց կողմից զբաղեցված տեղերի տոկոսային հարաբերության վրա: Դրանք չեն կիրառվում տեղական մակարդակում:

- ▶ Վրաստանում ֆինանսական այն խթանները, որոնք տրամադրվում են կին թեկնածուների 30%-ի շեմն ապահովող քաղաքական կուսակցություններին, չեն հանգեցրել ընտրված կանանց թվի աճին, քանի որ այդ գործելակերպն ընդունվել է ավելի փոքր կուսակցությունների կողմից, որոնք ընտրություններում հաղթանակ տանելու քիչ հավանականություն ունեն:
- ▶ Կուսակցության թեկնածուներին ընտրելու պարզ և թափանցիկ մեխանիզմները կարող են օգնել նվազեցնելու կանանց կախվածությունը այն բանից, որ իրենց թեկնածությունն առաջադրելու հնարավորություն ունենալու համար նրանք պետք է կուսակցության ներսում ունենան ճանաչում:
- ▶ Կին թեկնածուները և ընտրված կանայք ունեն բարձրագույն կրթական որակավորում:
- ▶ Ուսումնասիրված բոլոր երկրներում օրենսդրի մակարդակում ընտրված կանանց թիվը սուղ է:
- ▶ Թեկնածուների տարիքի, հայտարարագրված եկամտի, մասնագիտության կամ էթնիկ պատկանելիության մասին տեղեկատվությունը հասանելի չէ:
- ▶ Ընտրվելու դեպքում քիչ հավանական է, որ կանայք զբաղեցնեն կոմիտեների կամ հանձնաժողովների նախագահների պաշտոններ. 6-ից 3-ը՝ Մոլդովայում, 12-ից 7-ը՝ Ուկրաինայում, 4-ից 1-ը՝ Վրաստանում և 11-ից 2-ը՝ Բելառուսում: Կանանց նախագահությամբ կոմիտեների/հանձնաժողովների շրջանակի մասին տեղեկություններ չկան:
- ▶ Ֆինանսական միջոցների սղությունը՝ որպես թեկնածու ընտրվելու կամ նախընտրական քարոզարշավը ֆինանսավորելու համար, լուրջ խոչընդոտ է կանանց քաղաքական ներկայացվածության տեսանկյունից:



## Գ. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

### Միջազգային պարտավորություններ

Ուսումնասիրվող բոլոր երկրները կամ ստորագրել են կամ համաձայնել են իրավական պարտավորություն ստանձնել ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի» (ԿՆԽՎԿ) դրույթները<sup>46</sup> կատարելու համար, որով նրանք հանձն են առել 2-րդ հոդվածի համաձայն ներառել կանանց և տղա-մարդկանց հավասարության սկզբունքը իրենց ազգային սահմանադրություններում և ապահովել այդ սկզբունքի գործնական կիրառումն օրենքներով և այլ միջոցներով: Ստորագրող կողմերը պարտավորվում են ՄԱԿ-ի կոմիտե ներկայացնել պարբերական զեկույցներ՝ կանանց հավասարությունն ապահովելու հարցում իրենց ձեռքբերումների վերաբերյալ: Այս զեկույցները օգտակար մեխանիզմ են հասարակական կազմակերպությունների համար՝ ընտրված կին ներկայացուցիչների թիվը ավելացնելու ուղղությամբ ձեռնարկվող գործողություններում առաջընթացի բացակայության հետ կապված խնդիրները առանձնացնելու և վերհանելու նպատակով, ինչպես նաև՝ հետևելու կոմիտեի կողմից կատարված առաջարկների կատարման ուղղությամբ արձանագրված առաջընթացին:

### Աղյուսակ 25. ՄԱԿ-ի ԿՆԽՎԿ կոնվենցիան ստորագրող կողմերը<sup>47</sup>

Երկիրը	Ընտրական իրավունքի երաշխիքները
Հայաստան	13 սեպտեմբերի, 1993 թվական
Ադրբեջան	10 հուլիսի, 1995 թվական
Բելառուս	4 փետրվարի, 1981 թվական
Վրաստան	26 հոկտեմբերի, 1994 թվական
Մոլդովա	1 հուլիսի, 1994 թվական
Ուկրաինա	12 մարտի, 1981 թվական

Երկրներից հինգը Եվրոպայի խորհրդի անդամ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և դրա Արձանագրությունները (ՄԻԵԿ)<sup>48</sup> ստորագրող կողմ են: 14-րդ հոդվածով արգելվում է սեռի հիմքով խտրականությունը նշված բոլոր իրավունքների առնչությամբ: Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը վերաբերում է ազատ ընտրությունների իրավունքին: 12-րդ արձանագրությամբ արգելվում

46. <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/>

47. [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/TreatyBodyExternal/Treaty.aspx?Treaty=CEDAW&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/TreatyBodyExternal/Treaty.aspx?Treaty=CEDAW&Lang=en)

48. Հասանելի է՝ [www.echr.coe.int/pages/home.aspx?p=basictexts](http://www.echr.coe.int/pages/home.aspx?p=basictexts).

Է խտրականությունը օրենքների առնչությամբ և պետական որևէ մարմնի կողմից որևէ անձին ուղղված սեռական խտրականությունը: Բելառուսը բացառություն է կազմում:

Բոլոր ուսումնասիրվող երկրները ստորագրել կամ համաձայնել են ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի ներքո ստանձնել իրավական պարտավորություն, ինչը ստորագրող կողմերին պարտավորեցնում է ապահովել կանանց և տղամարդկանց՝ դաշնագրում նշված քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունքը: Այս իրավունքները ներառում են՝

- ▶ պետական գործերում մասնակցելու իրավունքն ու հնարավորությունը,
- ▶ քվեարկելու և ընտրվելու իրավունքը:

Սա նշանակում է, որ միջազգային ստանդարտներով հաստատված է ամուր իրավական հիմք՝ բոլոր պետությունների կողմից կանանց քվեարկելու, որպես թեկնածու առաջադրվելու և ընտրվելու հավասար իրավունքներն ապահովելու համար:

## Ներպետական օրենսդրությունը

Յուրաքանչյուր պետություն ունի ներպետական իրավական շրջանակ, որը երաշխավորում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը:

### 1. Կանանց հավասար իրավունքները

#### Աղյուսակ 26. Կանանց հավասար իրավունքները երաշխավորող իրավական համակարգը

Երկիրը	Օրենքը
Հայաստան	«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենք, 2013թ.
Ադրբեջան	Սահմանադրություն, 25-րդ հոդված. «Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավունքներ և ազատություններ՝ անկախ ռասայից, ազգությունից, կրոնից, սեռից, ծագումից, գույքային դրությունից, սոցիալական վիճակից, համոզմունքներից, քաղաքական կուսակցության, արհեստակցական միության և սոցիալական միավորման պատկանելիությունից»: «Գենդերային (տղամարդկանց և կանանց) հավասարության ապահովման մասին» օրենք:
Մոլդովա	«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները ապահովելու մասին» օրենք

Երկիրը	Օրենքը
<b>Բելառուս</b>	Սահմանադրության 22-րդ հոդվածը սահմանում է, որ բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առջև և ունեն իրենց իրավունքների և օրինական շահերի առանց խտրականության հավասար պաշտպանության իրավունք: Հիմնական օրենքում չկան սեռի հիման վրա խտրականությունն արգելող դրույթներ կամ կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության վերաբերյալ հատուկ դրույթներ:
<b>Վրաստան</b>	«Գեոդերային հավասարության մասին» օրենք, 2010թ., 3-րդ հոդված (սահմանում). «Գեոդերային հավասարություն՝ մարդու իրավունքների մասին օրենքի բաղադրիչ մաս, որը վերաբերում է տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներին և պարտավորություններին, պարտականություններին և հավասար մասնակցությանը անձնական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում»:
<b>Ուկրաինա</b>	Սահմանադրության 24-րդ հոդված. «Քաղաքացիներն ունեն հավասար սահմանադրական իրավունքներ և ազատություններ և հավասար են օրենքի առջև: Արգելվում են ռասայի, մաշկի գույնի, քաղաքական, կրոնական և այլ դավանանքների, սեռի, էթնիկ և սոցիալական ծագման, գույքային դրության, բնակության վայրի, լեզվական կամ անձը բնութագրող այլ հատկանիշների հիման վրա արտոնությունները կամ սահմանափակումները»:

## 2. Ընտրություններում հավասար իրավունքներ երաշխավորող իրավական համակարգը

Որոշ պետություններ ընտրություններին առնչվող իրավահավասարության հետ կապված հատուկ երաշխիքներ ունեն:

Երկիրը	Ընտրական իրավունքում ամրագրված երաշխիքները
<b>Հայաստան</b>	Ընտրական օրենսգիրք, 3-րդ հոդված, Հավասար ընտրական իրավունք. «Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով: Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար: Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն»:
<b>Ադրբեջան</b>	Առանձին օրենսդրական դրույթը բացակայում է:
<b>Մոլդովա</b>	Առանձին օրենսդրական դրույթը բացակայում է:



Երկիրը	Ընտրական իրավունքում ամրագրված երաշխիքները
Բելառուս	Առանձին օրենսդրական դրույթը բացակայում է:
Վրաստան	«Գենդերային իրավահավասարության մասին» օրենք, 11-րդ հոդված. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի առանց խտրականության հավասար պայմաններով մասնակցել ընտրություններին: Երկու սեռերի ներկայացուցչական մասնակցության հավասար հնարավորությունն ապահովվում է ներկայացուցչական մարմնում ընտրվելու իրավունքը կիրարկելու միջոցով: Կանայք և տղամարդիկ կարող են ընտրվել առանց խտրականության՝ հավասար պայմաններով»:
Ուկրաինա	«Նախագահական ընտրությունների մասին օրենք», 3-րդ հոդված՝ հավասար ընտրական իրավունք, «Խորհրդարանական ընտրությունների մասին օրենք», 3-րդ հոդված՝ հավասար ընտրական իրավունք, «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենք», 4-րդ հոդված՝ հավասար ընտրական իրավունք. «Ուկրաինայի քաղաքացիները ընտրությունների մասնակցում են հավասար հիմունքներով: Բոլոր թեկնածուները և կողմերն ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ՝ ընտրական գործընթացին մասնակցելու համար, որը պետք է ապահովվի հետևյալի միջոցով. (ա) արտոնությունների արգելման կամ սահմանափակումների սահմանման՝ հիմնված ռասայի, մաշկի գույնի, քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների, սեռի, էթնիկ կամ սոցիալական ծագման, կյուրակական կարգավիճակի, բնակության վայրի, լեզվի կամ այլ հիմքերով, (բ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընտրական գործընթացին միջամտության արգելման, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, (գ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թեկնածուների / կուսակցությունների նկատմամբ հավասար և անաչառ վերաբերմունքի, (դ) թեկնածուների / կուսակցությունների կողմից իրենց ընտրական ֆոնդից բացի այլ ռեսուրսների օգտագործման արգելքի, (ե) զանգվածային լրատվության միջոցների կողմից թեկնածուների / կուսակցությունների նկատմամբ հավասար և անաչառ վերաբերմունքի:

### 3. Իրավական համակարգի դրույթներ, որոնք կանանց դնում են ոչ շահեկան դրության մեջ

Խորհրդատուներին հանձնարարվել էր առանձնացնել այնպիսի դրույթներ, որոնք կանանց դնում են ոչ շահեկան դրության մեջ:

**Աղյուսակ 28. Արդյո՞ք իրավական շրջանակը ներառում է այնպիսի դրույթներ, որոնց պատճառով կանայք հայտնվում են ոչ շահեկան դրության մեջ**

Երկիրը	Ա/Ո	Մանրամասները
Հայաստան	Ոչ	-
Ադրբեջան	Ոչ	Ոչ շահեկան դրության մեջ ղևող դրույթներ չկան՝ կանանց պետական քաղաքական մասնակցության առումով: Այնուամենայնիվ, տարբեր այլ հարցերի ամուսնությանը առկա են որոշ ոչ շահեկան դրույթներ: Սա վերաբերում է օրինակ՝ ՆՏ կանանց կարգավիճակին:
Բելառուս	Այո	Ընդունվել են որոշ առանձին փաստաթղթեր, օրինակ՝ հետևյալ հրահանգը՝ «Ֆիզիկական ծանր աշխատանքների և վնասակար և/կամ վտանգավոր աշխատանքային պայմաններում այնպիսի աշխատանքների ցանկի փոփոխության մասին, որոնց դեպքում կանանց աշխատանքի վերցնելը կարող է արգելվել»: Այս փաստաթղթում ներառված է 181 մասնագիտություններից բաղկացած ցանկ, որոնք առնչվում են քիմիական արդյունաբերության, հանքարդյունաբերության, կաշվի արտադրության և ծանր արդյունաբերության ոլորտներին, որտեղ կանանց աշխատանքն արգելված է: Վերջին խմբագրությունը՝ 2014թ. հունիսի 12:
Վրաստան	Ոչ	Ոչ ուղղակիորեն: Վրացական օրենքները գենդերային տեսանկյունից չեզոք են, ինչը հաճախ ոչ շահեկան դրության մեջ է դնում կանանց, քանի որ նրանց անհրաժեշտ են հատուկ իրավունքներ:
Մոլդովա	Ոչ	Ոչ ուղղակիորեն: Բայց առկա են շատ դրույթներ, որոնք անուղղակիորեն կանանց դնում են ոչ շահեկան դրության մեջ: Այդպիսիք են, օրինակ, քարոզարշավի ֆինանսավորման մասին դրույթները, որոնք չեն սահմանափակում ֆինանսական ներդրումները, այդպիսով, այն կանայք, որոնք ֆինանսական միջոցների ցածր հասանելիություն ունեն, հայտնվում են ոչ շահեկան դիրքում:
Ուկրաինա	Ոչ	-

Որոշ խորհրդատուներ նկատել են, որ օրենքների գենդերային չեզոքությունը ինքնին չի պաշտպանում կանանց իրենց իրավունքներից օգտվելն ապահովելու առումով, և իրականում առանձին միջոցներ, ինչպես օրինակ՝ քարոզարշավի ֆինանսավորումը, կարող են անուղղակիորեն կանանց դեմ խտրականության դրսևորումների ազդեցություն ունենալ:

## Ընտրակարգը

### 1. Օրենսդրի մակարդակ

Վերջին ընտրությունները և ընտրակարգերի տեսակները նշված են ստորև ներկայացվող աղյուսակներում:

#### Աղյուսակ 29. Օրենսդիր մարմնի ընտրություններ

Երկիրը	Ընտրակազմը
Հայաստան	6 մայիսի, 2012 թվական
Ադրբեջան	1 նոյեմբերի, 2015 թվական
Բելառուս	23 սեպտեմբերի, 2012 թվական
Վրաստան	1 հոկտեմբերի, 2012 թվականի
Մոլդովա	30 հոկտեմբերի, 2014 թվական
Ուկրաինա	26 հոկտեմբերի, 2014 թվական

#### Աղյուսակ 30. Յուրաքանչյուր երկրի կողմից ընդունված ընտրակարգերը

Երկիրը	Ընտրակազմը
Հայաստան	Կիսահամամասնական
Ադրբեջան	Մեծամասնական ընտրակարգ. պարզ մեծամասնություն
Բելառուս	Մեծամասնական ընտրակարգ. պարզ մեծամասնություն
Վրաստան	Կիսահամամասնական
Մոլդովա	Համամասնական ներկայացվածություն
Ուկրաինա	Կիսահամամասնական

### 2. Թեկնածուներին առաջադրվող պահանջներ

Բոլոր երկրների դեպքում թեկնածուներին առաջադրվող պահանջները սահմանված են ընտրական օրենսգրքում կամ/և սահմանադրության մեջ:

- ▶ **Տարիքը.** օրենսդիր մարմնի դեպքում թեկնածուի տարիքը տատանվում է 18 տարեկանից (ինչպես Մոլդովայում) մինչև 25 տարեկանի (ինչպես Ադրբեջանում) միջակայքում:
- ▶ **Քաղաքացիությունը.** բոլոր երկրներում թեկնածուն պետք է լինի քաղաքացի, իսկ մի շարք երկրներում պահանջվում է, որ

թեկնածուն առնվազն վերջին հինգ տարիների ընթացքում բնակվի տվյալ երկրում:

- ▶ *Այլ սահմանափակումներ.* առաջադրվող թեկնածուն չպետք է քրեական հանցանք կատարած լինելու համար դատվածություն կամ օրենքով սահմանված սահմանափակումներ ունենա:
- ▶ *Քաղաքական առաջադրում.* Հայաստանում, Մոլդովայում, Վրաստանում (մեծամասնական ընտրատարածքների դեպքում) և Բելառուսում թեկնածուն պետք է ներկայացնի իր առաջադրվելու մասին քաղաքական կուսակցության (կամ կուսակցությունների քաղաքական բլոկի) որոշումը:
- ▶ *Անկախ թեկնածուներ.* չորս երկրներում (Մոլդովա, Վրաստան, Բելառուս և Ադրբեջան) թեկնածուները պետք է ներկայացնեն ընտրողների/աջակիցների ստորագրությունները: Ստորագրությունների թիվը տատանվում է հինգից՝ Վրաստանում, մինչև 1400-ը՝ Բելառուսում:
- ▶ *Ֆինանսական գրավ.* Երեք երկրների դեպքում, թեկնածուն պետք է ապահովի ֆինանսական գրավ: Ուկրաինայում երկրի ողջ տարածքում ընտրական գրավը կազմում է նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը, Հայաստանում՝ նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկը և Վրաստանում՝ 5000 վրացական լարի:<sup>50</sup> Եթե թեկնածուն առաջադրվում է քաղաքական կուսակցությունների կամ կուսակցական բլոկերի կողմից, ապա այս գրավը վճարում է կուսակցությունը:

---

50. Մոտավորապես 2 093 եվրո:



**Աղյուսակ 31. Թեկնածուներին առաջադրվող հիմնական պահանջները՝ օրենսդիր մարմին**

Երկիրը	Առաջադրում		Տեղեկություններ թեկնածուների մասին		Ֆինանսական ավանդ	
	Քաղաքական կուսակցություն	Ինքնա-առաջադրում	Այլ	Տարի-քը	Եկամուտը / ունեցվածքը / ֆինանսական պարտավորությունները	
Հայաստան	<ul style="list-style-type: none"> <li>- Կուսակցության կանոնադրությունը,</li> <li>- մշտապես գործող մարմնի որոշումը,</li> <li>- ընտրացուցակը,</li> <li>- թեկնածուների գրավոր համաձայնությունը,</li> <li>- գրավի անդորրագիրը,</li> <li>- քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ,</li> <li>- անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:</li> </ul>		Քաղաքական կուսակցությունների դաշինք		Ոչ	Նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկը՝ համամասնական ընտրությունների դեպքում: Նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը՝ մեծամասնական ընտրությունների դեպքում:
Ադրբեջան		<ul style="list-style-type: none"> <li>- Նվազագույնը 450 ստորագրություն,</li> <li>- վերջին տարվա եկամուտների մասին տեղեկատվություն,</li> <li>- գույքի մասին տեղեկատվություն:</li> </ul>	Ընտրողների կողմից / Կուսակցական բյուրոյի կողմից առաջադրված	25+	Հայտնի չէ	
Բելառուս	<ul style="list-style-type: none"> <li>Նույնն, ինչ անկախ թեկնածուների դեպքում և՛</li> <li>- առաջադրման մասին գերագույն մարմնի արձանագրությունը,</li> <li>- կուսակցության գրանցման վկայականի պատճենը,</li> <li>- կուսակցության կանոնադրությունը,</li> <li>- թեկնածուի կուսակցության անդամության վկայականը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Դիմում և համաձայնություն,</li> <li>- անձի մասին տվյալներ,</li> <li>- եկամուտները և գույքի հայտարարագիրը</li> <li>- անհրաժեշտության դեպքում պաշտոնից ազատվելու կամ լիազորությունները դադարեցնելու մասին համաձայնությունը</li> </ul>	Ներկայացուցիչների պալատի դեպքում ոչ պակաս, քան 10 անձ կազմող ընտրողների խումբ Պատգամավորների խորհուրդների դեպքում - 3-ից 10 անձ կազմող խումբ:	21+	Ոչ	
Վրաստան	<ul style="list-style-type: none"> <li>- Դիմում,</li> <li>- աջակից ընտրողների ստորագրությունները,</li> <li>- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,</li> <li>- 2 լուսանկար:</li> </ul>		Ընտրական բյուր 5 անդամներից բաղկացած նախաձեռնող խումբ:			5 000 վրացական լարի*

Երկիր	Առաջադրում		Տեղեկություններ թեկնածուների մասին		Ֆինանսական ավանդ	
	Քաղաքական կուսակցություն	Ինքնաառաջադրում	Այլ	Տարիքը	Եկամուտը / ունեցվածքը / ֆինանսական պարտավորությունները	
Սլովակա	<ul style="list-style-type: none"> <li>- Առաջադրման մասին գերագույն կամ տարածքային մարմնի արձանագրությունը</li> <li>- թեկնածուների ցուցակը</li> <li>- կենսագրական տվյալներ</li> <li>- թեկնածուների համաձայնությունը առաջադրվելու մասին:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- համապատասխան թվով ստորագրություններով խնդրագրերը</li> </ul>		18+	<ul style="list-style-type: none"> <li>- Հայտարարագիր՝ անշարժ գույքի, բանկային ժաշիկների, ժառանգության, եկամուտների մասին և օրենքով սահմանված սահմանափակումներ չունենալու մասին տեղեկանք:</li> </ul>	
Ուկրաինա	<ul style="list-style-type: none"> <li>- Գրանցման դիմումը՝ ստորագրված և կնքված կուսակցության ղեկավարի կողմից,</li> <li>- կուսակցության բարձրագույն մարմնի որոշումը,</li> <li>- թեկնածուների ցուցակը,</li> <li>- առաջադրվելու մասին թեկնածուների համաձայնությունը և նրանց՝ հրապարակման ենթակա կենսագրությունը, գույքի, եկամտի, ծախսերի և ֆինանսական պարտավորությունների մասին հայտարարագիրը,</li> <li>- կենսագրական տվյալներ,</li> <li>- գրավի անդորրագիրը,</li> <li>- 4 լուսանկար,</li> <li>- թեկնածուների՝ Ուկրաինայի քաղաքացիությունը հաստատող անձնագրերի առաջին և երկրորդ էջերի պատճենները:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Ինքնաառաջադրման դիմումը և կենսագրության հրապարակման մասին համաձայնությունը,</li> <li>- կենսագրությունը,</li> <li>- գույքի, եկամտի, ծախսերի և ֆինանսական պարտավորությունների մասին հայտարարագիրը,</li> <li>- ֆինանսական դեպոզիտի ստացականը,</li> <li>- 4 լուսանկար,</li> <li>- թեկնածուի՝ Ուկրաինայի քաղաքացի լինելը հավաստող անձնագրի առաջին և երկրորդ էջերի</li> </ul>		21+	<ul style="list-style-type: none"> <li>- Հայտարարագիր՝ գույքի, եկամուտների, ծախսերի և ֆինանսական պարտավորությունների մասին,</li> <li>- նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը</li> </ul>	

Հարցազրույցների մասնակիցներից ոմանք նշել են, որ որպես անկախ թեկնածու ստորագրություններ հավաքելը դրական է եղել ընտրողներին առավել մոտիկից ճանաչելու և իրենց առաջադրվելու մասին հասարակության ավելի լայն շրջանակների իրազեկելու առում-

մով: Հարցազրույցի մեկ մասնակից այսպես արտահայտվեց.

«Դա մարդկանց հետ զրուցելու օգտակար ձև էր»:

Այնուամենայնիվ, պահանջվող ֆինանսական գրավի զգալի չափը դժվարացրել էր կանանց՝ որպես անկախ թեկնածու առաջադրվելը:

### **Անկախ թեկնածուներ և ընտրված անկախ պատգամավորներ**

Առաջադրված անկախ թեկնածուների թիվը մեծ չէ՝ բացառությամբ Ուկրաինայում 2014 թվականի վերջին տեղի ունեցած ընտրությունների:

### **Աղյուսակ 32. Անկախ թեկնածուներ և ընտրված անկախ թեկնածուներ**

Երկիրը	Անկախ թեկնածուներ		Ընտրված անկախ թեկնածուներ	
	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք
Հայաստան			34	8
Ադրբեջան			77	28
Վրաստան	370	59	66	7
Մոլդովա	4	4		
Ուկրաինա	1 649	287	95	

### **Թափուր տեղեր**

Թափուր տեղերը ինդիք են առաջացնում հատկապես ընտրացուցակների օգտագործմամբ ընտրակարգերում, որտեղ կուսակցական ցուցակում հաջորդ տեղը զբաղեցնող անձը ստանձնում է պաշտոնը, եթե այդ տեղը թափուր է մնում: Այս գործելակերպը օգտագործվել է որոշ դեպքերում այնպիսի իրավիճակներ շրջանցելու համար, որտեղ կին թեկնածուների համար նախատեսված է քվոտա: Օրինակ՝ այդպես է Հայաստանի դեպքում: Օրենքով չի պահանջվում, որ մանդատը հանձնող անձի փոխարեն մեկ այլ կին զբաղեցնի նրա տեղը: Հայաստանի հետազոտողի բացատրությամբ սա հանգեցրել է մի գործելակերպի, երբ կանայք ընտրություններից հետո հրաժարվում են իրենց մանդատից (պարզ չէ, թե արդյոք դա նախապես ձեռք բերված պայմանավորվածությունն է, թե ոչ) և նրանց փոխարինում է տղամարդ թեկնածու:

Ուսումնասիրվող երկրների դեպքում՝ Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի, որոնք ունեն համամասնական ներկայացուցչական ընտրակարգեր, թափուր տեղը լրացնում է ցուցակում հա-



ջորդ տեղը զբաղեցնող անձը: Մեծամասնական ընտրությունների ժամանակ նման դեպքում նոր ընտրություններ են նշանակվում:

## **Քվոտաներ**

### **1. Օրենքով սահմանված պահանջ**

Հայաստանը միակ երկիրն է, որտեղ կանանց համար Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված քվոտա է սահմանված:

Ընտրական օրենսգրքի 108-րդ հոդվածի՝ «Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ առաջադրելը», 1-ին մասով պահանջվում է՝

«Յուրաքանչյուր կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք իրավունք ունի առաջադրելու թեկնածուների միայն մեկ ընտրացուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից առանձին ընտրացուցակ առաջադրելու: Յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը՝ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը)»:

Գործնականում սա նշանակում է, որ կուսակցության ընտրական ցուցակում յուրաքանչյուր հինգ թեկնածուներից առնվազն մեկը պետք է լինի կին:

Այնուամենայնիվ, քանի որ օրենքը չի սահմանում, որ այն կնոջը, որը վայր է դնում իր մանդատը, պետք է փոխարինի մեկ այլ կին թեկնածու, գործնականում ստեղծվել է մի իրավիճակ, որտեղ կանայք ցուցակում ներառվելուց հետո վայր են դնում մանդատը և նրանց փոխարինում են տղամարդիկ:

### **2. Կառուցողական գործողություն կամ դրական խտրականություն**

Վրաստանում օրենքով թույլատրվում է կիրառել կառուցողական գործողություն [դրական խտրականություն]՝ ընտրվող կանանց թիվը ավելացնելու նպատակով: 2011թ. Կանանց և տղամարդկանց իրավահավասարության խորհրդարանական խորհուրդը առաջարկեց փոփոխություններ կատարել Վրաստանի ընտրական օրենսգրքում և քաղաքական կուսակցությունների մասին օրենքում: Փոփոխություններով ներմուծվում էր կամավոր քվոտա: Սրանով սահմանվեց լրացուցիչ 10% բյուջետային ֆինանսավորում այն կուսակցության համար, որը կուսակցական ընտրացուցակի յուրաքանչյուր տասնյա-

կում<sup>51</sup> կներառի տարբեր սեռերի առնվազն երկու ներկայացուցիչ: Այնուամենայնիվ, սա հաջողություն չբերեց կին թեկնածուների և ընտրված կանանց թիվը ավելացնելու հարցում, որովհետև 16 ընտրական սուբյեկտներից միայն վեցն իրենց ընտրացուցակներում կիրառեցին կամավոր քվտան, բայց այդ վեց քաղաքական սուբյեկտներից ոչ մեկը չանցավ 5% ընտրական շեմը՝ խորհրդարանում ներկայացուցչություն ունենալու համար: Երկրի երկու առաջատար կուսակցությունները/բյուրերը («Միացյալ ազգային շարժում» և «Վրացական երազանք» բյուրը) մյուս կուսակցությունների համեմատ ընտրացուցակներում ունեին ամենաքիչ թվով կին ներկայացուցիչներ:

Օրենքով չի սահմանվում, որ լրացուցիչ ֆինանսավորումը պետք է ծախսվեր ավելի մեծ թվով կանանց առաջադրվելը խրախուսելու կամ կին թեկնածուներին աջակցելու համար և այս հայեցակետը վերանայվում է Կանանց և տղամարդկանց իրավահավասարության խորհրդրդարանական խորհրդի կողմից:

Բելառուսում նախագահը ոչ պաշտոնապես սահմանել է Ազգային ժողովում կանանց 30% ներկայացվածության նպատակակետ:

### Աղյուսակ 33. Զվտաներ և կառուցողական գործողություն

Երկիրը	Ընդունված քվտա	Օրենքով սահմանված պահանջ	Պատժամիջոց	Կիրարկում	Կամավոր	Խրախուսող միջոց
Հայաստան	Ոչ	Այո	Ոչ		Ոչ	Ոչ
Ադրբեջան	Ոչ	Ոչ	Ոչ		Ոչ	Ոչ
Բելառուս	Ոչ պաշտոնական 30% քվտա	Ոչ	Ոչ		Ոչ	Ոչ
Վրաստան	Կամավոր քվտա		Այն քաղաքական սուբյեկտները, որոնք չեն պահպանել կամավոր քվտայի պահանջը, չեն ստացել 10% լրացուցիչ բյուջետային ֆինանսավորում 2012թ., 2014թ. սկսած այդ թիվն աճել է 10%-ից՝ դառնալով 30%:		Այո	Այո
Մոլդովա	Ոչ	Ոչ	Ոչ		Ոչ	Ոչ
Ուկրաինա	Կամավոր 30% քվտա	Ոչ	Ոչ		Այո	Այո <sup>52</sup>

51. Վրաստանի սահմանադրական օրենքը «Քաղաքացիների միավորումների մասին», 30-րդ հոդված:

52. Այն խորհրդարանական քաղաքական կուսակցությունները, որոնք կկարողանան ապահովել, որ կուսակցության սեռերից յուրաքանչյուրի ներկայացուցիչների թիվը խորհրդարանում չգերազանցի այդ կուսակցությունների խորհրդարան անցածների ընդհանուր թվի 2/3-ը, կստանան քաղաքական կուսակցությունների համար նախատեսված պետական տարեկան բյուջեի 10%-ի չափով լրացուցիչ ֆինանսավորում:

**Աղյուսակ 34. Օրենսդիր մարմինների ընտրություններում կանանց և տղամարդկան հաջողության ցուցանիշները**

Երկիրը	Թեկնածուներ		Ընտրված		Հաջողության ցուցանիշներ	
	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Հայաստան	950	214	117	14	12%	7%
Ադրբեջան	626	141	104	21	17%	14%
Բելառուս	-	-	80	30	-	-
Վրաստան	1 954	788	132	18	7%	2%
Մոլդովա	1 310	575	80	21	6%	4%
Ռուսաստան	5 099	1 240	371	51	7%	4%

Սա այն միջոցն է, որի մասին պետք է զեկուցել Եվրոպայի խորհրդին, որպեսզի վերջինս մշտադիտարկի Քաղաքական և հանրային որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին թիվ Rec(2003)3 հանձնարարականի կատարումը<sup>53</sup> և հաշվարկվում է ընտրված մարդկանց թիվը թեկնածուների թվի վրա բաժանելու և 100-ով բազմապատկելու միջոցով:

Կին թեկնածուների հաջողության ցուցանիշները շարունակաբար զիջում են տղամարդկանց ցուցանիշներին, սակայն տարբերությունը մեծ չէ: Ամենամեծ տարբերությունը դիտարկվում է Հայաստանում միակ երկիրը, որն ընդունել է քվոտան, բայց որի առնչությամբ մենք տեղեկություններ չունենք, թե ընտրվելուց հետո մանդատները հանձնված կանանց թիվը ինչպես է փոփոխվում տղամարդկանց օգտին:

Հետազոտության ժամանակ ուսումնասիրվել են նաև կանանց և տղամարդկանց հաջողության տարբեր ցուցանիշները այն ընտրակարգերում, որոնց մասին մենք տեղեկություններ ունենք:

**Աղյուսակ 35. Հաջողության ցուցանիշներն՝ ըստ ընտրակարգերի**

Երկիրը	Ընտրակարգ	Թեկնածուներ		Ընտրված		Հաջողության ցուցանիշներ	
		Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ
Հայաստան	Համամասն.	824	202	90	12	11%	6%
	Մեծամասն.	125	12	41	2	33%	17%
Վրաստան	Համամասն.	1 584	729	61	16	4%	2%
	Մեծամասն.	370	59	66	7	18%	11%

53. Հասանելի է այստեղ՝ [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805e0848](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e0848).

Հայաստանից և Վրաստանից ստացված հասանելի տեղեկատվության համաձայն՝ եթե կանայք ընտրվում են մեծամասնական տեղերի համար իրենց ներկայացրած այն կուսակցություններում, որոնց հաղթելու հավանականությունը մեծ է, ապա նրանք ընտրվելու առավել մեծ շանսեր ունեն:

Նույնը վերաբերում է համամասնական ընտրակարգով/կուսակցական ընտրացուցակով տեղերին: Եթե կանանց անունները ընտրացուցակի շահեկան դիրքերում գետեղելու պահանջ չկա, ապա նրանց հաջողության հիմնական գրավականը իրենց կուսակցության կողմից քվեներ շահելու հավանականությունն է:

Այնուամենայնիվ, պարզ է, որ ավելի մեծ թվով կանայք ընտրվում են համամասնական ընտրակարգով, քան մեծամասնականով: Վրաստանում կին թեկնածուների 61%-ը մանդատ են ստացել համամասնական կուսակցական ընտրացուցակով՝ մեծամասնական ընտրակարգով մանդատ ստացած կանանց 39%-ի համեմատ:

### **3. Կանանց մասնակցությունը դյուրացնելու օրենսդրական կամ վարչական միջոցներ**

Ուսումնասիրվող երկրներից ոչ մեկում որևէ հատուկ կարգավորող միջոց գոյություն չունի, որով հնարավոր կլիներ դյուրացնել կանանց մասնակցությունը՝ նրանց աշխատանքային գրաֆիկները և աշխատելու մեթոդները ճիշտ կազմակերպելու միջոցով, օրինակ՝ դպրոցական արձակուրդներին ժողովներ չիրավիրելու կամ դրանք ուշ ժամերին հնարավորինս չանցկացնելու միջոցով:

Իսկապես, որոշ խորհրդարաններ և ազգային ժողովներ այնպիսի կանոններ ունեն, որոնք ավելի են դժվարացնում կանանց մասնակցությունը: Օրինակ՝ 16 տարին չլրացած երեխաները չեն կարող մուտք գործել Ուկրաինայի խորհրդարան և երեխաներին կերակրելու համար առանձնացված սենյակ չկա:

### **Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններ**

Ընտրությունների անցկացման մեթոդները տարբերվում են՝ կախված մանդատների քանակից. հաճախ մեծ քաղաքներում ընտրությունները տեղի են ունենում այլ հիմունքներով, քան փոքր գյուղերում:

Սույն ուսումնասիրության համար կիրառված տեղեկությունները հենվում են վերջին ընտրությունների տվյալների վրա, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 36. Տեղական ինքնակառավարման մարմինների (վարչտարածքային կառավարման մակարդակ) ընտրությունների ամսաթիվը**

Երկիրը	Վերջին ընտրությունների ամսաթիվը	Մեկնաբանություններ
Հայաստան	-	Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար ֆիքսված շրջափուլ չկա, և բոլոր ընտրությունները միաժամանակ տեղի չեն ունենում: Հետագոտության շրջանակում դիտարկվել են 2010-2015թթ. տեղի ունեցած ընտրությունները: Կարգավորվելով 145-րդ հոդվածով՝ «Հերթական ընտրություն նշանակելու, անցկացնելու և թեկնածուներ առաջադրելու ու զրանցելու ժամկետները»:
Ադրբեջան	դեկտեմբերի 23, 2014թ.	-
Բելառուս	մարտի 23, 2014 թ.	-
Վրաստան	հունիսի 15, 2014 թ.	-
Մոլդովա	հունիսի 14, 2015 թ.	-
Ուկրաինա	հոկտեմբերի 25, 2015թ.	-

**Աղյուսակ 37. Թեկնածուների ընտրությանը ներկայացվող պահանջները և մեթոդը**

Երկիրը	Մանրատների թիվը	Առաջադրում քաղաքական կուսակցության կողմից	Ինքնաառաջադրում	Այլ առաջադրում	Թեկնածուի եկամուտները	Ֆինանսական գրավ
<b>Բելառուս</b>		Տեղեկություն չկա				
<b>Վրաստան</b>	5 242-ից մինչև 153 537	Կուսակցությունները որոշում են ընտրացուցակը՝ համանամանական ընտրակարգի համար		Ընտրական բլոկի կողմից՝ հաստատված ընտրողների 1%-ի ստորագրությամբ 5 անձից բաղկացած նախաձեռնողական խմբի կողմից:		
<b>Մոլդովա</b>	Տեղեկություններ չկան:	Կուսակցության որոշումներ կայացնող մարմին արձանագրությունը, կենսագրական տեղեկություններ, առաջադրվելու մասին համաձայնություն, անձը հաստատող փաստաթղթի պատճենը:	Տեղական ինքնակառավարման մարմնի ակադեմիկոսների ընտրություններ՝ ընտրողների 2%-ի աջակցությամբ, բայց ոչ պակաս, քան 50 հոգու: Քաղաքապետի ընտրության 5%-ի, բայց ոչ պակաս, քան 150 ընտրողի և ոչ ավելի քան 10 000 ընտրողի աջակցությունը:		Եկամուտների և ակտիվների մասին հայտարարագիր՝ վերջին 2 տարիների համար:	

Քաղաքապետի թեկնածուի ղեկավարելու պաշտոնի վարձի 50-ից 1 000-ապարհիկը:			Նույն տեղեկությունները, ինչ քաղաքական թեկնածուների ղեկավարում:	Երևանի ընտրությունների համար՝ կուսակցության կանոնադրությունը և ընտրացուցակը, կուսակցության տարածքային մարմնի որոշումը, գրավի անդորագրի ստացվածը, տվյալ տարածքում 6 ամսվա ընթացքում ընկալությունը հաստատող պատասխանը, անձը հաստատող պատասխանը:	Տեղեկություններ չկան:
Վերջին տարվա եկամուտների մասին տեղեկատվություն՝ թեկնածուի և նրա կնոջ/ամուսնու անվանք գրանցված գույքի մասին մակրամասն տեղեկություններ:					51-ից մինչև 48 778
				<ul style="list-style-type: none"> <li>- Գրանցման դիմում՝ ստորագրված քաղաքական կուսակցության տեղական կառույցի ղեկավարի կողմից և կնքված,</li> <li>- քաղաքական կուսակցության տեղական ստորաբաժանման բարձրագույն մարմնի կողմից ընդունված որոշման պատճենը,</li> <li>- քաղաքական կուսակցության տեղական ստորաբաժանման համաժողովի կողմից ընդունված որոշումը,</li> <li>- թեկնածուների ցուցակը (բազմամասնատ ընտրատարածքի դեպքում)</li> <li>- թեկնածուների համաձայնությունները՝ տրված իրենց թեկնածության առաջարկման և կենսագրական տվյալների հրապարակման վերաբերյալ,</li> <li>- թեկնածուների կենսագրությունները,</li> <li>- ունեցվածքի, եկամտների, ծախսերի և ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ հայտարարագրեր, - 4-ական յուսակցություններ,</li> <li>- ֆինանսական գրավի անդորագրի ստացվածը (բազմամասնատ ընտրատարածքի համար)</li> <li>- թեկնածուների Ուկրաինայի քաղաքացիությունը հաստատող անձնագրերի առաջին և 2-րդ էջերի յուսակցությունները:</li> </ul>	83-ից մինչև 17 000
Քաղաքապետի թեկնածուի ղեկավարելու պաշտոնի վարձի 50-ից 1 000-ապարհիկը:					Ռուկոյախնա

## 1. Ընտրակարգեր

Ուսումնասիրվող երկրների ընտրակարգերը զգալիորեն տարբերվում են միմյանցից: Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայի փոքր քաղաքներում քաղաքապետերը և ավագանու անդամները ընտրվում են մեծամասնական ընտրակարգով:

Ուկրաինայի և Մոլդովայի համեմատաբար ավելի մեծ քաղաքներում քաղաքապետերը ընտրվում են քվեարկության մեկ կամ երկու փուլով, եթե առաջին փուլում թեկնածուներից ոչ մեկը ձայների 50%-ը չի հավաքել:

Ադրբեջանում քաղաքապետերը ընտրվում են իրենց քաղաքային խորհուրդների անդամների կողմից՝ ընտրություններին հաջորդող առաջին հանդիպման ժամանակ:

Բելառուսում տեղական ինքնակառավարման գործադիր մարմինների ղեկավարներին նշանակում է հանրապետության նախագահը:

Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում տեղական ինքնակառավարման և տարածքային մարմինների ավագանիների անդամներն ընտրվում են համամասնական ներկայացուցչական ընտրակարգով:

## 2. Ընտրական գրավները

Տեղական ինքնակառավարման մարմիններում առաջադրվելու համար գրավի ավելի քիչ պահանջներ են ներկայացնում, քան համապետական մակարդակում առաջադրվելու համար: Եթե թեկնածուները ներկայացնում են քաղաքական կուսակցություններ, ապա ընտրական գրավը վճարում է այդ կուսակցությունը:

## 3. Մանդատների թիվը

Ինչպես երևում է վերևում բերված աղյուսակից, այս թիվը շատ տարբեր է լինում: Մենք տեղեկատվությունն չենք ստացել բոլոր երկրներից և չենք կարող պարզել, թե արդյոք կանայք ավելի շատ ընտրվել են տեղական, գյուղական մակարդակում, թե մեծ քաղաքներում, բայց նախկին հետազոտություններից<sup>54</sup> կարելի է ենթադրել, որ դա այդպես է:

---

54. «Հավասար պայմաններով ժողովրդավարություն. իրականությունից հեռու երևույթ: «Քաղաքական և պետական որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» Եվրոպայի խորհրդի թիվ Rec (2003) 3 հանձնարարականի առաջին և երկրորդ փուլերի մշտադիտարկման արդյունքների համեմատական վերլուծություն»: Եվրոպայի խորհուրդ (2009 թ.), Ստրասբուրգ:



**Աղյուսակ 38. Բեյառուսում տեղական ինքնակառավարման ընտրություններ. տեղեկատվություն քաղաքային խորհուրդների 27-րդ գումարման (2014թ.) համար ընտրված պատգամավորների կազմի մասին**

Տեղական ինքնակառ. մակարդակը	Ընտրված կին պատգամավորների թիվը	Ընտրված պատգամավորների տոկոսային բաշխումն ըստ սեռի	
		Տղամարդիկ	Կանայք
Մինսկ	1	70.2	29.8
Տարածաշրջանային	6	80.3	19.7
Տարածքային	118	67.6	32.4
Քաղաքային շրջանային	10	71.7	28.3
Քաղաքային թաղամաս	14	59.1	40.9
Քաղաքային բնակավայր	19	58.2	41.8
Գյուղ	1160	48.4	51.6
<b>Ընդհանուրը</b>	<b>1328</b>	<b>53.7</b>	<b>46.3</b>

Հետազոտողի մեկնաբանմամբ այս հանգամանքը չի կարելի դիտարկել որպես կանանց գերիշխանություն, քանի որ որքան փոքր է համայնքը, այնքան հավանական է, որ կանայք կընտրվեն այդտեղ: Տեղական ինքնակառավարման փոքր համայնքում պատգամավոր լինելը պահանջում է առանց ֆինանսական վարձատրության աշխատանք, ուստի, հետազոտողը գտնում է, որ այս հանգամանքը տղամարդկանց վանում է առաջադրվելու գաղափարից:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Ուկրաինայի ընտրողների կոմիտեի կողմից պատրաստված զեկույցում<sup>55</sup> նշվել է, որ 2015թ. դրությամբ ցույց է տալիս, որ որքան բարձր է ներկայացուցչական մարմինը, այնքան ավելի քիչ կանայք են անդամակցում դրանց.

- ▶ Օբլաստներ (տարածաշրջաններ) 12%
- ▶ ռայոններ (շրջաններ) 23%
- ▶ գյուղեր 51%
- ▶ բնակավայրեր 46%

55. Ուկրաինայի ընտրողների կոմիտե, «Ուկրաինայում տեղական ինքնակառավարման մարմինների 2015թ. ընտրությունների ընտրական գործընթացներում կանանց մասնակցության մշտադիտարկման մասին վերջնական զեկույց»:

Հարցազրույցների մի քանի մասնակիցներ նկատեցին, որ կարողացել են առաջադրվել զուտ այն պատճառով, որ ծանոթ են եղել տարածքին և այդ տարածքում ճանաչում են վայելել:

«Ես ծնվել եմ այստեղ և իմ աշխատանքի բերումով [այդ կինը դպրոցի տնօրեն էր] ճանաչում եմ մարդկանց և քաջատեղյակ եմ նրանց խնդիրներին»:

#### 4. Անկախ թեկնածուներ

Մեր ստացած տեղեկությունների համաձայն անկախ թեկնածուներ կարող են առաջադրվել Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Բելառուսում անկախ թեկնածուները փաստացիորեն առաջադրվում են պետական մարմիններից և խոշոր պետական կազմակերպություններից:

#### 5. Թափուր տեղերը լրացնելը

Երկիրը	Ինչպես են լրացվում
Հայաստան	Եթե համայնքի ավագանու անդամների ընտրություններն անվավեր են ճանաչվում, նույն թեկնածուների կազմով վերաքվեարկություն է անցկացվում ընտրություններին հաջորդող 21-րդ օրը: Թեկնածուների նույն կազմով վերաքվեարկություն կարող է անցկացվել միայն մեկ անգամ:
Ադրբեջան	Թափուր տեղերը լրացվում են թեկնածուի կողմից հավաքված ձայների պարզ մեծամասնությամբ. մասնակցության նվազագույն շեմ նույնպես չկա: Եթե ընտրությունների արդյունքները որևէ կոնկրետ վարչատարածքային միավորում անվավեր են ճանաչվում, հաջորդող երկու ամիսների ընթացքում այդ տարածքում պետք է կազմակերպվեն նոր ընտրություններ: Եթե (ա) ընտրված համայնքի անդամը հրաժարվում է մանդատից, կամ (բ) կորցնում է մանդատը, կամ (գ) մահանում է, նոր ընտրություններից առնվազն վեց ամիս առաջ, ապա տվյալ տարածքում նոր ընտրությունները պետք է կազմակերպվեն հաջորդ երկու ամիսների ընթացքում: (ա) և (բ) կետերում նշված դեպքերում, այն անձը, որը հրաժարվում է մանդատից/կորցրել է մանդատը, չի կարող նորից առաջադրվել:
Բելառուս	Տվյալներ չկան:
Վրաստան	<ol style="list-style-type: none"> <li>Եթե Սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով ընտրված անդամի (տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին) մանդատը վաղաժամ կասեցվում է, ապա կուսակցական ընտրացուցակում նրան հաջորդող թեկնածուն երկու շաբաթվա ընթացքում գրավում է նրա տեղը տեղական ինքնակառավարման մարմնում:</li> <li>Եթե թեկնածությունը հետ վերցրած անդամը ընտրված է ընտրական բլոկի կողմից, ապա նրա տեղը զբաղեցնում է ընտրացուցակում նույն կուսակցության հաջորդ թեկնածուն:</li> <li>Եթե տեղական ինքնակառավարման մարմնի (Սակրեբուլոյի) մեծամասնական ընտրակարգով ընտրված անդամի լիազորությունը վաղաժամ դադարեցվում է, ապա հաջորդ մայիսին կամ հոկտեմբերին տեղի են ունենում լրացուցիչ ընտրություններ:</li> </ol>

Երկիրը	Ինչպես են լրացվում
Մոլդովա	Նոր ընտրություններ են հայտարարվում, եթե՝ - ավագանին իր լիազորությունները վաղաժամ դադարեցրել է, լուծարվել է, կամ ավագանու անդամների թիվը պակասել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված թվի մեկ երրորդից, - համայնքի ղեկավարը հրաժարական է տվել, հետ է կանչվել, կամ այլևս ունակ չէ իրականացնելու իր լիազորությունները:
Ուկրաինա	Կուսակցական ընտրացուցակում հաջորդը զբաղեցնում է տեղը, եթե կուսակցությունը հաղթահարել է անցողիկ շեմը: Կամ անցկացվում են նոր ընտրություններ՝ մեծամասնական ընտրությունների դեպքում:

**6. Զվտաներ և կառուցողական գործողություն (դրական խտրականություն). վարչական մակարդակ**

**Աղյուսակ 40. Զվտաներ և կառուցողական գործողություններ տեղական (կառավարման) մակարդակում**

Երկիրը	Ընդունված քվտա (նկարագրությունը)	Օրենսդրակ. պահանջ	Պատժամիջոց	Կիրարկում	Կամավոր	Խրախուսող միջոց
Հայաստան	Կիրառելի չէ:	Ոչ				Ոչ
Ադրբեջան	Կիրառելի չէ:	Ոչ				Ոչ
Բելառուս	Կիրառելի չէ:	Ոչ				Ոչ
Վրաստան	Լրացուցիչ 10% բյուջետային ֆինանսավորում այն կուսակցություններին, որոնք առկա են երկու տարբեր տեղերի ներկայացուցիչ ունեին ընտրացուցակի յուրաքանչյուր տասնյակում: 2014 թ-ից սկսած, այս թիվն աճել է մինչև 30% ֆինանսավորման, եթե ընտրացուցակի յուրաքանչյուր տասնյակի 30%-ը լինեն կանայք:	Ոչ	Քաղաքական այն սուբյեկտները, որոնք չեն պահպանում կամավոր քվտայի պահանջները, չեն ստանում 30% լրացուցիչ բյուջետային ֆինանսավորում:		Այո	Ոչ
Մոլդովա		Ոչ				Ոչ
Ուկրաինա	«Տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին» 2015թ. ընդունված նոր օրենք – 30% ներկայացվածություն ամեն սեռից թաղ. կուսակցությունների ընտրացուցակներում	Այո, բայց օրենքը ենթարկվել է փոփոխության:	Որոշ տեղական ինքնակառավարման ընտրական հանձնաժողովներ չեն գրանցում կուսակցական ընտրացուցակները, եթե այդ կուսակցությունները չեն պահպանում քվտայի պահանջները: Խեղճի շրջանում որոշ ընտրացուցակների մի մասում տղամարդկանց թիվը 30%-ից պակաս էր և այդպիսի ընտրացուցակները չգրանցվեցին մինչև դրանց մեջ փոփոխություններ չկատարվեցին:	Օրենքը վերանայվել է, ուստի, կիրարկվող հավասարաչափ չի եղել:		Ոչ

Վրաստանում երկու կուսակցական դաշինքներ ընդունեցին կամավոր քվոտան և ստացան 30% լրացուցիչ ֆինանսավորում: Հետագոտողի դիտարկմամբ՝ չնայած այս կանոնակարգումը դրական անդրադարձավ կին թեկնածուների թվի վրա, այնուամենայնիվ, դա բավարար չէ և արդյունավետորեն չի լուծում ընտրովի մարմիններում կանանց ներկայացվածության խնդիրը: 2014 թվականին տարածքային ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կին թեկնածուների թիվն ավելացավ մինչև 15%՝ մեծամասնական տեղերի համար, որը 2010 թվականին կազմում էր 11%, իսկ կուսակցական ընտրացուցակներով՝ մինչև 33%, 2010 թվականին այն կազմում էր 20%:

2015 թվականին Ուկրաինայում ընդունվեց նոր օրենք, որով ներմուծվեց 30% նվազագույն շեմ՝ կուսակցական ընտրացուցակներում սեռերից յուրաքանչյուրի ներկայացվածությունն ապահովելու համար, սակայն դրանով չէր սահմանվում, թե այդ թեկնածուները ընտրացուցակում ինչ դիրք պետք է զբաղեցնեն: Այս օրենքն ընդունվեց հապճեպորեն, ընտրություններից ոչ շատ առաջ, երբ դրա շուրջ դեռևս տարածայնություններ կային՝ կապված ոչ միատեսակ կիրառելիության հետ:

Եվրոպայի խորհուրդը հանձնարարեց Ուկրաինայի ընտրողների կոմիտեին (ՈւԸԿ)՝ հետազոտել ընտրությունների արդյունքները՝ կանանց ներկայացվածության տեսանկյունից:<sup>56</sup> Թեև օրենքը դեռևս ուժի մեջ չէր մտել, ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հետազոտվող համայնքներում կանայք կազմում էին քաղաքային խորհուրդներում անդամության համար թեկնածուների 32.1%-ը, որից ընտրվել էր 18.1%-ը: Այն օբյեկտներում (շրջաններում), որտեղ կանայք կազմել են թեկնածուների 29.6 տոկոսը, 15 տոկոսն էր ընտրվել: Կանանց և տղամարդկանց միջև հավասարակշռությունը բարելավվել է հետազոտվող 22 քաղաքներից 11-ում և 22 շրջաններից 17-ում: Կանայք գլխավորում էին ընտրական ցուցակները հետազոտվող տարածքներից 11.4 %-ում, սա նշանակում է, որ բարձրացել է նրանց գործունեության հրապարակայնության աստիճանը, ինչպես նաև նրանց մասին ավելի շատ է լուսաբանվել լրատվամիջոցներում:

ՈւԸԿ-ի եզրակացության համաձայն՝ նոր կարգավորումները արդյունք են տվել:

- ▶ Ընտրությունների վերաբերյալ հրապարակումներում կանանց վերաբերյալ լուսաբանումներն ավելի մեծ թիվ էին կազմում, քան նախկինում:
- ▶ Կանայք պատրաստ են նորից առաջադրվել (68.6%՝ կանայք, 59.3%՝ տղամարդիկ):
- ▶ Փորձառու, հմուտ և կարողություններով օժտված կանանց պակաս չկա:

56. Հասանելի է այստեղ՝ <http://cvu.org.ua/eng>.

## Արդյունքների ամփոփում

- ▶ Բոլոր ուսումնասիրվող երկրներում գոյություն ունի կանանց հավասար իրավունքներն ապահովող հստակ օրենսդրական դաշտ: Հայաստանը և Վրաստանը կանանց ընտրական իրավունքի վերաբերյալ առանձին իրավական դրույթեր են նախատեսել:
- ▶ Որոշ իրավական ակտեր, ինչպիսիք են, օրինակ, Մոլդովայում կին ՆՏԱ-ների կարգավիճակի և ֆինանսական մասնակցության նկատմամբ սահմանաչափի մասին դրույթները, կարող են կանանց նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն խտրական լինել: Գենդերային չեզոքություն ապահովող օրենսդրությունը անուղղակիորեն կարող է խտրական լինել, եթե այն չի հասցեագրում այն անբարենպաստ իրավիճակները, որոնցում կանայք կարող են հայտնվել:
- ▶ Ուսումնասիրվող երկրների հետազոտողները այն կարծիքին էին, որ ընտրակարգերն ինքնին խոչընդոտներ էին ներառում կանանց մասնակցության համար և որ համամասնական ներկայացուցչական/ կուսակցական ընտրացուցակով ընտրակարգը շահեկան է կանանց համար և նպաստում է ավելի մեծ թվով կանանց առաջադրմանը: Վրաստանից ստացված տվյալները ցույց են տալիս, որ ավելի շատ կանայք են ընտրվել համամասնական ընտրակարգով, քան մեծամասնական ընտրություններով: Այնուամենայնիվ, ուսումնասիրությանը չհաջողվեց ցույց տալ համամասնական ներկայացուցչական ընտրակարգի դրական ազդեցությունը կին թեկնածուների հաջողության ցուցանիշի վրա: Եթե չկա այնպիսի պահանջ, որ ընտրացուցակներում կանայք պետք է ընգրկվեն շահեկան դիրքերում, ապա հաջողության համար հիմնական որոշիչ գործոնը հավանականությունն է, որ իրենց կուսակցությունը քվեներ կշահի:
- ▶ Արդյունքում, կին թեկնածուների հաջողության ցուցանիշները գիջում են տղամարդկանց ցուցանիշներին:
- ▶ Որոշ դեպքերում ստացված փաստերով հիմնավորվում էր այն պնդումը, որ որքան փոքր է ներկայացվող տարածքը, այնքան կանանց թիվը ավելի մեծ է:
- ▶ Ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի դեպքում, որտեղ օրենսդրի և/կամ տեղական ինքնակառավարման մակարդակում ընտրությունների համար ներմուծվել են քվոտաներ և կառուցողական գործողություններ, սա ունեցել է թեև սահմանափակ, բայց դրական ազդեցություն:
- ▶ Քվոտաների և կառուցողական գործողությունների մասին դրույթների արդյունավետ կիրարկումը անհրաժեշտ պայման է կանանց համար հաջողությունն ապահովելու տեսանկյունից:

- ▶ Զաղաքական կուսակցության կողմից որպես թեկնածու ընդունվելու դժվարություններից գատ, որոնք քննարկվել են քաղաքական կուսակցությունների մասին բաժնում, եկամուտների և ունեցվածքի մանրամասն ներկայացնելու պահանջը կարող է կին ընտրողներին ոչ շահեկան լույսի ներքո ներկայացնել: Զանի որ կին թեկնածուները գլխավորապես աշխատում են պետական հատվածում, ուստի, նրանք քիչ հավանական է, որ կունենան զգալի եկամուտներ, խնայողություններ կամ գույք:
- ▶ Ֆինանսական ծախսերը և ընտրաշարվի ժամանակ հրապարակայնություն ձեռք բերելու դժվարությունը կարող են զգալի դեր խաղալ կանանց և անկախ թեկնածուներին առաջադրվելու գաղափարից հետ պահելու հարցում:
- ▶ Կին թեկնածուների հաջողության ցուցանիշները շարունակում են զիջել տղամարդկանց ցուցանիշներին, սակայն այդ տարբերությունը շատ մեծ չէ: Ամենամեծ տարբերությունը դիտարկվում է Հայաստանում՝ միակ երկիրը, որն ընդունել է քվտայի մասին դրույթ, բայց որի առնչությամբ տեղեկություններ չունենք, թե ընտրվելուց հետո կին թեկնածուները հոգուտ տղամարդկանց քանի մանդատ են վայր դրել, որի արդյունքում պատկերը փոփոխվել է:
- ▶ Այնուամենայնիվ, Հայաստանից և Վրաստանից ստացված տեղեկատվության համաձայն, եթե կանայք թեկնածություն են ներկայացրել մեծամասնական տեղերի համար այն կուսակցությունների կազմում, որոնց դեպքում հաղթելու հավանականությունը մեծ է, ապա նրանք ընտրվելու ավելի մեծ շանսեր ունեն:
- ▶ Այն դեպքերում, երբ կան սահմանված քվտաներ, արդյունավետությունը հավասարվում է գրոյի, եթե կանանց թույլատրվում է հանել իրենց թեկնածությունը ընտրական ցուցակը հաստատվելուց կամ ընտրություններից հետո, որի արդյունքում նրանց տեղերը զբաղեցնում են տղամարդիկ:
- ▶ Իրենց ընտրացուցակներում կանանց համար 30% նվազագույն շեմ սահմանող կուսակցություններին տրամադրվող պետական ֆինանսավորումը մեծացնելու կառուցողական գործողության արդյունքում Վրաստանում 2014թ. տարածքային կառավարման ընտրությունների ժամանակ հաջողվեց ավելացնել կին թեկնածուների թիվը՝ 2010թ. մեծամասնական 11-15%-ից և կուսակցական ընտրացուցակներով 20%-ից դարձնելով 33%: Այնուամենայնիվ, սա ընտրված կանանց թվի վրա զգալի ազդեցություն չունեցավ:

## Դ. ԱԶԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հետազոտողներին հանձնարարվել էր պարզել, թե ինչ առանձին միջոցներ են ներմուծվել, որոնք կանանց օգնել են առաջադրվել որպես թեկնածուներ և ընտրվել:

### Հայաստան

Կառավարությունը հասարակական կազմակերպությունների հետ համատեղ անցկացնում է ամենամյա մրցաշար, որի նպատակն է բարձրացնել գենդերային իրավահավասարության մասին իրազեկվածության մակարդակը:

Մրցանակները շնորհվելու են՝

- ▶ գենդերային քաղաքականություն իրականացնող լավագույն քաղաքային համայնքին,
- ▶ գենդերային քաղաքականություն իրականացնող լավագույն գյուղական համայնքին,
- ▶ լավագույն կին ձեռնարկատիրոջը,
- ▶ գենդերային խնդիրներ լուսաբանող լավագույն լրատվամիջոցին:

Հիմնական միտումը գենդերային խնդիրների մասին բարձրաձայնումն է գյուղական շրջաններում, որտեղ մշակութային կարծրատիպերն ամենաամուրն են:

### Ադրբեջան

Ադրբեջանում աջակցող միջոցներ չեն հայտնաբերվել:

### Բելառուս

Վերջին մի քանի տարում որոշ դրական տեղաշարժ եղել է, որը պետք է հաշվի առնել:

## Ընդդիմադիր շարժումներ և ցանցեր

«Կանանց անկախ ժողովրդավարական շարժում» հասարակական ընկերակցությունը 2011թ. նախաձեռնել էր Գենդերային խնդիրների ազգային հարթակի (ԳԱՀ) շուրջ աշխատանք: Նախապատրաստական զգալի աշխատանք էր տարվել, և մոտ 30 կազմակերպություն (ընդդիմադիր քաղաքական կուսակցություններ և հասարակական ընկերակցություններ) ստորագրել էին ԳԱՀ-ը: Բայց դրանից հետո աշխատանքները գրեթե դադարել էին: ԳԱՀ-ի անդամները տարին երկու անգամ կանոնավոր ժողովներ էին հրավիրում, բայց նրանք դեռևս իրական փոփոխությունների չեն հասել:

«Մառա» կանանց ցանցը ստեղծվել է 2014թ.: «Մառա»-ն միավորում է (ընդդիմադիր) քաղաքական կուսակցություններից երիտա-

սարդ կանանց, որոնք ցանկանում են դրական փոփոխություններ կատարել իրենց կուսակցությունների ներսում և ավելացնել իգական սեռի անդամների թիվը՝ ընդհանրապես, և կուսակցությունների խորհուրդներում՝ մասնավորապես: Նրանց հիմնական խնդիրը կուսակցության ներքին կազմակերպական կառուցվածքն է և ոչ թե քաղաքական ծրագրերը:

## **Վրաստան**

### **Ընտրատարածքների թիվը**

2014թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում մանդատների թիվը ավելացել է տեղական ինքնակառավարման յուրաքանչյուր ընտրատարածքում: Զանի որ ավելի մեծ թվով կանայք են ընտրվում համամասնական կուսակցական ընտրացուցակով, ուստի ընտրատարածքների ավելացված թիվը (յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման համայնքում՝ 10-15) նպաստավոր գործոն է կին թեկնածուների համար: Այնուամենայնիվ, մեծամասնական ընտրակարգով միամանդատ ընտրատարածքները դեռևս պահպանվում են, ինչը շարունակում է պահպանել կանանց համար անբարենպաստ պայմանները:

### **Ընտրական շեմ**

Զանի որ կանայք հիմնականում զբաղեցում են ընտրացուցակների ստորին հատվածները, (7%-ից 5%) նվազեցված ընտրական շեմը մեծացնում է ընտրվելու նրանց շանսերը:

### **Աջակցություն էթնիկ փոքրամասնության ընտրողներին**

Քվեարկության վերաբերյալ ընտրական նյութերը և տեղեկագրերը հասանելի են տարբեր լեզուներով: Փոքրամասնությունների լեզուներով նաև անցկացվում են հեռուստաբանավեճեր՝ փորձելով խթանել էթնիկ փոքրամասնություն կազմող ընտրողների մասնակցությունն ընտրություններին:

## **Մոլդովա**

### **Վերապատրաստում**

Կանանց վերապատրաստումը և նրանց թեկնածության առաջադրումը խրախուսելը պետք է իրականացվեն ընտրական ժամանակաշրջանից առնվազն երկու տարի առաջ: 2007թ. տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքում 163 կանայք ընտրվել են համայնքի ղեկավարների պաշտոնում, 2011թ. այդ ցու-



ցանիշը կազմել է 166: Պարզ էր, որ ընտրական քարոզարշավից առաջ վերապատրաստում անցկացնելը չափազանց ոչ արդյունավետ միջոց է ընտրվող կանանց թիվը ավելացնելու հարցում: Շատ կազմակերպություններ 2015թ. տեղեկան ինքնակառավարման ընտրությունների համար վերապատրաստումները սկսեցին անցկացնել շատ ավելի վաղ: 2015թ. տեղական ինքնակառավարման ընտրություններին 183 կանայք ընտրվեցին որպես համայնքի ղեկավարներ:

ՄԱԿ-Կանայք ծրագիրը և ՄԱԶԾ-ը համատեղ սոցիալական լրատվամիջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ վերապատրաստումներ են անցկացնում օրենսդիր մարմնի կին անդամների համար, որոնց նպատակն է ընտրողների շրջանում նրանց ավելի տեսանելի դարձնելը և ընտրազանգվածի հետ կապ հաստատելու հարցում նրանց օգնելը:

## Քվոտաներ

«Գենդերային իրավահավասարության հարթակը» հասարակական կազմակերպությունների դաշինք է, որի նպատակն է խթանել պետական քաղաքականության ոլորտում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Նրանք աշխատում են Մոլդովայի խորհրդարանում ընտրված կանանց 40% քվոտա ներմուծելու ուղղությամբ:

2016թ. ապրիլին Մոլդովայի խորհրդարանը օրենք՝ ընդունեց թեկնածուների կուսակցական ընտրացուցակներում առնվազն 40% կին թեկնածուների քվոտա ներմուծելու մասին: Այդուհանդերձ, այս օրենքը դեռևս պարտադիր ուժ չունի:

## Լրատվամիջոցներ

2013թ. «Անկախ մամուլի ասոցիացիան» և ՄԱԿ-ի «Կանանց տնտեսական տնտեսական հզորացման» ծրագրի շրջանակներում գործող ՄԱԿ-Կանայք ծրագիրը համատեղ իրականացրեցին մի ծրագիր,<sup>57</sup> որի ժամանակ 17 տպագիր և առցանց զանգվածային լրատվամիջոցներ վերլուծեցում էին կին և տղամարդ թեկնածուների վերաբերյալ իրենց նյութերը՝ դրանք ներկայացնելով միջազգային փորձագետների օգնությամբ կազմված աղյուսակների միջոցով: Վերլուծությունը հրապարակվում էր ամիսը մեկ անգամ: Շուրջ ինն ամիս տևած ծրագրի ընթացքում նրանց կողմից պատրաստված լուսաբանումներն աստիճանաբար դարձան ավելի հավասարակշռված, թեև որոշ լուրջ խնդիրներ դեռևս գոյություն ունեին: 2013թ. փետրվարին կանանց մասին հոդվածների թիվը կազմել էր 16.7%, իսկ 2013թ. հոկտեմբերին դրանց թիվն ավելացել էր հասնելով 28.6%-ի:

---

57. Հասանելի է այստեղ՝ [http://api.md/upload/editor/FINAL\\_REPORT\\_Mass-media\\_institutions\\_self-assessment\\_through\\_gender\\_dimension.pdf](http://api.md/upload/editor/FINAL_REPORT_Mass-media_institutions_self-assessment_through_gender_dimension.pdf).

## Ուկրաինա

### «Հավասար հնարավորություններ» գեղերային հարցերի խորհրդարանական խումբը

Առաջին անգամ Վերիսովա Ռադայում (Ուկրաինայի խորհրդարան) 2011թ. ստեղծվեց «Հավասար հնարավորություններ» խորհրդարանական խումբը: Խմբում ընդգրկված էր խորհրդարանի տարբեր խմբակցություններ ներկայացնող 15 պատգամավոր: Հիմնադիրները որպես առաջնահերթություն սահմանեցին տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների ընդլայնումը՝

- ▶ աշխատաշուկայում,
- ▶ կրթության ոլորտում,
- ▶ բուժսպասարկման հասանելիության առումով,
- ▶ Ուկրաինայի սոցիալական և քաղաքական կյանքին մասնակցության առումով:

Մասնավորապես, նրանք ծրագրում էին համագործակցել մի շարք սոցիալական օրենքների և նախաձեռնությունների ընդունման հարցում, որոնց նպատակն էր պայքարել ընտանեկան բռնության դեմ և պաշտպանել երեխաներին, ընտանիքներին և միայնակ մայրերին կամ հայրերին: Խմբի առաջին համատեղ նախաձեռնություններից էր Ուկրաինայի վարչական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը, որը վերաբերում էր ընտանեկան բռնության համար պատասխանատվության միջոցների խստացմանը: Ուկրաինայի խորհրդարանի այն ներկայացուցիչները, որոնք անդամակցում էին խմբին, գտնում էին, որ խմբի նպատակներից մեկը պետք է լինի գեղերային քաղաքականության նկատմամբ հանրային վերաբերմունքը փոխելը: Մասնավորապես, նրանք «նախատեսում էին բարձրաձայնել կուսակցական ընտրացուցակներում կանանց ներկայացվածության ավելացմանն ուղղված կամավոր քվոտայի ներմուծման խնդիրը»:

7-րդ գումարման խորհրդարանը շարունակեց ավանդույթը և 2012թ. դեկտեմբերի 25-ին հիմնեց հավասար իրավունքների ապահովմամբ զբաղվող մեկ այլ խումբ: Խորհրդարանի անդամներից բաղկացած նոր ստեղծված խորհրդարանական խումբը համաձայնեց պաշտպանել գեղերային իրավահավասարության սկզբունքները կանանց քաղաքական կյանքում ընդգրկելու մասով և այս հարցի վերաբերյալ մշակել համատեղ օրենսդրական նախաձեռնություններ:

2013թ. տարբեր քաղաքական դիրքորոշումների պատճառով այս խումբն, ի վերջո, բաժանվեց երկու առանձին խմբերի: Ուկրաինայում տիրող քաղաքական իրավիճակի պատճառով մինչև տվյալ նստաշրջանի ավարտը կանանց իրավունքներով զբաղվող աջակցման այդ խմբերն ակտիվ գործունեություն չէին ծավալում:

2014թ. խորհրդարանի անդամները ստեղծեցին միջկուսակցական գեղերային աջակցման խումբ՝ «Հավասար հնարավորություններ» անվանմամբ, որն ընդգրկում էր 26 պատգամավորների:

Նրանք նախատեսում էին իրենց ուշադրությունը սևեռել երկու առանցքային ուղղությունների վրա՝ կանանց քաղաքական կյանքում ակտիվորեն ներգրավելու տեսանկյունից գենդերային հավասարության պահպանում, ինչպես նաև սրան օժանդակելու նպատակով համատեղ օրենսդրական նախաձեռնությունների ներկայացում:

Խմբի աշխատանքների առաջնային ոլորտներից են՝

- ▶ գենդերային խնդիրների վերհանումը խորհրդարանում, օրինակ՝ կրծքագեղձի քաղցկեղի դեմ պայքարը կամ գենդերային հարցերի վերաբերյալ միջազգային միջոցառումներին մասնակցելը,
- ▶ գենդերային քվոտայի հաստատումը «Քաղաքական կուսակցությունների մասին» (2013թ.) և «Տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին» (2015թ.) երկու օրենքներում ներառելու միջոցով:
- ▶ խորհրդարանի մասնաշենքերից մեկում մանկական սենյակի բացումը:

Մինևույն ժամանակ որոշ խնդիրները շարունակում են մարտահրավեր նետել աջակցման խմբի առավել արդյունավետ գործունեությանը, ինչպես օրինակ՝

- ▶ խորհրդարանի որոշ անդամների կողմից գենդերային քաղաքականության թյուրըմբռնումը, այդ թվում նաև՝ «երեխաների խնդիրները կանանց խնդիրներն են» ձևակերպման տեսքով,
- ▶ խմբակցությունների քաղաքական տարածայնությունները շարունակում են պառակտող դեր խաղալ գենդերային աջակցման խմբի անդամների շրջանում,
- ▶ գենդերային խմբի և քաղաքացիական հասարակության միջև ամուր կապերի բացակայությունը:

Չնայած վերը թվարկված բոլոր մարտահրավերներին՝ Վերիսովա Ռադայի «Հավասար հնարավորություններ» գենդերային աջակցման խմբի գենդերային իրավահավասարության հաստատմանն ուղղված ջանքերը հաջող արդյունք են տվել:

## **Հարցազրույցի մասնակիցների պատասխանները**

Հարցազրույցին մասնակցած 53 կանանց խնդրել էինք թվարկել այն հիմնական միջոցները, որոնք օժանդակել էին նրանց ընտրական քարոզարշավի ընթացքում և ընտրվելուց հետո:

Ամենակարևոր աջակցող գործոնը նշվել է ընտանիքի աջակցությունը:

Հարցվածներից շատերի համար, հատկապես նրանց, որոնք իրենց թեկնածությունն էին առաջադրել փոքր քաղաքներում և գյուղերում, ընտանիքի անդամները քարոզարշավի ժամանակ իրենց օգնած միակ մարդիկ էին:

Քաղաքական կուսակցությունների աջակցությունը հիմնականում եղել է թերթոններով կամ այլ գովազդային նյութերով ապահովու-

մը: Երեք մասնակից նշել է թեկնածուների համար կուսակցությունների կողմից կազմակերպված ճեպագրույցների մասին, իսկ մեկ մասնակից նշել է կին թեկնածուների համար առաջնորդության և հաղորդակցության թեմաներով հատուկ վերապատրաստման մասին: Հարցագրույցի երկու մասնակից նշել է, որ իրենց աջակցել է կուսակցության ղեկավարը, իսկ երկու այլ մասնակցի կարծիքով նրանց համար աջակցության աղբյուր էր կուսակցության շրջանակում ձեռք բերած փորձառությունը: Մի դեպքում կուսակցությունը քարոզարշավի շրջանակում կազմակերպել է միջոցառումներ և համերգներ:

Կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունները նույնպես նշվել են որպես աջակցման աղբյուրներ: Դրանք աջակցել են վերապատրաստումներ և աշխատաժողովներ կազմակերպելու միջոցով: Հարցվածներից երեքը նշել են, որ ՀԿ-ները և համապետական տեղական կառավարման ասոցիացիան շարունակաբար մենթորական ուղղորդում են իրականացրել: Այնուամենայնիվ, հարցվածներից մի քանիսը նշել են կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ներից ստացվող ընդհանուր օգնությունն ու օժանդակությունը՝ որպես թեկնածու առաջադրվելու ոգեշնչման աղբյուր: Թեկնածուներից մեկին առաջադրվելու համար խրախուսել է միջազգային կազմակերպություններից մեկը, որն աջակցում է այն՝ Էթնիկ փոքրամասնությանը, որին պատկանում էր թեկնածու:

Հարցագրույցին մասնակցածների կողմից նշված աջակցման այլ աղբյուրները ներառում էին՝

- ▶ կուսակցական ընտրացուցակով ընտրակարգը, այն իմաստով, որ իրենք միայնակ չէին մասնակցում քարոզարշավին.
- ▶ կուսակցական ընտրացուցակներում կանանց համար քվոտաների առկայությունը,
- ▶ «Հավասար հնարավորություններ» խորհրդարանական խմբի աջակցությունը, որը տեղական մակարդակով հանդիպում էր հրավիրել,
- ▶ սոցիալական լրատվամիջոցները, այդ թվում՝ սփյուռքի լրատվամիջոցները, որպես աջակցում ստանալու միջոց (նշվել է երեք մասնակցի կողմից),
- ▶ ստորագրահավաքը՝ տեղական մակարդակով աջակցությունն ուժեղացնելու նպատակով,
- ▶ տեղական համայնքում լավ ճանաչված լինելու հանգամանքը. սա վերաբերում էր հիմնականում փոքր գյուղերին և քաղաքներին:

## **Կառուցողական գործողությունների օրինակներ այլ երկրներից**

### **Իրազեկության բարձրացում**

Թուրքիայում «Կին թեկնածուների աջակցման ասոցիացիան»՝ «ԿԱ.ԴԵՐ»-ը, հանրային իրազեկման նորարարական քարոզարշավ-

ներ է անցկացրել՝ ընդգծելով ընտրություններում կին թեկնածուների պակասը: 2007թ. նրանք պատրաստեցին բիզնեսի ոլորտում հայտնի կանանց պաստառներ, ինչպես նաև փողկապով և բեղերով պատկերված դերասանների և երգիչների պաստառներ՝ հետևյալ կարգախոսով. «Խորհրդարան մուտք գործելու համար տղամարդ լինելն անպայման է»: 2009թ. իրենց ուղերձը լսարանին հասցնելու նպատակով նրանք օգտագործեցին ցուցապաստառներ, որտեղ պատկերված էին առաջատար կուսակցությունների երեք տղամարդ առաջնորդները՝ ուս-ուսի տված, որն ուղեկցվում էր տեքստով, որը հուշում էր, որ նրանք միասնական են տղամարդ թեկնածուներին նախապատվություն տալու հարցում:<sup>58</sup>

## Համալրման նախաձեռնություններ

2012թ. Ռուբզերս համալսարանի «Ամերիկայի կանանց և քաղաքականության կենտրոնը» նախաձեռնեց ծրագիր, որի թիրախը 45 տարեկանից բարձր ղեկավար պաշտոնների հավակնող և ընտանեկան ավելի քիչ պարտականություններ ունեցող կանայք էին: Նրանց հարցրել էին, թե երբևիցե մտածել են քաղաքական գործիչ դառնալու մասին և ընդգրկել նրանց իրենց վերլուծական կենտրոններում գործող վերապատրաստման ծրագրերում ու դրամահավաք ցանցերում, որոնք ստեղծվել են ընտրություններին կանանց հաջողությունը ապահովելու համար:<sup>59</sup>

Տարիքային մյուս սահմանային խմբում «Պարմանուհի սկաուտների միջազգային կազմակերպություն» է աշխատանքներ տանում. այն շատ երկրներում իրականացնում է «Օգնիր նրան հաջողության հասնել» կոչվող երկարաժամկետ քարոզարշավը, որի նպատակն է աղջիկների շրջանում խթանել «հավասարակշռված առաջնորդությունը» և ապահովել «տասնամյակների ընթացքում հասարակության բոլոր ոլորտներում և մակարդակներում կանանց համահավասար ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում»:

## Դրամահավաք ցանցեր

ԱՄՆ-ում գործունեություն ծավալող ԷՄԻԼԻՍ ԼԻՍԹ կազմակերպությունը հիմնադրվել է 1985թ.՝ կանանց հավաքագրելու և վերապատրաստելու նպատակով, ինչպես նաև նրանց օգնելու ընտրությունների համար աջակիցների շրջանում կազմակերպել դրամահավաք: Կազմակերպության անդամների խոսքերով այն աջակցել է Ժողովրդավարական կուսակցությունից 87 կին կոնգրեսականի, 16 սենատորի, 9 նահանգապետերի և ավելի քան 500 կանանց նահանգային և տեղական պաշտոններում ընտրվելու գործում:<sup>60</sup>

58. Հասանելի է այստեղ՝ [www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=campaign-for-women-launched-at-empty-hall-2010-10-11](http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=campaign-for-women-launched-at-empty-hall-2010-10-11):

59. Հասանելի է այստեղ՝ [www.cawp.rutgers.edu/sites/default/files/resources/pressrelease\\_10-07-10\\_2012.pdf](http://www.cawp.rutgers.edu/sites/default/files/resources/pressrelease_10-07-10_2012.pdf):

60. Հասանելի է այստեղ՝ [www.emilyslist.org](http://www.emilyslist.org)

## **Քաղաքական կուսակցությունների կողմից ձեռնարկվող միջոցառումներ**

Բրիտանական լեյբորիստական կուսակցությունը որդեգրել է «Բոլոր կանանց կարճ ցուցակը» կարճաժամկետ քաղաքականությունը: Երբ խորհրդարանի կին անդամը պաշտոնաթող է լինում կամ հեռանում է պաշտոն զբաղեցնող կուսակցության տղամարդ անդամը, որի մանդատը ամենայն հավանականությամբ շահելու է տվյալ կուսակցությունը, ապա կուսակցության տեղական մասնաճյուղի անդամները պետք է հաջորդ թեկնածուին ընտրեն կանանց ցուցակից: Այս գործելակերպը կիրառվում է թե՛ համապետական և թե՛ տեղական մակարդակներում: 2015թ. ընտրություններից հետո լեյբորիստական կուսակցության խորհրդարանական անդամների 43%-ը կանայք են:

Շվեդիայում առաջատար կուսակցություններում ընդգրկված կանանց թւերը կազմում են տվյալների բազա՝ պոտենցիալ կին թեկնածուների անուններով և ինքնակենսագրություններով, որը կուսակցության ղեկավարության պահանջով ներկայացվում էր վերջինիս՝ կուսակցության ընտրացուցակներում կանանց ընդգրկելու համար:

## **Խորհրդարաններում աշխատանքային պայմանները**

Դանիայում քվեարկությունը դադարեցվում է երեկոյան ժամը 7-ից հետո: Շվեդիայում հնարավորինս խուսափում են երեկոյան ժամերին քվեարկությունից և քվեարկությունը սովորաբար չի անցկացվում երկուշաբթի և ուրբաթ օրերին: Խորհրդարանների մոտ 40%-ը իր աշխատանքային գրաֆիկը հարմարեցնում է դպրոցական արձակուրդների հետ:

Շոտլանդիայում խորհրդարանի անդամների և այցելուների համար նախատեսված են երեխայի խնամքի հարմարություններ: Սա համարվում է «բաց և հասանելի խորհրդարան ստեղծելու կարևոր նախապայման»:

## **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

- ▶ Վերապատրաստման ծրագրերը կարևոր են կանանց թեկնածությունն առաջադրելուն խրախուսելու և քարոզարշավիը նթաքցում և ընտրվելուց հետո նրանց օժանդակելու համար: Նման ծրագրերի արդյունավետությունն ապահովելու համար դրանք պետք է մեկնարկեն ընտրություններից առնվազն երկու տարի առաջ:
- ▶ ՀՀ-ները և այլ կազմակերպությունները կարող են չափազանց կարևոր դեր խաղալ վերապատրաստումների կազմակերպ-

61. Վիգթրանդ Բ. (1981թ.), Շվեդ կանայք՝ շարժման մեջ, Շվեդիայի ինստիտուտ, Ստոկհոլմ:

62. Պալմիերի Ս. (2011թ.), «Գեղեցիկ գործոնները հաշվի առնող խորհրդարաններ», Միջխորհրդարանական միություն, ժնև:

63. Հասանելի է այստեղ՝ [www.scottish.parliament.uk/visitandlearn/12522.aspx](http://www.scottish.parliament.uk/visitandlearn/12522.aspx).

ման և կանանց՝ իրենց թեկնածությունն առաջադրելու խրախուսման հարցում:

- ▶ Կուսակցական ընտրացուցակներով ընտրակարգը օգնում է կանանց առաջադրման հարցում, քանի որ քարոզարշավը ավելի հեշտ է իրականացնել որպես խմբի մասնակից:
- ▶ ՀԿ-ները կարևոր դեր են խաղում կին թեկնածուների համար ընտրազանգվածի շրջանում աջակիցների ձեռք բերելու և օրենսդիր մարմինների նկատմամբ ճնշումներ գործադրելու ու նրանց հաշվետու պահելու հարցերում:
- ▶ Լրատվամիջոցների ինքնամշտադիտարկումը ավելացնում է կանանց վերաբերյալ հոդվածների թիվը:
- ▶ Կանանց և տղամարդկանց իրավահավասարությանն ուղղված միջկուսակցական փոխօգնությունը և համագործակցությունը, որոնք, օրինակ, իրականացվում են Ուկրաինայի խորհրդարանականների գենդերային խմբի կողմից, այդ խնդիրներին առավել հնչեղություն են տալիս և օգնում են ապահովել առաջընթաց:
- ▶ Կանանց առանձին խմբեր թիրախավորող նախաձեռնությունները, ինչպես օրինակ՝ տարիքով կամ ավելի երիտասարդ կանանց ուղղված քարոզարշավները, ևս կարող են հաջողություն ապահովել:
- ▶ Կանանց ֆինանսական միջոցների սղության խնդիրները լուծելուն հասցեագրված գործողությունները կարող են ավելի մեծ թվով կանանց խրախուսել ընտրություններին առաջադրելու իրենց թեկնածությունը:
- ▶ Խորհրդարանների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակարգը կարելի է կազմակերպել այնպես, որ կանանց համար դրանց մասնակցելը լինի ավելի հարմար:

## Գլուխ 4.

# Եզրակացություն

**Ո**ւսումնասիրությունն օգնեց ձեռք բերել քանակական և որակական տեղեկություններ ԱԳ երկրներում կանանց վիճակի մասին և այն մասին, թե այդ վիճակը ինչպես է ազդում թեկնածությունն առաջադրելու և համապետական, շրջանային և տեղական մակարդակներում ընտրվելու նրանց հնարավորությունների վրա:

Ուսումնասիրվող երկրներից յուրաքանչյուրում ընդունվել են կանանց և տղամադրկանց համահավասար իրավունքներ երաշխավորող օրենսդրություններ, այնուամենայնիվ, կանանց քաղաքական ներկայացվածությունը հավասար չէ: Ուսումնասիրվող երկրներում կանանց միջինը 23%-ը խորհրդարանական ընտրությունների թեկնածուներ են, որոնց միայն 16%-ն է ընտրվել: Այս թիվը տատանվում է Մոլդովայի թեկնածուների 30%-ի և Հայաստանի և Արդրբեջանի թեկնածուների 18%-ի միջակայքում: Բելառուսի խորհրդարան ընտրվածների 27%-ը կին է, բայց Հայաստանում կանայք կազմում են խորհրդարանի միայն 10%-ը:

Ուսումնասիրված բոլոր երկրներն ունեն բազմաթիվ նմանություններ և, անկախ իրենց տարբեր քաղաքական իրադրություններից և մարտահրավերներից, դրանք բոլորն էլ ձգտում են ընդլայնել կանանց քաղաքական ներկայացվածությունը:

Ուսումնասիրությանը հաստատվել է կանանց քաղաքական ներգրավվածության համար զգալի խոչընդոտների առկայությունը:

Բոլոր հետազոտողները և հարցազրույցներին մասնակցած 53 կանանցից 21-ը որպես հիմնական խոչընդոտ առանձնացրել են կանանց դիրքի մասին հասարակության շրջանում խորը արմատներ գցած մշակութային կարծրատիպերը, վերաբերմունքը, արժեքները, նորմերն ու նախապաշարմունքները: Տարածված է այն համոզմունքը, որ կանանց հիմնական դերը տանը՝ ընտանիքի մասին հոգ տանելն է, և որ նրանք որոշումներ կայացնելու կամ կազմակերպությունների աշխատանքը ղեկավարելու համար չունեն բավարարունակություններ, և այս հարցում նրանք զիջում են տղամադրկանց:

Կանանց նկատմամբ այս վերաբերմունքը առավել ցայտուն կերպով արտացոլվում է կանանց նկատմամբ բռնությունների հարցում դրսևորվող մոտեցումներում: Նույնիսկ այն դեպքերում, եթե ընդունվել են համապատասխան օրենսդրական ակտեր, ինչպես օրինակ՝



Աղբբեջանում, Վրաստանում և Մոլդովայում, այնուամենայնիվ, պատկան մարմիններին հաղորդված դեպքերի և հարուցված գործերի թիվը մնում է ՀԿ-ներին հայտնի դարձած դեպքերի թվից անհամեմատ ցածր: Օրինակ՝ հաշվարկվել է, որ Բելառուսում երեք կանանցից մեկը ենթարկվել է ֆիզիկական բռնության:

Կանայք պակաս շահեկան դիրքում են նաև տնտեսական առումով: Կանանց միջինը 52% և տղամարդկանց 65% է մասնակցում աշխատանքային շուկայում:

Կանանց եկամուտներն ավելի ցածր են: Ուսումնասիրվող երկրներում նրանք միջինը ստանում են տղամարդկանց ստացած եկամտի 59%-ը:

Կանայք, իհարկե, զբաղեցնում են ղեկավար պաշտոններ. այս հարցում Բելառուսը և Մոլդովան ԱՄԿ-ի կողմից հետազոտված 128 երկրներից 10 առաջատարների շարքում են: Այդուհանդերձ, աշխատաշուկայում նրանց ենթարկում են խտրականության: Նրանք հիմնականում աշխատում են ցածր վարձատրվող ոլորտներում, ինչպես օրինակ՝ հյուրանոցներում և սննդի ոլորտում, մանրածախ առևտրում, կրթության, առողջապահության և սոցիալական խնամքի ոլորտներում: Եվ սա անկախ այն հանգամանքից, որ այժմ բոլոր ուսումնասիրվող երկրներում, բացառությամբ Աղբբեջանի, համալսարանական կրթությամբ կանանց թիվը ավելի մեծ է, քան տղամարդկանց:

Մշակութային կարծրատիպերը և կանանց տնտեսական վիճակի վրա դրանց ունեցած ազդեցությունը բողոքի տեղիք են տալիս, քանի որ դրանց պատճառով կանայք չեն կարողանում առաջադրել իրենց թեկնածությունը ընտրությունների ժամանակ:

Ներկայումս կին թեկնածուները և ընտրված կանայք փոքրամասնություն են կազմում: Սա նշանակում է, որ նրանց նկատմամբ պահանջներն ավելի մեծ են, քան նույն դիրքը զբաղեցնող տղամարդկանց նկատմամբ: Ավելի ունակ, բանիմաց կանանց ներկայությունը խորհրդարաններում, ազգային ժողովներում և տեղական ու շրջանային կառավարման օղակներում կբարձրացնի նրանց տեսանելիությունը, և նրանք այլևս չեն դիտվի որպես բացառություններ, ինչի արդյունքում կմեծանա այս աշխատանքը կատարելու նրանց ունակության նկատմամբ հանրային վստահությունը, որն էլ կօգնի պայքարել կարծատիպային տեսակետների դեմ:

Թեկնածուների և ընտրված կանանց մասին մեր ունեցած տեղեկությունները հաստատում են սա: Որպես թեկնածու առաջադրված կանայք տիրապետում են բավականաչափ հմտությունների և մեծ փորձառություն ունեն: Գրեթե բոլորն ունեն բարձրագույն կրթությամբ հաստատված որակավորումներ՝ 100%՝ Հայաստանում, Աղբբեջանում և Բելառուսում, 98%՝ Ուկրաինայում: Հարցազրույցներին մասնակցած կանայք մասնագիտական և առաջնորդի հմտություններ պահանջող ղեկավար և ազդեցիկ պաշտոններ են զբաղեցրել, օրինակ՝ աշխատել են որպես հիվանդանոցների տնօրեններ, իրավաբաններ և քոլեջների ղեկավարներ:

Ակնհայտ է, որ չնայած ընդհանուր առմամբ կանանց տնտեսական ավելի վատ վիճակին, ԱԳ երկրներում չկա քաղաքական պաշտոններ զբաղեցնելու ունակություն ունեցող, հմուտ և բանիմաց կանանց պակաս:

Ուսումնասիրության ժամանակ հավաքված բավականաչափ փաստեր կան, որոնք վկայում են, որ կանանց՝ որպես քաղաքական գործիչների, նկատմամբ վերաբերմունքը փոխվում է, և հատկապես արագ է փոխվում ավելի երիտասարդ ընտրողների շրջանում: ԱԺԻ կողմից Ուկրաինայում<sup>64</sup> անցկացված հետազոտությունը ցույց տվեց, որ ընտրողներին առավել հետաքրքրում է թեկնածուի գիտելիքների և հմտությունների պաշարն ու քաղաքական պատկանելությունը, քան նրանց սեռը:

Այս առումով հանրությունը մեկ քայլ առաջ է քաղաքական կուսակցություններից և կուսակցությունների ներսում թեկնածուներին ընտրող անձանցից:

Ուսումնասիրության ժամանակ դիտարկված քաղաքական կուսակցություններից միայն երեքն ունեն կին ղեկավարներ, և միայն յոթը՝ ղեկավարների կին տեղակալներ: Բարձրագույն գործադիր մարմիններում կանանց տոկոսային գործակիցը տատանվում է 40%-ի (Ադրբեջանի մի կուսակցությունում) և 5-10%-ի (Հայաստան) միջակայքում:

Ուսումնասիրության ժամանակ դիտարկված կուսակցությունների մեծ մասն ունեին կանանց թևեր կամ կազմակերպություններ, բայց դա արտացոլված չէր կուսակցությունների քաղաքական ծրագրերում: Հայաստանում, Վրաստանում, Բելառուսում և Ուկրաինայում ուսումնասիրության ժամանակ դիտարկվող կուսակցություններից ոչ մեկը վերջին ընտրությունների համար մշակված իրենց քաղաքական ծրագրերում կանանց վերաբերյալ հատուկ քաղաքականություն չէր ներառել, ինչպես օրինակ՝ կանանց ներկայացվածության կամ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության առումով:

Սա լրացնում է այն տեսակետը, որ կանանց խնդիրները անկարևոր են, և որ հենց իրենք՝ կանայք, քաղաքականության մեջ տեղ չունեն:

Աստիճանաբար քաղաքական կուսակցությունները ստիպված են լինելու դեպի իրենց գրավելու ավելի անկախ մտածող երիտասարդների, այդ թվում նաև՝ երիտասարդ կին ընտրողների՝ նրանց քվեները ձեռք բերելու նպատակով, և սա կարող է փոփոխության համար խթան հանդիսանալ:

Ուսումնասիրության շրջանակում հետազոտվել են նաև ԱԳ երկրների ընտրակարգերը և փորձ է արվել պարզելու, թե որքանով են դրանք նպաստում կամ խոչընդոտում կանանց քաղաքական ներկայացվածությանը: Թեև միայն ընտրակարգով հնարավոր չէ ապահովել անհրաժեշտ փոփոխությունը, այնուամենայնիվ, հետազոտողների և

64. Միավորված ազգերի կազմակերպության Չարգացման ծրագիր և Ազգային ժողովրդավարական ինստիտուտ (2011թ.), «Կանանց հզորացում հանուն ավելի զորեղ քաղաքական կուսակցությունների», ՄԱԶԾ, և ԱԺԻ, Նյու Յորք:

հարցազրույցներին մասնակցածների կարծիքով համամասնական ներկայացուցչական ընտրակարգը կանանց համար ավելի բարենպաստ է: ՀԸ-ն ավելի արդյունավետ է, երբ այն կիրառվում է այլ միջոցների, օրինակ՝ քվոտաների և/կամ կառուցողական գործողությունների հետ համադրությամբ:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ այն երկրներում, օրինակ՝ Հայաստանում և Ուկրաինայում, որտեղ օրենսդիր մարմնի ընտրությունների ժամանակ կիրառվել է քվոտա, կին թեկնածուների և ընտրված ներկայուցուիչների թվի քիչ ան է արձանագրվել: Այնուամենայնիվ, Հայաստանում, ուսումնասիրության մեջ ներառված միակ երկրում, որտեղ օրենսդիր մարմնի ընտրությունների համար օրենսդրությամբ սահմանված է քվոտա, համաձայն որի կանայք պետք է ընդգրկվեն թեկնածուների ցուցակներում, փորձը ցույց է տվել, որ ընտրված կանայք հրաժարվում են մանդատից հօգուտ տղամարդկանց կամ ցուցակի հաստատումից կամ ընտրություններից հետո. այսպիսի գործելակերպը ժխտում է կիրառվող միջոցի բուն նպատակը:

2015թ. Ուկրաինայում անցկացված տեղական ընտրությունները, որի ժամանակ ընդունվել էր համընդհանուր կերպով չկիրառված 30% քվոտայի պահանջը, ցույց տվեցին օրենսդրական դրույթի արդյունավետ կիրակման կարևորությունը և կանանց համար ընտրացուցակներում հաղթող դիրք ամրագրելու վերաբերյալ դրույթ սահմանելու անհրաժեշտությունը:

Վրաստանում կամավոր կառուցողական գործողությունը, որն արտահայտվում էր ընտրացուցակում կանանց համամասնությունն ավելացրած քաղաքական կուսակցություններին լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելով, նույնպես արդյունավետ չէր ընտրված կին ներկայացուցիչների թվի ավելացման առումով: Դրա պատճառն այն էր, որ այս միջոցը կիրառել էին միայն համեմատաբար փոքր կուսակցությունները, որոնց խորհրդարան անցնելու հավանականությունը ցածր էր:

Ամփոփելով նշենք, որ քվոտաներն անհրաժեշտ է ամրագրել օրենսդրությամբ՝ հստակ սահմանելով, որ ընտրացուցակներում կանայք պետք է զբաղեցնեն անցողիկ (հաղթող) տեղեր, իսկ այս դրույթները պետք է պատշաճորեն կիրառվեն: Այն դեպքում, երբ կինը հրաժարվում է մանդատից՝ ընտրվելուց հետո, կամ ցուցակում զբաղեցրած իր դիրքից՝ ընտրացուցակի հաստատվելուց հետո, նրան պետք է փոխարինի մեկ այլ կին թեկնածու:

Ֆինանսական պարզևատրումները պետք է հասանելի լինեն բոլոր կուսակցություններին, կամավորության դիմաց վճարվելու փոխարեն, անհրաժեշտ է նաև հստակ սահմանել, որ լրացուցիչ պետական ֆինանսավորում կտրամադրվի ընտրություններին ավելի մեծ թվով կանանց թեկնածուներին առաջադրելը խրախուսելուն ուղղված միջոցների և նրանց ընտրարշավի վրա ծախսելու նպատակով:

Բացի մշակութային կարծրատիպերից և նախապաշարմունքից հարցվածների կողմից նշված երկրորդ՝ ամենակարևոր խոչընդոտը,

որն արգելափակում է կանանց համար քաղաքական գործառույթների հասանելիությունը, ֆինանսական ռեսուրսների սղությունն է: Որպես թեկնածու ընտրվելու համար անհրաժեշտ է վճարել որոշակի գումար, որին գումարվում է նաև քաղաքական կուսակցության ներսում ճանաչվելու նպատակով հանդիպումներին և համաժողովներին հաճախելու համար անհրաժեշտ ծախսերը: Սակայն ամենամեծ խնդիրը, ըստ հարցված կանանց, հենց ընտրարշավի համար անհրաժեշտ գումարն է: Թեև կուսակցություններն, ընդհանուր առմամբ, որոշ չափով ապահովում են հրապարակայնության համար անհրաժեշտ նյութերով և թերթիկներով, սակայն կին թեկնածուները հիմնականում ստիպված են այդ ռեսուրսներն ապահովել՝ ներդնելով սեփական միջոցներից: Սա շատ ավելի մեծ խնդիր է անկախ թեկնածուների համար, որոնք որոշ դեպքերում իրենց թեկնածությունն առաջադրելու նպատակով ստիպված են լինում ընտրագրավի համար գումար հայթայթել:

Քանի որ կանայք ֆինանսապես պակաս նպաստավոր վիճակում են, նրանց համար ֆինանսական ռեսուրսները պակաս հասանելի են, քան տղամարդկանց, ուստի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով նրանք չեն կարողանում իրացնել ընտրովի պաշտոն զբաղեցնելու իրենց իրավունքը:

Ըստ ամենայնի, կուսակցության ներսում ֆինանսավորումն ավելի հաճախ տրամադրվում է այն անձանց, որոնց հաղթելու հավանականությունն ավելի մեծ է, ինչը վերահաստատում է գործող կարգը:

Ուսումնասիրության ժամանակ կանանց առաջադրումը խրախուսելու համար քվոտաներ և այլ հատուկ միջոցներ ներմուծելու դեմ բերված փաստարկներից մեկն այն էր, որ օրենսդրությամբ թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք իրենց թեկնածությունը առաջադրելու և ընտրվելու հավասար իրավունքներ ունեն: Այնուամենայնիվ, «գենդերային տեսանկյունից չեզոք» օրենսդրությունը չի հասցեագրում գենդերային անհավասարության խնդիրը և անտեսում է ներկայումս քաղաքական կյանքում մասնակցելու կանանց հնարավորությունների բացահայտ անհավասարությունը: Այս անհավասարության խնդիրը կարելի է լուծել միայն այնպիսի ժամանակավոր հատուկ միջոցներ ընդունելու միջոցով, ինչպիսիք են՝ արդյունավետ քվոտաներն ու կառուցողական գործողությունները:

Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ անհավասարության խնդրի լուծումը նկատելի ազդեցություն կունենա այն տղամարդկանց թվի վրա, որոնք ներկայումս ընտրովի մարմիններում մանդատներ ունեն, և որ հենց այդ մարմիններն են ներկայացնելու փոփոխություն կատարելու մասին նոր օրենսդրությունը:

Այնուամենայնիվ, ընտրողների փոփոխվող տեսակետները և ժողովրդավարական լեգիտիմության պահանջը հզոր խթան են կանանց և տղամարդկանց առավել հավասարակշիռ քաղաքական ներկայացվածության մասով փոփոխություն կատարելու գործում, և այս փոփոխությունը իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հստակ գործողություններ:



## Գլուխ 5.

# Առաջարկություններ

### ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ

#### Հայաստան

Անհրաժեշտ է դիտարկել այնպիսի միջոցների ներկայացումը, որոնցով կարգելվեն կուսակցական ընտրացուցակներում կանանց համար նախատեսված քվոտայի ազդեցությունը չեզոքացնող գործելակերպերը, երբ կանայք հրաժարվում են թեկնածությունից ցուցակը հաստատվելուց կամ ընտրություններից հետո, և նրանց փոխարինում են տղամարդիկ: Օրինակ, կարելի է օրենսդրորեն սահմանել, որ հրաժարվող անդամին պետք է փոխարինի կուսակցական ընտրացուցակում հաջորդ տեղը գրավող թերներկայացված սեռի ներկայացուցիչը:

#### Ադրբեջան

Անհրաժեշտ է դիտարկել կառուցողական գործողությունների ներմուծումը, օրինակ՝ կյուբական խթանների ներմուծման հարցը՝ որպեսզի կուսակցությունները կանանց ցուցակագրեն հաղթող տեղերում:

#### Բելառուս

Պետությունը պետք է դիտարկի կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ների հետ համագործակցելու հարցը՝ գենդերային հավասարության քաղաքականության պահանջների պահպանումը ապահովելու նպատակով:

#### Վրաստան

Անհրաժեշտ է ապահովել, որ կյուբական այն խթանները, որոնք վճարվում են քաղաքական կուսակցություններին կուսակցական ընտրացուցակներում կանանց ներառելու համար, դրանք պետք է կի-

րառվեն կանանց որպես թեկնածու ընտրելու, նրանց քարոզարշավի և առաջին անգամ ընտրվելու ժամանակ աջակցություն ցուցաբերելու նպատակներով: Ֆինանսական միջոցների հատկացումը պետք է կախված լինի այն բանից, թե որքանով են այդ գործողությունները կատարվում:

Կին թեկնածուներին խրախուսելու և ընտրված կանանց թվի ավելացմանն ուղղված ֆինանսական խթանների արդյունավետությունը պետք է վերահսկվի, ինչպես նաև վերջիններիս ոչ արդյունավետ լինելու դեպքում, պետք է դիտարկվի այլ խթանների կիրառումը:

## **Մոլդովա**

Անհրաժեշտ է ապահովել, որ վերջերս ընդունված կանանց համար 40% քվոտա սահմանող օրենքը լիովին կիրառվի՝ ավելացնելով պահանջ, որ կանայք ներկայացվեն կուսակցական ընտրացուցակների հաղթող տեղերում, և որ այդ օրենքը կիրարկվի արդյունավետ կերպով:

## **Ուկրաինա**

Անհրաժեշտ է ապահովել, որ կուսակցական ընտրացուցակներում 30% քվոտան տեղական ինքնակառավարման ընտրությունների ժամանակ պատշաճորեն կիրարկվի՝ այդ պահանջին չհամապատասխանող ցուցակները չգրանցելու միջոցով: Անհրաժեշտ է բարձրացնել օրենքի արդյունավետությունը՝ ներմուծելով պահանջ, որ կանայք ընտրացուցակներում նշվեն հաղթող տեղերում:

Անհրաժեշտ է ապահովել, որ 16 տարին չլրացած երեխաները կարողանան մուտք գործել խորհրդարանի շենք, որտեղ պետք է նախատեսել ծնողների և երեխայի համար սենյակ:

## **Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա**

Օրենսդիր մարմինների համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ պետք է դիտարկել իրավական քվոտաների ներմուծման հարցը:

## **ԴԻՏԱՐԿՎՈՂ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

### **Քաղաքական կուսակցությունները**

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ավելի մեծ թվով կանանց խրախուսելու և աջակցելու ուղղությամբ՝ ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրելու և ձգտելու հաղթանակի: Այդպիսի միջոցառումների թվում են՝

- ▶ կուսակցական ընտրացուցակում թեկնածուներին ընտրելու թափանցիկ չափանիշներ սահմանելը, որը չպետք է պայմա-

նավորված լինի կուսակցությանը կատարած ֆինանսական ներդրումով,

- ▶ կին թեկնածուներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը նպատակակետ դարձնելը,
- ▶ կանանց թեկնածությունը առաջադրելուն քաջալերելուն թյուններից առնվազն երկու տարի առաջ սկսելը (Մոլորվայում աջակցող գործելակերպի օրինակը),
- ▶ ուսակցությունների կին անդամների և կուսակցությունների ներսում կին թեկնածուների համար կարողությունների զարգացման ռազմավարություն մշակելը,
- ▶ ընտրվելուց հետո կանանց մենթորություն իրականացնելը և նրանց աջակցելը,
- ▶ կուսակցության ներսում կանանց թիվը ղեկավար պաշտոններում ավելացնելուն ուղղված միջոցներ ձեռնարկելը,
- ▶ կին թեկնածուների և ընտրված կանանց տեսանելիությունը լրատվամիջոցներում ավելացնելը,
- ▶ կուսակցության կողմից հանրային գործունեություն իրականացնելիս հանդիպումների և կլոր սեղանների ժամանակ գեներային հավասարակշռություն ապահովելը,
- ▶ կուսակցության կին անդամների և ՀԿ-ների հետ խորհրդակցությունների արդյունքում կուսակցության ծրագրերում և հրովարտակներում կանանց հարցերով քաղաքականություն ընդունելը և այս ամենի մասին տեղեկատվությունը լայնորեն տարածելը,
- ▶ կուսակցության ներսում կանանց ցանցերն ու կազմակերպությունները հզորացնելը և պայմաններ ու հնարավորություններ ստեղծելը՝ կուսակցության օրակարգերում և քաղաքականության մեջ կանանց հարցերի քննարկումը ապահովելու համար,
- ▶ ապահովելը, որ կուսակցական կազմակերպությունների բոլոր մակարդակներում, մասնավորապես՝ տեղական կազմակերպությունները լինեն կանանց ընտրելու և ընտրություններում նրանց հաղթանակին ուղղված քաղաքականության մասին իրազեկ և իրականացնեն դրանք,
- ▶ թեկնածուների ընտրության ժողովներում գեներային հավասարակշռության հասնելը նպատակակետ դարձնելը,
- ▶ կանանց մասին կարծրատիպային տեսակետներին մարտահրավեր նետելը և կուսակցության առաջնորդների հրապարակային ելույթների միջոցով կանանց հուզող հարցերը բարձրացնելը,
- ▶ կուսակցության անդամների վարքագծի կանոնների մասին չափանիշներ ներմուծելը և կիրառելը՝ կապված այն հայտարարությունների և գործողությունների հետ, որոնք նսեմացնում են կին թեկնածուներին և ընտրված կին անդամներին:



## Կառավարություններ և իշխող կուսակցություններ

Անհրաժեշտ է օժանդակել կանանց քաղաքական ներկայացվածությանը հետևյալ կերպ.

- ▶ Ներմուծել քվոտաներ պետական հանձնաժողովների կին նախագահների և տեղակալների համար:
- ▶ Նախատեսել օրենսդրական այնպիսի դրույթների ընդունում, որը դրական ազդեցություն կունենա կանանց քաղաքական ներկայացվածության վրա, այդ թվում՝ ձեռնարկել միջոցներ, որոնք կհասցեագրեն կանանց կյանքի սոցիալական և տնտեսական կողմերը, ինչպես նաև ներմուծել օրենքով սահմանված քվոտաներ և կառուցողական գործողություններ, որոնք կապահովեն, որ աջակցությունը՝ ներառյալ, ֆինանսական աջակցությունը լինի ուղղված կանանց:
- ▶ Վերլուծել «գենդերային տեսանկյունից չեզոք» օրենսդրությունը՝ գնահատելու համար կանանց և տղամարդկանց վրա դրա տարբեր ազդեցությունները և ձեռնարկելու միջոցներ բացասական հետևանքները մեղմացնելու համար: Օրինակ՝ կարելի է ներմուծել ժամանակավոր միջոցներ ընտրովի մարմիններում կանանց թերներկայացվածության խնդիրը լուծելու համար:
- ▶ Ապահովել, որ կանանց հիմնախնդիրները կազմեն օրենսդրական ծրագրի մաս, և աջակցել նման հիմնախնդիրների լուծմանը՝ նախատեսելով հավասար հնարավորությունների (կանանց և տղամարդկանց իրավահավասարության) աջակցման խմբեր հիմնում (Ուկրաինայի օրինակը):
- ▶ Աջակցել կանանց և տղամարդկանց իրավահավասարության գործողությունների ծրագրերի իրականացմանը՝ ապահովելով, որ տրամադրվեն բավարար ռեսուրսներ, և մշտադիտարկել, գնահատել ձեռնարկված միջոցների ազդեցությունը և դրանց հաջողությունը և հանդես գալ դրանց մասին հրապարակային զեկույցներով:
- ▶ Խրախուսել տեղական և շրջանային կառավարման օղակները ներկայացնող կազմակերպություններին, որպեսզի վերջիններս անցկացնեն վերապատրաստում և աջակցեն վարչական մարմիններում ընտրված կին թեկնածուներին:
- ▶ Ապահովել, որ ազգային խորհրդարաններն ու տեղական և շրջանային կառավարման մարմինները խորհրդակցեն և ներմուծեն կանանց աջակցող աշխատանքային մեթոդներ, այդ թվում՝ ձեռնարկեն այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան իրենց խնամքի տակ անձինք ունեցող կանանց ունենալ լիարժեք մասնակցություն:
- ▶ Ներմուծել և կիրառել ընտրված անդամների վարքագծի կանոններ՝ կանանց նկատմամբ հարգալից վերբերմունք ապահովելու համար:
- ▶ Ապահովել, որ վիճակագրական գրասենյակները ավաքեն

վստահելի վիճակագրական տվյալներ՝ ՆՏԱ-ների, էթնիկ և կրոնական փոքրամասնությունների և արտերկրում ապրող քաղաքացիների մասին:

- ▶ Ապահովել, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը օրենսդիր, շրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրված թեկնածուներին, ինչպես նաև ընտրություններում հաղթած անձանց տրամադրի գեղդերային տարանջատմամբ վստահելի վիճակագրություն:
- ▶ Աջակցություն ցուցաբերել ընտրված պաշտոններ զբաղեցնող կանանց ցանցերին և կարողությունների զարգացման նախաձեռնություններին, մասնավորապես, եթե դրանք ուղղված են կանանց ինդիքների լուծմանը:
- ▶ Ապահովել, որ ազգային և տեղական կառավարման մարմինները, ինչպես նաև վարչական մարմինները հավաքեն ընտրովի պաշտոններ զբաղեցնող կանանց վերաբերյալ գեղդերային տարանջատմամբ վստահելի տվյալներ:
- ▶ Մշակել իրազեկության բարձրացման քարոզարշավներ ընտրված պաշտոնյաների համար՝ կանանց և տղամանց քաղաքական ներկայացվածության կարևորության շուրջ:

## Շրջանակից դուրս

Միլա Տիշանան (Կիև) լուսանկարչությունն օգտագործում է հետաքրքրասեր հետազոտողի տեսանկյունից՝ հասարակությունների կառուցվածքի շարժիչ ուժերը հասկանալու համար: Նրա՝ այստեղ վերահրատարակված «Շրջանակից դուրս» լուսանկարների շարքն արտացոլում է Արևելյան գործընկերության երկրներում ակտիվ կանանց իրականությունը, նրանց երազանքներն ու նրանց առջև ծառայող մարտահրավերները: Պատկերված կանայք այլոց համար լավ օրինակներ են: Նրանք կենդանի ապացույց են այն բանի, որ արժի դիմակայել ընտանեկան բռնությանը և վաղ ամուսնությանը և համայնքապետի կամ ավագանու անդամի պաշտոնում պայքարել իրենց համայնքներում կյանքն ավելի բարեկեցիկ դարձնելու համար: Այս աշխատանքն իրականացվել է՝ «Համայնքների զարգացումը Հարավային Կովկասում» (GIZ) ծրագրի շնորհիվ:





Նունե Ավագյան,  
Գոմք համայնքի ավագանու անդամ,  
Հայաստան

«Կանայք կարող են հոգ տանել մանրուքների մասին, այնպիսի բաների, որոնք անկարևոր են թվում: Բայց ամբողջը կազմված է փոքր մասնիկներից»:



Թամար Դալաբիշվիլի,  
Թեթրիծղարո համայնքի  
ավագանու անդամ, Վրաստան





Շալալա Կաֆարովա  
2. Տազին համայնքի ավագանու անդամ



Թամար Դալաքիշվիլի,  
Թեթրիծղարո համայնքի ավագանու անդամ

«Ես գյուղացիների հետ միշտ  
քննարկելու բան ունեմ:  
Եվ քանի որ մասնակցել եմ  
ԴԱՅԱԶ մեկնորության ծրագրին,  
ես նաև կարող եմ ծրագրի  
հանդիպումների ընթացքում այլ  
մարդկանցից ձեռք բերված նոր  
տեղեկություններ հաղորդել»:



Մալահաթ Մամմադովա  
Կորգոյոզ համայնքի ղեկավար,  
Ադրբեջան



Լյուդմիլա Խալիլովա,  
Ղարաչուխուրի համայնքային խորհրդի անդամ,  
«Կանայք հանուն համայնքային զարգացման»  
ՀԿ-ի նախագահ  
և ԴԱՅԱԲ ցանցի համակարգող,  
Ադրբեջան



«Տատիկս ինձ միշտ  
ասում էր.  
«Սենյակն ունի  
չորս անկյուն,  
և դու կարող ես  
և չիմանալ,  
թե որտեղ է դուռը:  
Եթե քեզ վատ վերաբերվեն  
մի անկյունում,  
գնա մյուս անկյունը»:  
Ես իմ կյանքում այլ  
կանոնների եմ հետևում,  
հիմա ես փորձում եմ  
օգնել իմ համայնքի  
կանանց գտնելու դուռը»:





Մալահաթ Ալիևա  
Մասազիր համայնքի ավագանու անդամ,  
Ադրբեջան



Էվա Լոմտաձե  
Լազոդեխի համայնքային  
խորհրդի կոմիտեի ղեկավար

«Ես լավ գիտեմ օրենքները,  
այդ իսկ պատճառով կարողանում եմ  
լուծել շատ համընդհանուր խնդիրներ:  
Հատուկ հպարտությամբ եմ  
վերաբերվում այն փաստին,  
որ կարողացել եմ տներ կառուցել  
շրջանի 150 ընտանիքի համար:  
Թվում էր, թե դա անհնար է,  
բայց առաջնորդվելով օրենքով,  
ես դա իրականություն դարձրի»:



Նունե Ավագյան,  
Գոմբ համայնքի ավագանու անդամ

«Երբ առաջին անգամ ընտրվեցի  
համայնքի ղեկավարի պաշտոնում,  
առանձնակի դժվարություններ ունեի  
տղամարդկանց գերակայությամբ  
թիմում աշխատելու հարցում:  
Բայց ժամանակի ընթացքում հասկացա,  
որ նրանցից ոչ մեկը չի կարող  
խոչընդոտել իմ աշխատանքին»:



Նատելա Գոգոլաձե  
Բորժոմի համայնքային խորհրդի անդամ,  
Վրաստան





Մալահաթ Մամմադովա,  
Կորգյոզ համայնքի ղեկավար, Ադրբեջան



Լյուդմիլա Խալիլովա,  
Ղարաչուխուրի համայնքային խորհրդի անդամ,  
«Կանայք հանուն համայնքային զարգացման» ՀԿ-ի  
նախագահ և ԴԱՅԱԶ ցանցի համակարգող, Ադրբեջան



## Հավելված 1.

# Հարցաթերթիկ համատեքստային նկարագրական պատկերը ստանալու նպատակով՝ ըստ ԱԳ առանձին երկրի

Հարցվողների տվյալները	
Լրացվել է՝	Տիկին <input type="checkbox"/> Պարոն <input type="checkbox"/>
Անունը՝	
Ազգանունը՝	
Երկիրը՝	

### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության և կատարված աշխատանքի նկարագրությունը (նկարագրական մաս): Առավելագույնը 300 բառ



**Ձեռք բերված արդյունքները/ստացված արդյունքները/  
հետազոտական արդյունքները և արձանագրված  
դժվարությունները,**

օրինակ՝ տվյալների բացակայությունը և այլն  
(սկարագրական մաս)՝ Առավելագույնը 300 բառ

Ձեռք բերված արդյունքները՝

Ստացված արդյունքները՝

Հետազոտական արդյունքները՝

Արձանագրված դժվարությունները՝

**Կիրառված մեթոդաբանությունը** (սկարագրական մաս).  
առավելագույնը 300 բառ

Հանդիպումների թիվը .....

Անձինք, պաշտոնները, հաստատության անվանումը՝

Օգտագործված հիմնական աղբյուրները՝

Այլ (խնդրում ենք նշել)՝

## II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Տեղեկություններ (տվյալներ) տնտեսական վիճակի մասին՝

ՀՆԱ-ն՝ մեկ շնչի հաշվով ..... / աղբյուր՝

Աղքատության ցուցանիշը՝ կին ..... , տղամարդ ..... / աղբյուր՝

Եկամուտը՝ կին ..... , տղամարդ ..... / աղբյուր՝

Եկամտի չափաբաժինը՝ կին ..... , տղամարդ ..... / աղբյուր՝

Վաստակած գումարը՝ կին ..... , տղամարդ ..... / աղբյուր՝

Գործազրկության ցուցանիշը ըստ սեռի՝ կին ..... ,  
տղամարդ ..... / աղբյուր՝

### Տեղեկություններ (տվյալներ) սոցիալական վիճակի մասին՝

Բարձրագույն կրթություն ունեցողների հարաբերակցությունը՝

Կին՝ \_\_\_\_\_ տղամարդ՝ \_\_\_\_\_ / աղբյուր՝

Բարձրագույն/կենտրոնական կառավարման մարմիններում  
կանանց հարաբերակցությունը՝

Կին՝ \_\_\_\_\_ տղամարդ՝ \_\_\_\_\_ / աղբյուր՝

ՆՏԱ-ներ՝ կին՝ \_\_\_\_\_ տղամարդ՝ \_\_\_\_\_ / աղբյուր՝

Փոքրամասնություններ՝ կին՝ \_\_\_\_\_ տղամարդ՝ \_\_\_\_\_ /  
աղբյուր՝

Նվազագույն պայմաններից զուրկ տնտեսությունները՝ \_\_\_\_\_ /  
աղբյուր՝

Մեկ տնտեսության մեջ ապրող երեխաները՝ \_\_\_\_\_ / աղբյուր՝

Կանանց դեմ բռնությունների դեպքերը. խնդրում ենք նշել՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_ /աղբյուր՝

**Քաղաքական իրավիճակի մասին տեղեկություններ** (այդ թվում՝ տեղեկություններ պատերազմների/հակամարտությունների, քաղաքական կայունության/անկայունության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հետ կապված իրավիճակի, էթնիկ փոքրամասնությունների մասնակցության/ընտրողների տարիքի, կանանց անկախ շարժումների/ՅԿ-ների, քվոտային համակարգի նկատմամբ վերաբերմունքի մասին): Առավելագույնը՝ 400 բառ:

**III. ՀԱՎԱՍԱՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ՆՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ)**

Հարցը	Այո/Ոչ	Եթե այո, ապա իրավական դրույթը/օրենքի վերնագիրը	Ընդունման ամսաթիվը
Արդյո՞ք իրավական շրջանակը երաշխավորում է կանանց համար հավասար իրավունքները:			
Արդյո՞ք այն ներառում է քաղաքական պաշտոնի համար թեկնածություն առաջադրելու կամ նման պաշտոն զբաղեցնելու առանձին իրավունք՝ կանանց համար:			
Իրավական շրջանակում կա՞ն այնպիսի դրույթներ, որոնք կանանց դնում են ոչ շահեկան դրության մեջ:			



1.1	Բաց ընտրացուցակի դեպքում՝ ավելի մեծ թե՛ փոքր թվով կանայք են ընտրվել թեկնածուներ:	Ավելի մեծ թվով <input type="checkbox"/> Խնդրում ենք բացատրել:	Ավելի փոքր թվով <input type="checkbox"/> Խնդրում ենք բացատրել:
1.2	Օրենքը պահանջում է, որ կանայք լինեն թեկնածուների ընտրացուցակի հաղթող դիրքերում (առաջին տասնյակի մեջ):	Այո <input type="checkbox"/>	Ոչ <input type="checkbox"/>
1.3	Մեկ մանդատը քանի՞ ընտրող պետք է ունենա (ընտրողների թվաքանակը):		
